

Երևանի Մ. Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարան

## **ՀԱՅԿ ՀԱՄԼԵՏԻ ԱՂԱՄԱԼՅԱՆ**

**ՀԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻ ԳՈՆԱՐԹՐՈՒԹԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ  
ԿԱՆԿԱՐԳԵԼՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱՅԻՆ ՄԱՀԻԿԻ  
ԱՐԹՐՈՍԿՈՊԻԿ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ**

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԺԴ.00.13 - «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա»**

**մասնագիտությամբ բժշկական գիտությունների**

**թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

**Գիտական ղեկավար**

**բ. գ.դ.պրոֆ. Ա.Վ. Այվազյան**

**Երևան 2018**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կրճատումների ցանկը .....	3
Ներածություն .....	4
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	10
1.1. Ծնկահողի մահիկների անատոմոֆունկցիոնալ առանձնահատկությունները .....	10
1.2 Մահիկների վնասվածքների դասակարգումը.....	11
1.3 Մահիկների վնասվածքների բուժման մոտեցումները.. ..	15
1.4 Երկրորդային գոնարթողոզ (ԳԱ), որպես մահիկների վնասվածքների հետևանք և դրա բուժումը .....	29
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ .....	37
2.1 Հիվանդների ընդհանուր բնութագիրը .....	37
2.2 Հետազոտման եղանակները .....	43
2.3. Բուժման եղանակները .....	50
2.4. Վիճակագրական վերլուծություն .....	52
ԳԼՈՒԽ 3. ՍԵՓԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ .....	54
3.1. Հիվանդների հետազոտման արդյունքները .....	54
3.2. Ծնկահողի միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգումը .....	63
3.3. Միջային մահիկի վնասվածքների վիրահատական բուժումը .....	73
ԳԼՈՒԽ 4. ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ .....	85
4.1. Հիվանդների I խմբի բուժման հեռակա արդյունքները .....	85
4.2. Հիվանդների II ստուգիչ խմբի բուժման արդյունքները .....	89
4.3. Հիվանդների I և II խմբերի բուժման հեռակա արդյունքների համեմատական վերլուծությունը .....	93
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	96
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ .....	112
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ .....	113

## **ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

ՕԱ - Օստեոարթրոզ

ԴՕ - դեֆորմացնող օստեոարթրոզ

ՑԴՖ - Ֆիրկուլյար դիսֆունկցիա

ՎՕԳԿ - Վնասվածքաբանության և Օրթոպեդիայի Գիտական Կենտրոն

ԳԱ - գոնարթրոզ

ՄՌԾ - մագնիսառեզոնանսային հետազոտում

ԳԶՀ - գերձայնային հետազոտություն

ՇՖ - Շրջանաձև ֆունկցիա

ՇԴՖ - Շշրջանաձև դիսֆունկցիա

ԿՆՀ - Կենտրոնական նյարդաին համակարգ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օստեոարթրոզին նվիրված են բազմաթիվ գիտական աշխատանքներ: Դրանցում մանրամասն լուսաբանվում է այդ հիվանդության առաջացման հիմնական պատճառները, ախտահարման զարգացումը, ինչպես նաև բուժման և կանխարգելման մոտեցումները: Չնայած դրան, այն հանդիսանում է հասուն բնակչության հենաշարժական համակարգի առավել տարածված ախտահարումներից մեկը [11,12,18,28,37,47, 61,69]:

Օստեոարթրոզը հիմնականում ախտահարում է ստորին վերջույթների խոշոր հոդերը: Գոնարթրոզի զարգացման ռիսկը 35 տարեկանից բարձր կանաց շրջանում կազմում է 68%, իսկ 45 տարեկանից բարձր տղամարդկանց շրջանում՝ 76,8% [1,82,85,90]:

Երկար տարիներ օստեոարթրոզի զարգացման պատճառը համարում էին ծերացման գործընթացները: Սակայն այժմ ենթադրում են, որ այդ ախտաբանության պաթոգենեզը կազմված է 2 բաղկացուցիչից՝ ախտաբանական սթրես, այսինքն գերծանրաբեռնվածություն հոդի վրա վնասվածքների կամ դիսպլազիայի արդյունքում: Հոդաճառի վաղաժամ մաշվածության պատճառ կարող է լինել նաև սովորական ծանրաբեռնումների նկատմամբ աճարի տուերանտության իշեցումը նյութափոխանակության խանգարումների հետևանքով [1,92,99,105,125]:

Գոնարթրոզի առաջացման հաստատված պատճառներից է նաև գենետիկ գործոնների դերը, որոնց շարքին են դասվում հոդաշապկի, ուսկրերի և ջլակապանային համակարգի բնածին անոմալիաները [1,18,28,32,126]:

Գոնարթրոզի զարգացման կարևոր գործոն է հանդիսանում ծնկահոդի վնասվածքը: Հեղինակները նշում են, որ գոնարթրոզի առաջացման գործընթացում, եծ դեր ունի երիտասարդ տարիքում կրած վնասվածքը: Վերջինիս դեպքում ծնկահոդում դեգեներատիվ և դիստրոֆիկ փոփոխությունների ռիսկը աճում է 5,17 անգամ [1, 105,125,126]:

Գոնարթրոզի առաջացումը կարող է կապված լինել նաև շարունակական ծանրաբեռնման հետ, եթե տեղի են ունենում հոդի միկրովնասվածքներ երկարատև ժամա-

նակահատվածի ընթացքում: Այս գործընթացը դիտվում է հիմնականում սպորտսմենների կամ սպորտով ոչ պրոֆեսիոնալ զբաղվող անձանց շրջանում [92,99,105,125]: Շփման ուժերի անհամաչափ բաշխման արդյունքում զարգանում է հոդաճառի դեգեներացիա և դիստրոֆիա [1,28,127]:

Վերջին տասնամյակներում նկատվում են գոնարթրոզի երիտասարդացման միտումներ: Դրանք հիմնականում արդյունք են այն փաստի, որ երիտասարդ անձիք առավել հաճախ են զբաղվում տարբեր սպորտաձևներով: Մեծանում է ծնկահորի վնասվածքների, հատկապես մահիկների վնասվածքների տեսակարար կշիռը [17,19,32,48, 121,123]: Ըստ տարբեր հեղինակների՝ գոնարթրոզի հաճախականությունը ֆուտբոլիստների շրջանում կազմում է 16-29%, վագորդների շրջանում՝ 14-20% և ծանրամարտիկների շրջանում մոտ 31% [21,125,126]:

Մի շարք հեղինակների կարծիքով հասուն բնակչության հենաշարժական ախտահարումների արդյունքում հաշմանդամության հիմնական պատճառ է հանդիսանում ծնկահորի ռեֆորմացնող արթրոզը [11,12,32,37,47]:

Վերջինս հիմնականում առաջանում է մահիկների վնասվածքների ժամանակ՝ ինչպես չբուժված կարգավիճակում, այնպես էլ սխալ կամ թերի ընտրված բուժական մոտեցումների դեպքում:

Վերջին 50 տարիների ընթացքում մոտեցումները մահիկների դերի նկատմամբ փոխվել են՝ ֆունկցիոնալ անպետք կառուցներից մինչև կենսական կարևորագույն կառուցների, որոնք մասնակցում են ծնկահորի աշխատանքին; Դրա հետ մեկտեղ զարգացում են ապրել նաև մահիկների վնասվածքների բուժման մոտեցումները:

Տարբերում են մահիկների վնասվածքների բուժման բաց (արթրոտոմիա) և փակ արթրոսկոպիկ եղանակներ: Բաց վիրահատական եղանակները ներկայում գրեթե չեն կիրառվում, քանի որ ապացուցվել է դրանց ցածր արդյունավետությունը և բարդությունների բարձր տոկոսը:

Մահիկների վրա փակ միջամտություններ կատարելու նպատակով ներկայումս օգտագործում են արթրոսկոպիկ տարբեր եղանակներ: 20-րդ դարի 20-ական թվականներից սկսած ծնկահորի վրա կատարվել են տարբեր արթրոկոպիկ միջամտություններ: Սակայն դրանք փորձարարական էին և կրում էին եզակի բնույթ: Բացի այդ

օգտագործվում էին գործիքներ, որոնք ստեղծված էին այլ նպատակների համար (լապարուկույթ, ցիստուկույթ):

1931թ. ճապոնացի գիտնական Տակագին առաջարկեց առաջին արթրոսկոպը: Հետագայում նրա աշակերտները, մասնավորապես M.Vatanabey շարունակեցին զարգացնել արթրոսկոպիան՝ ստեղծելով նոր ժամանակակից սարքավորումներ [4;28]: Դրանց զարգացման հետ միասին սկսեցին կատարելագործվել նաև մահիկների վրա կատարվող միջամտությունների տեսակները: Սկզբնական շրջանում իրագործվում էին լրիվ մահիկահատումներ [29,31,130]:

Սակայն հետագայում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ միջամտությունից հետո հեռավոր ժամկետներում դիտվում է ծնկահողի դեֆորմացնող արթրոզ: Այսպես, որոշ հեղինակներ կլինիկորեն դրսևորող գոնարթրոզ նշել են 53%, իսկ միայն արթրոզի ռենտգենաբական նշաններ՝ մոտ 40% դեպքերում [32,99,105, 125,126]:

Հաշվի առնելով այս փաստը շատ հեղինակներ ներկայումս աշխատում են հնարավորինս պահպանել մահիկի հյուսվածքը՝ կատարելով մասնակի մահիկահատումներ [38,41,55,68,70,74,75], քանի որ այս վիրահատություններից հետո դիտվում են ավելի բարենպաստ արդյունքներ: Սակայն նոյնիսկ մահիկի հեռացումներից հետո հոդանուի դեգեներատիվ փոփոխություններ այնուամենայնիվ զարգանում են [32,37,47, 69]:

Այսպիսով մահիկահատումների տարբեր տեսակների հեռավոր արդյունքների մասին կարծիքները միանշանակ չեն: Այդ իսկ պատճառով մի շարք օրթոպեդներ սկսեցին իրականացնել մահիկի անոթավորված գոտու վնասվածքների վերականգնում: Սակայն հետագայում պարզվեց, որ հնարավոր է նաև այլ գոտիների վնասվածքների վերականգնում [6,7,8,13,15,28,71,72]: Ներկայումս առաջարկված են մահիկի վերականգնման երեք եղանակներ՝ ներսից դուրս, դրսից ներս, ամբողջովին ներսում [2,3,5,30,42,43, 45,50,58]:

Պետք է նշել, որ վերոհիշյալ եղանակները ունեն իրենց առավելությունները և բացասական կողմերը: Այդ իսկ պատճառով մահիկի վնասվածքների բուժման մոտեցումները շարունակում են մնալ մշտական քննարկումների և հետազոտությունների

առարկա: Միանշանակ կարծիքներ չկան թարմ և հնացած վնասվածքների դեպքում մահիկի վերականգնման տարբեր եղանակների վերաբերյալ: Այնուամենայնիվ հեղինակների մեծ մասը նշում է բարնպաստ արդյունքներ՝ համեմատած մահիկահատումների արդյունքների հետ [4]:

Չնայած մահիկների վերականգնմանը նվիրված բազմաթիվ աշխատանքներին, ԱՄՆ-ում օրինակ վերականգման են ենթարկվում այդ կառուցի վնասվածքների ընդամենը 10%-ը, մնացած դեպքերում կատարվում են տարբեր մահիկահատումներ: Ռուսաստանում և <<-ում մահիկների կարման վիրահատությունները կրում են եզակի բնույթ [1,89,97,124,131,132,133]:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ներկայում չկան մահիկների վնասվածքներով հիվանդների ախտորոշման և բուժման մշակված ալգորիթմներ, վիճելի են բուժական արթրոսկոպիայի, մահիկների վրա կատարվող վիրահատությունների հստակ ցուցումները և հակացուցումները, լուսաբանված չեն նշված վիրահատությունների և ուշ հետվիրահատական շրջանում հնարավոր գոնարթորողի զարգացման միջև եղած կապերը: Նշվածներով և այլ հարցերով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ** է հանդիսանում նվազեցնել հետվիրահատական գոնարթորողի հաճախականությունը միջային մահիկի արթրոսկոպիկ վիրահատություններից հետո՝ մշակելով բուժման տարբերակիչ տակտիկա:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Գրական աղբյուրների քննադատական վերլուծության, հիվանդության պատմությունների արխիվային տվյալների և հիվանդների դինամիկ համակարգային հետազոտության հիման վրա պարզել միջային մահիկի արթրոսկոպիկ վիրահատություններից հետո ԳԱ զարգացման պատճառները և վերջինիս կանխարգելման ճանապարհները:

2. Բնութագրել և ներդնել գործածական շրջանառության մեջ ”մահիկի շրջանաձն ֆունկցիա և դիսֆունկցիա” – ն որպես հասկացություն:
3. Մշակել միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգում, որտեղ հաշվի կառնվի մահիկի «շրջանաձն դիսֆունկցիայի» աստիճանը՝ կախված վնասվածքի տեղակայման սեկտորից, գոտուց, ինչպես նաև վնասվածքի բնույթից:
4. Մշակել միջային մահիկի վնասվածքների արթրոսկոպիկ բուժման տարրերակիչ տակտիկա, ինչպես նաև մահիկի խնայող մասնահատման կամ վերականգնման տարրերակներ:
5. Կատարել միջային մահիկի վնասվածքներով հիվանդների մեր կողմից առաջարկված արթրոսկոպիկ բուժման և համընդհանուր եղանակներով բուժման հեռակա արդյունքների համեմատական վերլուծություն:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸԸ**

- Առաջին անգամ տրվել է ”մահիկի շրջանաձն դիսֆունկցիա” – ն որպես հասկացություն և առաջարկվել է վերջինիս արտահայտվածության աստիճանը գնահատող դասակարգում:
- Մշակվել է միջային մահիկի վնասվածքների եռաչափ տարածական դասակարգում:
  - Մշակվել է միջային մահիկի արթրոսկոպիկ վիրահատությունների կատարման օպտիմալ տարրերակված համակարգ՝ հետվնասվածքային գոնարթողի կանխարգելման նպատակով:
  - Կախված ԳԱ արտահայտվածության աստիճանից մշակվել են կոնսերվատիվ բուժական մոտեցումների սխեմաներ հաշվի առնելով միջային մահիկի արթրոսկոպիկ վիրահատության տեսակը:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Միջային մահիկի շրջանաձև դիսֆունկցիայի ծանրության աստիճանը գնահատող դասակարգումը թույլ է տվել մշակել մահիկի վնասվածքների արթրոսկոպիկ բուժման նոր տարբերակիչ մոտեցումներ, որոնց հիմնական սկզբունքն է հանդիսավել օրգանոպահպանողական վիրահատությունների ստեղծումը և իրականացումը:

Գոնարթողի հնարավոր զարգացումը կանխարգելելու նպատակով մշակվել են մահիկահատման նոր խնայող ձևափոխումներ, ինչպես նաև մահիկի վերականգնման արթրոսկոպիկ տարբերակներ: Վերոհիշյալ համալիր բուժման մոտեցումները լրացվել են մահիկի վնասվածքին և կատարված վիրահատության ձևին համարժեք կոնսերվատիվ և վերականգնողական միջոցառումներով:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱՊԱՀՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԿՈՒՄՆԵՐԸ**

Աշխատանքի նախապաշտպանությունը եղել է ՎՕԳԿ գիտ խոհրդի թիվ 4 նիստում 2017թ-ի հոկտեմբերի 4-ին:

Աշխատանքի հիմնական դրույթները քննարկվել և գեկուցվել են հետևյալ նիստերին և կոնֆերանսներին՝

«ԱՆ ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՆԵՐԻ և ՕՐԹՈՎԵԴՆԵՐԻ ասոցիցացիայի նիստ 2011թ և 2017թ»:

Օրթովեդների Եվրազիական Կոնգրես ք. Մոսկվա, ՌԴ, 2017 թ.

Վնասվածքաբանության և Օրթովեդիայի ամբիոնի նիստ 2012 և 2017թ.

Տպագրվել է 8 գիտական հոդված:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Աշխատանքը ներկայացված է 127 էջի վրա, կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, եզրահանգումներից և գրականության ցանկից: Աշխատանքի մեջ ներառված են 31 նկար, 3 աղյուսակ:

Օգտագործված գրականության ցանկը ներառում է 155 աղյուր, որոնցից 5-ը ռուսական և 150-ը արտասահմանյան հեղինակների:

# ԳԼՈՒԽ I.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 1.1. ԾՆԿԱՀՈԴԻ ՄԱԻԻԿՆԵՐԻ ԱՆԱՏՈՄՈՓՈՒՆԿցիոՆԱԼ Առանձնահատկությունները

Մաիիկները հանդիսանում են կիսալրանածն ֆիբրոզանառային սկավառակներ, որոնք տեղակայված են մեծ ոլոքի և ազդրոսկրի միջև: Նախկինում դրանք համարվում էին ոչ ֆունկցիոնալ, այնուամենայնիվ հետագայում հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ գաղափարն իրականությանը չի համապատասխանում, և դրանք կազմում են ծնկահոդի բարդ կենսամեխանիկայի կարևորագույն մասը [17, 25, 29, 34, 92, 152]:

Մաիիկներն ունեն գնդաձև կառուցվածք, ամեն մաիիկի ծայրամասային հատվածը հաստ է, ուռուցիկ և հարում է հոդաշապիկի ներսային մակերեսին: Հակառակ եզրը, որն ուղղված է դեպի միջկոճային բարձրությունը՝ բարակ է և ազատ: Մաիիկների ազդրային մակերեսները գոգավոր են, իսկ մեծ ոլոքային մակերեսները՝ հարթ [27, 34, 92, 101, 152]:

Մաիիկն ունի երկու եղյուր՝ առաջային, հետին և նրանց կապող մարմին: Միջային մաիիկի առաջային եղյուրը հպվում է ոլոքային հարթակին, միջկոճային բարձրության հատվածում՝ առաջային խաչաձև կապանին հաղիպակաց: Առաջային եղյուրի թելերը եզրակցում են լայնական կապանի հետ, որը միացնում է միջային և դրսային մաիիկների առաջային եղյուրները: Միջային մաիիկի հետին եղյուրը կազում է մեծ ոլոքի հետին միջկոճային փոսությանը՝ դրսային մաիիկի և հետին խաչաձև կապանի կպման տեղերի միջև: Միջային մաիիկի դրսային հատվածը հպվում է հոդաշապիկին իր ամբողջ հաստությամբ, իսկ միջային հատվածում նրան է միանում միջային համակողմային կապանի խորանիստ թելերով: Դրսային մաիիկը ոլոքային հարթակի վրա ավելի մեծ մակերես է զբաղեցնում, քան միջայինը: Ի տարբերություն միջային մաիիկի, դրսայինը ավելի շարժուն է, որով պայմանավորվում է նրա վնասվելու քիչ հավանականությունը՝ համեմատած միջային մաիիկի հետ [25, 27, 101, 106, 152]:

Մաիիկները մոտ 75%-ով կազմված են առաջին տեսակի կոլագենից: Կոլագենային թելերը մաիիկի հյուսվածքի ներսում ունեն միջաձիգ, երկայնակի և միահյուսող /անկանոն/ դասավորություն [25, 27, 34, 152]:

Մահիկներն անշարժ ֆիքսված չեն մեծ ոլոքի վրա: Դրանք ծնկահողի շարժումների ժամանակ ունեն առաջահետին տեղաշարժման հնարավորություն: Միջային մահիկն ավելի ամուր է ֆիքսված, իսկ դրսայինը՝ ավելի շարժուն է: Ըստ մի շարք հեղինակների առաջահետին հարթության մեջ դրսային մահիկը տեղաշարժվում է 9-11, իսկ միջայինը՝ միայն 2-5 մմ [4,25,92]:

Մահիկի ֆիբրոզաճառային հյուսվածքը սնուցվում է երկու աղբյուրներից: Առաջինը և հիմնականը մահիկի հիմի անոթներն են, որոնց տեղակայումը բաժանում է մահիկը 3 մասի՝ լավ անոթավորված կամ կարմիր գոտի, միջին անոթավորված կամ կարմիր-սպիտակ գոտի և չանոթավորված կամ սպիտակ գոտի: Մյուաք ներհողային հեղուկն է, որի դերը մահիկի սնուցման հարցում ավելի սակավ է [123]:

Հիմնական անոթային ցանցը տեղակայված է միջային մահիկի պերիֆերիկ 20%-30% և դրսային մահիկի 10%-25% հատվածներում: Մահիկի ավասկույար գոտին, որը ներառում է հիմնականում ներսային 1/3-ը, սնուցվում է սինովիալ հեղուկի միջոցով: Մահիկի մնացած միջային 1/3-ը ունի որոշակի անոթավորում, սակայն սնուցվում է նույնպես սինովիալ հեղուկով [104,106,123,152]:

Ծնկահողի միջային և դրսային մահիկները կատարում են մի շարք կարևորագույն կենսամեխանիկական ֆունկցիաներ: Դրանց մեջ ուշադրության են արժանի ծանրաբեռնումային և հավասարակշռությունն ապահովող, կայունացնող ֆունկցիաները: Բացի դրանից մահիկները մասնակցում են աճարի հոմեոստազին և ունեն պրարիոցեպտորների դեր [41,136]:

Բազմաթիվ փորձեր նվիրված հոդի կենսամեխանիկային, ցույց են տվել որ մահիկը տարածման ժամանակ կրում է հոդի ծանրաբեռնվածության մոտ 50% և ծալման ժամանակ՝ մոտ 85-90 % [25,27,34]:

## 1.2. Մահիկների վնասվածքների դասակարգումը

Մահիկների պատովածքները դասվում են ծնկահողի առավել հաճախ հանդիպող վնասվածքների շարքին: Դրանց բուժման տարբեր տեսակները և մոտեցումները նկարագրվել են դեռևս 19 -րդ դարում [17,76,79]:

William Hey-ը նկարագրում էր մահիկի վնասվածքը որպես «ծնկահոդի ներքին խառնաշփոթ»: Thomas Annandale-ն իր «Կիսալրուսնածն աճառի հեռացումը որպես ծնկահոդի շարժունակության վերականգնման հիանալի միջոց» աշխատության մեջ խոսում է մահիկահատումների բավարար հեռավոր արդյունքների մասին [17,76]:

Ընդհանուր առմամբ մահիկների վնասվածքները դասակարգվում են հաշվի առնելով դրանց տեղակայումը, տեսակը, ինչպես նաև ներառված հյուսվածքի վիճակը և ամբողջականությունը:

Մահիկների այն վնասվածքները, որոնք առաջանում են մահիկի մեկ հատվածում և մեկ հարթության մեջ դասակարգվում են իրենց ծնի համաձայն՝ հորիզոնական, միջաձիգ կամ երկայնակի վնասվածքներ: Խառը տիպի վնասվածքների ժամանակ վերը նշված տեսակները զուգակցվում են: Մահիկի վնասվածքի տեսակից է կախված ոչ միայն վերականգնման եղանակի ընտրությունը, այլև վիրահատության արդյունավետությունը [20,27,128,137,138,143,144,152]:

Մահիկների եղյուրների վնասվածքները կարող են լինել ինչպես եզակի ազդեցության, այնպես էլ դեգեներացիայի արդյունք: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ մահիկների վնասվածքները հաճախ կարող են բերել մահիկի եքստրովիայի [34,92,101,106,123]:

Մեզ հասանելի գրականության աղբյուրների վերլուծությունը ցույց տվեց, որ մահիկների վնասվածքների դասակարգումների մեծ մասը բնորոշում է ոչ միայն վնասվածքի անատոմիական տեսակը, այլ նաև դրա փոխհարաբերությունը անոթավորման գոտու հետ:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ տարբերակում են վնասվածքի 12 հիմնական ախտաբանական տեսակ՝

- Երկայնակի լրիվ
- Երկայնակի ոչ լրիվ
- լաթածն
- հարհոդաշապկային
- լայնական
- կոմբինացված

- հորիզոնական
- երկակի, եռակի երկայնակի լրիվ
- դեգեներատիվ
- գերշարժուն
- դիսկոիդ [2,3,5]:

D.E Cooper, և համահեղինակները (1991) առաջարկել են դասակարգում, որը հիմնվում է մահիկի վնասվածքի տեսակի և անոթավորման գոտու վրա [2,3,5,20]: Դասակարգման նպատակով մահիկը բաժանում են առաջային, միջային և հետին երրորդականների, ինչպես նաև միջային, միջին և դրսային հատվածների: Տարբերում են՝

- կարմիր-կարմիր գոտու վնասվածք – մահիկի ակտիվ անոթավորված գոտու պոկում հոդաշապիկից,
- կարմիր - սպիտակ գոտու վնասվածք- մահիկի վնասում հարհոդաշապկային գոտում, որտեղ անոթավորված է մահիկի ծայրամասային հատվածը, իսկ կենտրոնականը՝ ոչ,
- սպիտակ-սպիտակ գոտու վնասվածք – մահիկի անոթավորումից զուրկ հատվածի վնասում [4,152]:

Վնասվածքները, որոնք տեղակայված են մահիկի ծայրամասային ամրացման գոտիներում, որոնք են մենիսկոֆեմորալ և մենիսկոտիբիալ հատվածները, դասվում են մահիկի դրսային երրորդականի վնասվածքներին կամ կոչվում են «red-red» վնասվածքներ: Միջային երրորդականում տեղակայված վնասվածքները դասակարգվում են որպես «red-white» կամ «white-white»: Red-white պատովածքները առաջանում են միջին և դրսային երրորդականի սահմանին՝ մահիկի կպման տեղից մոտավորապես 4 մմ տարածության վրա, որտեղ անոթավորված է մահիկի միայն դրսային երրորդականը: White-white վնասվածքները տեղակայված են լինում միջային երրորդականում, որտեղ չկան արյունատար անոթներ [148,152,153,154]:

Կարմիր գոտու վնասվածքները նաև կոչվում են մահիկի պոկում հոդաշապկից կարմիր-սպիտակ գոտունը՝ հարհոդաշապկային, որտեղ մահիկի ծայրամասային հատ-

վածն է անոթավորված, իսկ կենտրոնականը՝ ոչ, և սպիտակ կամ ավասկուլյար գոտու վնասվածքներ [2,3,4,5]:

Մահիկի վնասվելու հավանականությունը հետազոտել են բազմաթիվ հեղինակներ: Նրանց մի մասը գտնում է, որ այդ հատկությունը կախված է մահիկի միկրոկառուցվածքի, դրա սեղմվելու հատկության հետ: Իսկ այդ հատկանիշները ուղղակիորեն կապված են կոլագենի միկրոկազմության հետ: Ավելի խորը շերտերում կոլագենային թելերն ունեն համակարգված ուղղվածություն, իսկ մակերեսային շերտերում դրանք քառսային են: Այդ պատճառով վնասվածքի ազդող ուժը նախ առաջացնում է ճեղքածքներ մահիկի մակերեսի և եզրերի շրջանում, իսկ հետո տարածվում խորը շերտերի վրա [101,106,123,152]:

Միջային և դրսային մահիկների վնասման հաճախականությունը տարբեր է: Ինչպես նշվել է մահիկների անատոմիական առաձնահատկությունները քննարկելիս, միջային մահիկն ավելի կայուն է ֆիքսված հոդում, իսկ դրսայինը շարժուն է: Մահիկների շարժունության այս տարբերությունն է հանդիսանում միջային մահիկի ավելի հաճախակի վնասման պատճառ: <Եղինակների մի մասի կածիքով վնասման հարաբերությունը տատանվում է 3:1- ից մինչև 10:1 սահմաններում: A.B.Lipcomb-ի և R.J.Last-ի կարծիքով հիմնական պատճառը կայանում է նրանում, որ միջային մահիկը կատարում է միայն պասիվ շարժումներ մեծ ոլոքի կոճի հետ միասին, այն դեպքում երբ դրսային մահիկն ունի շարժման երկու մեխանիզմ՝ ազդրոսկրի կոճի հետ կապերի և ծնկափոսի մկանների ծգման հետևանքով: <Ենց այս վերջին հանգամանքն է թույլ տալիս պտույտային շարժումների ժամանակ պաշտպանել դրսային մահիկը վնասվածքներից[4]:

Միրոնովի և Լիսիցինի դասակարգումը հիմնված է պատովածքի անատոմիական տեսակի և ծնի վրա: Նրանք տարբերակում են վնասվածքների 12 ծն ամեն մեկում 1-3 տեսակ: Չնայած անատոմիական զանազանությանը այս դասակարգումը թույլ է արտահայտում վնասվածքի տեսակի և դրա հնարավոր վերակագնման միջև կապը:

Այսպիսով, չնայած դասակարգումների զանազանությանը, գործնական նշանակություն ունեն դրանց մեկ-երկու տարբերակներ: <Հիմնական պայմանը դասակարգման նկատմամբ այն է, որ ճիշտ հասկանալով վնասվածքի մեխանիզմը՝ հնարավորություն ընձեռնվի վեցինիս ճիշտ բուժման համար:

### **1.3. Մահիկների վնասվածքների բուժման մոտեցումները**

Վերջին 50 տարիների ընթացքում մոտեցումները մահիկների դերի նկատմամբ զարգացում են ապրել՝ ֆունկցիոնալ անպետք կառուցներից մինչև կենսական կարևորագույն կառուցների, որոնք մասնակցում են ծնկահողի աշխատանքին: Անատոմիական և ֆունկցիոնալ տեսակետների հետ մեկտեղ փոխվել են նաև մահիկների վնասվածքների բուժման մոտեցումները: Եթե նախկինում բաց վիրահատությունները համարվում էին հիմնական միջամտության տարբերակը, ապա այժմ նույնիսկ արթոսկոպիկ մահիկահատումները հաճախ համարվում են անցանկալի, և նախապատվությունը տրվում է մահիկի ամբողջականության վերականգնմանը: Այսպիսով տարբերում են մահիկների վնասվածքների վիրահատական բուժման հետևյալ եղանակները՝

- ✓ բաց-մահիկահատում, մահիկի կարում,
- ✓ արթոսկոպիկ - մահիկահատում, մահիկի կարում [130,141,150]:

#### **1.3.1 Բաց վիրահատական եղանակներ**

Բաց վիրահատական եղանակներին են դասվում մահիկի ամբողջականության վերականգնումը և արթոստոմիկ մահիկահատումը: Մահիկների վնասվածքների բաց վիրահատական եղանակները ներկայումս գրեթե չեն կիրառվում և անցել են պատմության գիրկը: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում ապացուցվել է դրանց ցածր արդյունավետությունը և հետվիրահատական բարդությունների բարձր տոկոսը: Բացի դրանից տեխնիկապես ճիշտ իրականացնել վիրահատություն մահիկի ամբողջականության առավելագույն պահպանման պայմաններում բաց եղանակով գրեթե հնարավոր չէ:

Առաջին անգամ մահիկի կարում իրականացրել է Էդինբուրգի Համալսարանի դասախոս Thomas Annandale-ն 1883 թ-ին: Շոտլանդիայի Էդինբուրգ քաղաքում նա կատարել է միջային մահիկի կարում երիտասարդ գինվորականի մոտ, որը մոտ մեկ տարի բուժվում էր շարունակական ցավերի և արգելափակումների կապակցությամբ: Վերականգնման համար հեղինակն օգտագործել է քրոմացված կետպուտ: Վիրահատությունից մոտ 1.5 ամիս հետո հիվանդը վերադարձել է ակտիվ կյանքի [17,46,49,60, 64,65,66,67]: Սակայն այս դիտակումը պատմության մեջ եղել է եզակիներից մեկը, և

մահիկի բաց կարումն առանձնապես մեծ տարածում չի գտել: Չնայած այն փաստին, որ մահիկի կարը համարվել է օրգանպահպանողական վիրահատություն, այնուամենայնիվ մինչև 70-ական թվականները վնասվածքաբանների մոտ ամրացած էր այն կարծիքը, որ վնասված մահիկի հատվածը ենթակա է հեռացման: Եթե այնուամենայնիվ վնասված մահիկը վերականգնվում էր, ապա դա արվում էր բաց եղանակով:

Հետաքրքրություն են ներկայացնում մահիկների կարման հեռավոր արդյունքները: Բաց կարման դեպքերում մի շարք օրթոպեդներ նշել են 80-89% լավ հեռավոր արդյունքներ [130,13,132,133]: W.D. Cannon-ը գնահատում է հեռավոր արդյունքները կախված մահիկի ռեգեներատիվ տեսակից՝ լիարժեք, ոչ լիարժեք և ռեգեներատիվ բացակայություն: D.E. Cooper-ը և համահեղինակներ համարում են, որ միայն արթրոսկոպիկ միջամտությունը կարող է ճիշտ գնահատել մահիկի վիճակը: Միևնույն ժամանակ մի շարք գիտնականներ գտնում են, որ այս վիրահատությունը բերում է անբավարար արդյունքների: K.E De Haven-ը և Sebastianelli-ն հետազոտություններում նշում են մահիկի 9 կրկնակի պատովածքի մասին կարումից 5 տարի անց: Հակառակ այս արդյունքների S.Eggli-ն նշել է կարի բավարար լինելու փաստը վիրահատությունից 8 տարի անց 26 % հիվանդի մոտ [2,3,5,43,45,46,59,98,104,113]:

### **1.3.2 Փակ վիրահատական եղանակներ՝ արթրոսկոպիա**

Առաջին անգամ ծնկահոդի արթրոսկոպիան դիակի վրա իրականացրել է դանիացի գիտնական S. Nordentoft-ը: Նա կիրառել էր Jacobaeus-ի առաջարկած լապարուկոպը: Հեղինակը ներկայացրել էր իր աշխատանքը Բեռլինում իրականացվող German Surgical Society համագումարին: Ըստ գրականությունից մեզ հայտնի տվյալների՝ նա առաջինն էր, որ կարողացել էր տեսնել ծնկահոդի ներքին հյուսվածքները: Սակայն այս փորձը կլինիկական կիրառություն չստացավ [33,53,56,81,96]:

Պրոֆեսոր Kenji Takagi Տոկիոյից, 1918-ից սկսեց կիրառել ցիստոսկոպը տուրեկուլյոզով ախտահարված ծնկահոդերի հետազոտման համար: Ինքնին այս ախտահարումը և դրա հետազոտությունը հանդիսանում էր այն ժամանակների համար դժվար լուծելի խնդիր [56,96]:

1931-ին Takagi-ին առաջարկեց իր առաջին արթրոսկոպը /3.5 մմ տրամագծով/, և հետագա մի քանի տարիների ընթացքում անընդմեջ զարգացրեց այն՝ ստեղծելով նորանոր ձևափոխումներ: 1938-ին նա մշակեց արթրոսկոպի 12-րդ մոդելը նեղ և լայն տրամաչափի տրոակարների հավաքածույով: Անկասկած, նա առաջին նորարարն էր արթրոսկոպիայի բնագավառում: Մինչդեռ, 1921 թ-ին աշխարհի մյուս ծայրում՝ Շվեյցարիայում բժիշկ Eugen Bircher-ը հրապարակեց արթրոսկոպի կիրառման իր առաջին փորձը հիվանդների վրա: Նա անվանեց այս եղանակը արթրոէնդրոսկոպիա՝ օգտագործելով Wolf ֆիրմայի Jacobaeus տեսակի լապարոսկոպի ձևափոխումը: Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ այս արթրոսկոպներն ունեին սահմանափակ տեսանելիության հնարավորություն և թույլ լուսավորություն [76,79 96]:

Հաջորդ տպագրական աշխատանքը՝ նվիրված մահիկների վնասվաճքների արթրոսկոպիկ բուժմանը, 1925թ-ին հրատարակվել է Phillip Kreuschler-ի կողմից Չիկագոյի Լայոլա Համալսարանում[76,79 96]:

Արթրոսկոպիան իրականացնելու համար նա ներհոդային եղանակով կիրառում էր ազոտ, թթվածին և ֆորմալդեհիդի լուծույթ, իսկ անմիջապես հետո կատարում էր ռենտգենաբանական հետազոտություն [76,79 96]:

Հետագայում 1926 թ-ին E.S. Geist-ը ձևափոխեց օտոսկոպը և կիրառեց այն ծնկահոդի ստորին հատվածի հյուսվաճքների հետազոտման համար: Հյուսիսային Դարուսայի Բժշկական Ասոցիացիայի Lancet ամսագրում տպագրվեց այս արթրոսկոպի կիրառման առաջին փորձը դիակների վրա, սակայն որևէ կիխիկական կիրառում այս հոդվածը չէր լուսաբանում [76,79 96]:

1931 թ-ին M.Burman-ը, Նյու-Յորքյան “Հոդերի հիվանդությունների հոսպիտալում”, նույզես կատարում է Mr.R. Wappler-ի կողմից ձևափոխված արթրոսկոպի մոդելի փորձարկումը դիակների վրա: Զուգահեռ նա կատարում է նաև ներհոդային ներարկումներ և ուսումնասիրում հոդաճառի փոփոխությունները: Նույն թվականին, իր կատարած փորձարկումներից հետո, նա հրատարակում է աշխատություն «Արթրոսկոպիան որպես հոդի վիզուալիզացիայի ճշգրիտ միջոց» անվանումով: Նույն աշխատության մեջ տպագրվում են մոտ 20 էնդոսկոպիկ նկարներ, որոնք հանդիսանում էին արթրոսկոպիկ առաջին պատկերները: M. Burman-ը 1950-ին որոշում է տպագրել

առաջին “Արթրոսկոպիայի ատլասը”, որը սակայն այդպես էլ լուս չի տեսնում [76,79, 96]:

Նույն ժամանակաշրջանում բազմաթիվ եվրոպացի մասնագետներ նույնպես տարված էին արթրոսկոպիայի իրականացման գաղափարով: Նրանցից էին գերմանացի գիտնականներ R. Sommer (1937) և E. Vaubel (1938): Արթրոսկոպիայի զարգացման պատմությունը ժամանակավորապես կանգ է առնում Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով, երբ ժամանակավոր հետազոտություններ չեն իրականացվում [76,79, 96]:

Պատերազմից հետո Masaki Watanabe-ն շարունակեց զարգացնել Dr. Takagi-ի առաջարկած արթրոսկոպը: Բավականին կատարելագոծելով օպտիկական և էլեկտրոնային մասերը 1955-ին նա ստեղծեց Watanabe #14 սկոպը, որը հնարավորություն էր տալիս ստանալու ծնկահոդի գունավոր նկարներ: 1959 թ-ին ստեղծվեց Watanabe #21 արթրոսկոպը, որն ուներ  $101^0$  տեսանելիության անկյուն և ֆոկուսի խորություն՝ 1 սմ-ից մինչև անսահմանություն: 1967 թ-ին Watanabe-ն ստեղծեց առաջին ֆիբրոպտիկական #22, իսկ 1970-ին՝ գերբարակ ֆիբրոպտիկական #25 արթրոսկոպը: Հետագայում վերջինս հիմք հանդիսացավ ասեղային արթրոսկոպի ստեղծման համար [76,79,103,112, 114]:

Masaki Watanabe-ն առաջինն էր, ով զարգացրեց եռաչափության գաղափարը՝ ստեղծելով հատուկ գործիքներ՝ ծնկահոդում տարբեր ուղղություններով գործողություններ կատարելու նպատակով [76,79,103,112,114,152 ]:

1955 թ-ին նա իրականացրեց առաջին վիրահատական միջատությունը իր իսկ արթրոսկոպի միջոցով հեռացնելով՝ ներհոդային ուռուցքային գոյացություն: 1961-ին նա կատարեց աճառային մարմնի հեռացում, իսկ 1962-ին՝ առաջին մասնակի մահիկահատում: Այս աշխատանքը նա իրականացրեց Hiroshi Ikeuchi-ի և Sakae Takeda-ի հետ: Watanabe-ն նաև հրատարակեց առաջին Արթրոսկոպիայի ատլասը, որը տպագրվեց անգլերեն լեզվով 1957-ին: Hiroshi Ikeuchi-ն շարունակում է նրա աշխատանքը մինչ այսօր [79,103,112,114,152]:

Հետագայում կանադացի գիտնական Robert W. Jackson-ը ուսումնասիրելով Watanabe-ի աշխատանքները, ներդրեց արթրոսկոպիկ եղանակը Կանադայում: Այդ

տարիներին բազմաթիվ գիտնականներ այցելում էին նրա կլինիկան՝ արթրոսկոպիայի տեխնիկային ծանոթանալու նպատակով, որի շնորհիվ այդ եղանակը մեծ տարածում գտավ տարբեր երկրներում [152]:

#### • **Մահիկների ամբողջական կամ մասնակի հեռացում, հեռավոր արդյունքները**

Արթրոսկոպիկ սարքավորումների օպերացման հետ մեկտեղ սկսեցին կատարելագործվել նաև մահիկների վիրահատական միջամտությունների տեսակները:

Լրիվ մահիկահատումների մասին դրական կարծիքներ մենք գտնում ենք արտասահմանյան գրականության մեջ G.Bazzocchi (1935), D.M.Bosworth (1937), J.Charnley (1945), A.G.Apley (1947), A.F.DePalma (1954), C.B.W.Parry et al. (1958), A.J.Helfet (1963), I.S.Smillie (1967), H.R.Collins et al. (1974) աշխատություններում: Սակայն, ինչպես երևում է վերոհիշյալից այս տեսակետները բավականին հնացել են: Իրենց դիրքորոշումը հեղինակները բացատրում էին այն փաստով, որ վնասված հատվածը ենթարկվելով հետագա դեգեներատիվ փոփոխությունների՝ հեշտ վնասվում է նորից: Սակայն հետագայում կենդանիների վրա կատարված փորձերի արդյունքում պարզ դարձավ, որ մահիկի հյուսվածքը կարող է ենթարկվել ռեգեներացիայի, և 1936 թ-ին առաջացավ վարկած, որ մահիկը կարող է ենթարկվել վերականգնման նույնիսկ ավասկույար գոտում: Առաջին անգամ Fairbank-ը 17 կլինիկական հետազոտությունների հիման վրա ցուց է տվել լրիվ մահիկահատումների հնարավոր հետևանքները: Նա նկարագրել է հեռավոր հետվիրահատական շրջանի ռենտգենաբանական պատկերը՝ որն է հոդաճեղքի նեղացումը, կոճերի հարթեցումը, օստեոֆիտների առաջացումը և աճառի դեգեներացիան [96,112,136,152]:

Jorgensen-ը և համահեղինակները 147 մահիկահատումներից հետո կլինիկորեն օստեոարթրոզ /OU/ հայտնաբերել են 53% դեպքերում, իսկ նոյն ախտահարման ռենտգենաբանական նշանները՝ առանց լուրջ դրսնորումների մոտ 40 % դեպքերում [112, 152]:

Հետագայում, A.M.Ahmed-ի, D.L.Burke-ի աշխատանքներից, որոնք նվիրված էին հոդի կենսամեխանիկայի ուսումնասիրությանը, պարզ դարձավ, որ նորմայում մահիկները կրում են ծնկահոդի ծանրաբեռնվածության 50 %-ը: Ծալված վիճակում այդ ծան-

բարենվածությունը կազմում է 85%: Մահիկահատումից հետո շփման գոտին նվազում է մինչև 50%, ինչը զգայի ավելացնում է ծանրաբեռնվածությունը հոդաճառի վրա՝ բերելով վերջինիս դեգեներատիվ փոփոխությունների: Դա հաստատում են նաև կենդանիների վրա կատարված բազմաթիվ հետազոտությունները: H. Appel-ի հետազոտությունները ցույց տվեցին որ մահիկահատումներից հետո դեֆորմացնող օստեոարթրոզի զարգացումը սկսվում է սինովիալ թաղանթի բորբոքումից, հոդաճառի էրոզիայից այն հատվածում, որտեղ բացակայում է մահիկի հյուսվածքը: E.M.Tapper-ը և N.W. Hoover-ը 85% դեպքերում հայտնաբերեցին ԴՕ հստակ ռենտգենաբանական նշաններ վիրահատությունից 10 տարի անց: Roos և համահեղինակները հետազոտել է մահիկների հեռացումների հեռավոր արդյունքները 25 տարի անց և ապացուցել, որ մահիկահատումից հետո օստեոարթրոզ /ՕԱ/ զարգանում է 10-20 տարի ավելի վաղ, քան առաջնային օստեոարթրոզ Հեռացված մահիկի բացասական ազդեցությանը նվիրված աշխատանքներն բազմաթիվ են [4,11,12,18,28,127]:

Հետագա Coxand և Cordell-ի ավելի խորացված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մահիկի հեռացված հատվածի և ծնկահողի հետագա ֆունկցիոնալ վիճակի միջև առկա են ուղղակի կապեր [7,97,124,125]: Հաշվի առնելով այդ փաստը, ինչպես նաև մահիկիկ պաշտպանական ֆունկցիան, շատ հեղինակներ ներկայումս աշխատում են հնարավորինս չափ պահպանել մահիկի հյուսվածքը: Այդ տեսակետից մեծ նշանակություն ունեն նաև տարիքը, սեռը, մարմնի զանգվածի ինդեքսը, մահիկի վիրահատական միջամտության տեսակը, հեռացված հատվածի չափերը և այլն [27,123]:

Մասնակի մահիկահատումներից հետո դիտվում են ավելի լավ հեռավոր արդյունքներ: Մասնավորապես, Burks և համահեղինակների կողմից կատարված 15 տարվա ռետրոսպեկտիվ հետազոտությունը ցույց է տվել, որ 88% հիվանդների շրջանում արձանագրվել են բավարար և լավ արդյունքներ: Rangger և համահեղինակների հետազոտությունը ցույց է տվել ավելի արտահայտված դեգեներատիվ փոփոխություններ միջային մահիկահատումներից հետո, համեմատած դրսայինի: Միջային մահիկի հեռացումը ավելի վաղ է բերում արթրոզի առաջացմանը, քան դրսայինը: Զոյգ մահիկահատումներից հետո գոնարթրոզը /ԳԱ/ զարգանում է ավելի կարճ ժամանակահատվածում [29,31,68,75,97, 89,124,125]:

Այսպիսով, լրիվ կամ մասնակի մահիկահատումներից հետո աճառի դեգեներացիայի զարգացումը գրեթե անխուսափելի է: Ընդ որում, այդ միջամտությունների համեմատական բնութագիրը ցույց է տվել, որ դեգեներատիվ փոփոխությունները ավելի արտահայտված են լրիվ մահիկահատումներից հետո: Mc Ginty և համահեղինակների հետազոտության արդյունքում ցույց է տվել, որ տոտալ մահիկահատումից հետո դեգեներատիվ փոփոխությունները դիտվել են 62% և մասնակի մահիկահատումներից հետո՝ 36% դեպքերում: Cannonand Vittori-ն նշում է, որ դրսային մահիկահատումներից հետո լավացման տոկոսը բավականին բարձր է [14,55,132,133,150]:

Մասնակի մահիկահատումներից հետո շատ ավելի քիչ են կրկնակի վիրահատության դեպքերը, քան մահիկի կարումներից հետո, ընդ որում դրսային մահիկի վերականգնումը շատ ավելի հազվադեպ է բերում կրկնակի վիրահատության, քան միջայինին [10,141,145]:

Այսպիսով լրիվ և մասնակի մահիկահատումների հեռավոր արդյունքների մասին կարծիքները միանշանակ չեն, այնուամենայնիվ նախապատվությունը տրվում է մասնակի մահիկահատումներին:

- **Մահիկների կարում, հեռավոր արդյունքները**

Մահիկի վերականգնման գաղափարը ներկայումս հանդիսանում է բուժման համեմատաբար նոր մոտեցում: Չնայած T. Annandale-ի կողմից կատարված բաց վերականգնմանը, այս ուղղութունը չարժանացավ համապատասխան ուշադրության: Երկար ժամանակ մահիկների վնասվածքների բուժումը իրականացվում էր նրանց հեռացման ճանապարհով: Սակայն 1930 թ-ին King-ը ցույց տվեց, որ մահիկների այն վնասվածքները, որոնք կապված են հարհողաշապկային գոտու հետ, ունեն պոտենցիալ վերականգնման հատկություն: Ցավոք, նույնիսկ այս հետազոտությունը չբերեց մահիկահատումների քանակի նվազեցմանը [48,123,136]:

Առաջարկվել են մահիկի ամբողջականության վերականգնման բազմաթիվ եղանակներ: Դրանցից առավել մեծ տարածում են գտել «inside-out» և «outside-in» կարման եղանակները: Հետագայում առաջարկվել են «all-inside» կարման եղանակին համապատասխանող բազմաթիվ սարքավորումներ: Հասկանալի է, որ մահիկի հնարավորին

չափով մեծ քանակի հյուսվածքի պահապանումը կունենա ավելի լավ հեռավոր արդյունքներ [7,80,84,86,87,93]:

King-ի հետազոտությունները՝ նվիրված անոթավորված գոտու վերականգնմանը, բերեցին այն թերի կարծիքի, որ մնացած բոլոր հատվածների վնասվածքները չեն կարող վերականգնվել: Այս սկզբունքը հիմնվում է այն գաղափարի վրա, որ մահիկի բջիջները չեն ենթարկվում ռեգեներացիայի նույնիսկ դրանց անատոմիական կառուցվածքը վերականգնելուց, այսինքն մահիկի վրա կար ոնելուց հետո, ինչը հատկապես վերաբերվում էր անոթավորումից զուրկ՝ այսինքն՝ մահիկի սպիտակ հատվածներին [13,25, 34,92,101]:

Միաժամանակ Webber և համահեղինակների ցույց տվեցին, որ մահիկների ֆիբրոխոնորոցիտները իսկապես ընդունակ են պրոլիֆերացիայի մատրիքսի սինթեզի առկա հեմոստատիկ և միտոզեն գործոնների ազդեցության ներքո՝ այն դեպքում, եթե դրանք գտնվում են վնասված, ախտահարված վիճակում: Իր հետազոտություններում օգտագործելով բջջային կոլլտուրաներ, հեղինակը ցույց տվեց, որ մահիկի բջիջները զգայուն են տրոմբոցիտներից սինթեզվող աճի գործոնների նկատմամբ, ենթարկվում են պրոլիֆերացիայի և իրենք էլ սինթեզում են էքստրացելույար մատրիքս [7,13,25]: Մահիկի պատոված հատվածում սովորաբար ստեղծվում է ֆիբրինային շերտ, որը հիմք է հանդիսանում նորմալ ռեգեներացիայի համար: Բացի դրանից, առաջացած ֆիբրինային շերտը պարունակում է տրոմբոցիտների աճի գործոն, որը և բերում է հեմոստատիկ և միտոզեն էֆֆեկտների խթանմանը և ի վերջո ռեգեներացիայի: Այսպիսով, կարի առկայության պայմաններում ֆիբրինային շերտը և վերոնշյալ բոլոր փոփոխությունները կարող են առաջանալ նաև մահիկների ավասկույար հատվածներում [7,13,25]:

Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում արթրոսկոպիկ գործիքների զարգացումը բերեց կարման տեխնիկաների կատարելագործմանը: H. Ikeuchi-ն առաջին անգամ կատարել է մահիկի կարում Տոկիոյում 1969 թ-ին: Առաջին երկու վերականգնումները ձախողվեցին վիրահատությունից 4 ամիս հետո: 1978-ին Price-ը և Allen-ը հայտնեցին մահիկների պերիֆերիկ պատովածքների 36 վերականգնման դեպքի մասին, որոնք զուգակցված էին միջային կողմնային կապանի վնասման հետ: Henning առաջին

անգամ կիրառել է վերականգնումը ԱՄՆ-ում 1980-ին: Հետագայում ստեղծվեցին կարման այլ եղանակներ: Հիմնականում դրանք երեքն են՝

- ✓ inside-to-outside /ներսից դուրս/
- ✓ outside-to - inside /դրսից ներս/
- ✓ all-inside: /ամբողջովին ներսում/

### • *Inside out պեխնիկան*

Inside out տեխնիկան առաջին անգամ նկարագրել է Henning-ը 1986 թ-ին: Հետագայում առաջարկվել են այս եղանակի ձևափոխումներ [140,146,242,354]: R.P. Jakob-ը առաջարկել է կիրառել յուրահատուկ գործիք՝ ուղղորդող, կարանյութով կտրող ներհոդային հատվածի վրա: Իմաստը կայանում է նրանում, որ կարերը դրվում են պատովածքին հակառակ գոտու միջով, ընդ որում թելերի ծայրերը դուրս են բերվում և ֆիքսվում ենթամաշկի տակ [39,54]:

T.D. Rosenberg-ը նկարագրել է իր ձևափոխումը, որում կիրառել է մեկ թեքված հաստ ասեղ: Վերջինիս օգնությամբ կարելի է դնել ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ կարեր [2,4,5,54]:

Ինչպես հուշում է անվանումը, այս եղանակի դեպքում կարերը դրվում են պատովածքի միջով դեպի հողաշապիկը՝ ներսից դուրս: Այս եղանակի կիրառումից հետո 73%-ից 91% դեպքերում դիտվում են կլինիկական լավ արդյունքներ: Երկրորդային արթրոսկոպիայի ժամանակ Tenutaand Arciero-ն հայտնաբերել է 65% լավացում [7,39,54]:

### • *Outside-in պեխնիկան*

Մահիկի կարման outside – in եղանակն առաջին առաջարկել է R.F. Warren 1985 թ-ին [2,3,5,36,78]: Ինչպես հուշում է անվանումը՝ կարերը դրվում են դրսից դեպի ներս՝ հողաշապիկի միջով: Այս եղանակի հիմնական նպատակն է նյարդաանոթային վնասվածքների բացառումը, որոնք երբեմն դիտվում են մահիկի հետին եղյուրի վնասվածքների inside-to-outside եղանակով վերականգնման ժամանակ: Վիրահատության էությունը կայանում է նրանում, որ կարման մուտքը գտնվում է հոդից դուրս անվտանգ

գոտում: Կարն անցնում է հոդաշապկով, մահիկի պատովածքով դեպի ներհոդային տարածությունը, և իրականացվում է արթրոսկոպիկ հսկողության ներքո: Ըստ Morganand Casscelbs – ի այն անվտանգ է և արդյունավետ [30,109,155]:

V. Trommel և համահեղինակները նշում է, որ այս եղանակով վիրահատված հիվանդներից 45%-ի մոտ դիտվում է մահիկի լրիվ վերականգնում: Սակայն հետին հատվածներում տեղակայված վնասվածքների դեպքում արդյունքներն այնքան էլ գոհացնող չեն [7,109,155]:

Եղանակը չի պահանջում հատուկ գործիքներ, անհրաժեշտ է միայն ողնուղեղային ասեղ և ներծծվող թելեր, որոնք թույլ են տալիս դնել անհրաժեշտ քանակությամբ կայուն կարեր [2,3,5,78,109]:

Այս եղանակի թերություններից է վնասված հատվածի եզրերի հստակ համադրման դժվարությունը, ինչպես նաև նյարդաանոթային բարդությունների բարձր ռիսկը հետին եղջյուրի ֆիքսացիայի ժամանակ [4]:

Այս վիրահատությունը հետագայում ենթարկվել է որոշակի ձևափոխությունների: Այսպես, 1986 թ-ին LL Johnson-ը նկարագրել է ձևափոխված outside – in տեխնիկան, որը իրականացվում է ողնուղեղային ասեղի և մետաղալարային հանգույցի միջոցով [4]:

F.Landsiedl-ն 1992 թ-ին առաջարկեց իր ձևափոխումը, երբ կարումը կատարում էր հատուկ հաստ ասեղի միջոցով CD.Morgan և SW. Cassells outside – in տեխնիկայով մահիկի կարումից 18 ամիս հետո 98,6% հիվանդների մոտ նշում են լավ և գերազանց արդյունքներ [36,78,109]:

### • *All-Inside պեխնիկան*

Այս եղանակը առաջին անգամ նկարագրվել և կիրառվել է DeHaven-ի կողմից: Ի սկզբանե այն առաջարկվել է ծնկահոդի հետին կեսի վնասվածքների վերականգնման նպատակով [16,22,26, 30,35,44]: All-inside եղանակը տեխնիկապես ամենաբարդն է և պահանջում է հատուկ արթրոսկոպիկ սարքավորումներ, սակայն դրանից հետո դիտվում է լավացման ամենամեծ տոկոս՝ հատկապես հետին եղջյուրի վնասվածքների դեպքում: Այն թույլ է տալիս լիարժեք գնահատել մահիկների հետին հատվածները, ինչպես

նաև հետին կենտրոնական մասերը, որոնք այլ եղանակների դեպքում տեսանելի չեն [62,77,83,100]:

All-inside եղանակի առավելություններն են հանդիսանում հետին կենտրոնական մակերեսին կարի անվտանգ իրականացումը, կարերի ուղղահայաց կողմնորոշումը (ապահովում է մահիկի անատոմիական ձևի վերականգնումը) և նյարդաանոթային բարդությունների բացառումը, քանի որ բոլոր գործողությունները իրականացվում են ներհորդային, ի տարբերություն այլ արթրոսկոպիկ կարման եղանակների, որոնք պահանջում են արտահորդային վիրահատական մուտքեր [30,107,11,146]:

Եղանակը պահանջում է հատուկ արթրոսկոպիկ սարքավորումներ ( $70^{\circ}$  տելեսկոպ), հաստ հետին ասեղ), ինչպես նաև վիրաբուժի փորձ և հմտություն): Չնայած դրան, այն ունի լավացման ամենամեծ տոկոսը՝ հատկապես հետին եղջյուրի վնասվածքների դեպքում [7,30,44,62,83]: Մահիկի կարմիր կամ խաղը գոտիների ռադիալ վնասվածքների դեպքում all-inside եղանակի կիրառումից հետո հեռակա ժամկետներում դիտվում են լավացման բարձր տոկոսներ [111,117, 139,140,142,149,151,152]:

Այսպիսով, ամեն մի նկարագրված տեխնիկա ունի իր առավելություններն ու թերությունները: Բնական է որ վիրաբույժն այս կամ այն տեխնիկան ընտրելիս առաջնորդվում է ոչ միայն ամեն մի առանձին դեպքի համար տվյալ եղանակի կիրառման անհրաժեշտությամբ, այլ նաև իրեն հասանելի եղանակով: Սակայն կարևոր մահիկի կարումից հետո հոդի հետագա վիճակն է:

Մահիկների վնասվածքների բուժման տակտիկան շարունակում է մնալ մշտական հետազոտությունների և քննարկումների առարկա: Տարբեր կարծիքները հիմնականում վերաբերվում են մահիկների տարբեր կարման եղանակների կիրառմանը կախված վնասման գոտուց: Միանշանակ կարծիք չկա նաև թարմ և հնացած վնասվածքների դեպքում վերականգնման տարբեր եղանակների վերաբերյալ: Մահիկի լիարժեք վերականգնման համար կարևոր է վնասվածքի տեղակայումը, անատոմիական ձևը, վաղեմությունը, հիվանդի տարիքը և զուգակցող վնասվածքների առկայությունը [2,4,94,95,110,115,116]:

Ինչպես արդեն նշվել է, նախ և առաջ վերականգնման ենթակա են մահիկի անոթավորված հատվածները: 1982թ-ին S.P.Arnoczky և R.F.Warren-ը նշեցին մահիկի

անոթավորման կարևորությունը, որի մասին վկայում էին կարմիր գոտու վնասվածքների կարման նրանց կողմից ստացված դրական արդյունքները: Այս հեղինակների աշխատանքներից պարզ դարձավ, որ ակտիվ արյունամատակարարումը ապահովում էր ծայրամասային գոտիների լավացում նույնիսկ առանց հավելյալ միջոցառումների: Վերականգնման գործընթացը ընթանում է սինովիալ թաղանթի արյունամատակարարման ակտիվացմամբ և բորբոքային տիպի սինովիալ պանուսի առաջացմամբ՝ վնասվածքից հետո 6-12 շաբաթվա ընթացքում: Հեղինակները կարծում էին, որ սինովիալ թաղանթը շարունակում է անոթավորել վնասված հատվածը, եթե այն նույնիսկ հարհողապահային գոտում չէ: R.F. Warren-ը նշում էր, որ լավացման կարևորագույն չափանիշն է հանդիսանում վնասվածքի ծայրամասային տեղակայումը և մակարդուկի առկայությունը այդ գոտում: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով ծայրամասային վնասվածքների լավացման բարձր հաճախականությունը, 1981-թին «Միջազգային արթրոսկոպիա» սեմինարի ժամանակ ընդունվեց «մահիկի ծայրամասային արթրոսկոպիկ վերակագնում» տերմինը [2,3,4,23,24,88,117,118]:

H.E.Cabaud և համահեղինակները 1981 թ-ին կապիկների վրա փորձերի արդյունքում ցոյց տվեցին, որ մահիկների այն վնասվածքները, որոնք տարածվում են մինչև սինովիալ թաղանթ՝ կարող են վերականգնվել, վերջինիս անոթավորման շնորհիվ: Երկու տարի անց S.P.Arnochzky-ն և R.F.Warren-ը շների վրա կատարված փորձերի հիման վրա ապացուցեցին, որ մահիկի կենտրոնական մասի վերականգնումը նույնպես հնարավոր է՝ դրա հյուսվածքի մեջ կանալների ստեղծումից հետո, որոնք նպաստում են արյունատար անոթների ներաճմանը դեպի վնասվածքի գոտի: Սակայն նույնը չի կարելի ասել մահիկի ավասկուլյար գոտու մասին [51,57,119,120,152]:

Այսպես, փորձարարական աշխատանքները ցոյց են տվել, որ այդ հատվածի վերականգնումը բավականին դժվար խնդիր է: Այնուամենայնիվ մի խումբ հեղինակներ փորձել են ստեղծել եղանակներ, այդ գործընթացների արագացման համար: Մասնավորապես առաջարկվել է ֆիբրինային թաղանթի կիրառումը, նույնիսկ որոշ հեղինակների մոտ դիտվել են բավականին լավ արդյունքներ: Առաջարկվել է նաև ոեպարատիվ հարթակի օգտագործում, որը նպաստում է պատովածքի շուրջ քեմոտաքսիսի, բջիջների պրոլիֆերացիայի և մատրիքսի սինթեզի ակտիվացմանը: Մեկ այլ տեխնիկա են-

թաղրում է դեպի պերիֆերիկ անոթավորված գոտի տրեպանացիայի իրագործում, կանալների ձևավորում: <արհոդաշապկային հատվածի և հարմահիկային սինովիալ թաղանթի հատումը, ըստ մի շարք հեղինակների, նույնպես նպաստում է վնասված գոտու վերականգնման գործընթացների ակտիվացումանը: Այսպես, Scott-ը և համահեղինակները՝ այս եղանակի կիրառման դեպքում, նշում են վերականգնման ակտիվացում 54,8-64% դեպքերում [9,43,92,101]:

Գրականության մեջ մահիկի սպիտակ գոտու վնասվածքների վերականգնման մասին կարծիքները այնքան էլ հուսադրող չեն: R.P.H.Veth-ը ցույց է տվել, որ ճագարների վրա կատարված հետազոտություններում սպիտակ գոտու կարումը համեմատած կարմիր գոտու, հետ ավելի վատ է վերականգնվում: F.N.Ghadially կատարել է նման հետազոտություն խոզերի վրա և ստացել նմանատիպ արդյունքներ [1,123,152]:

S.P.Arnochzky-ն իր հետազոտություններում, այնուամենայնիվ, կարողացավ հասնել ավասկույար գոտու վնասվածքի լավացմանը՝ անոթավորված գոտու հետ հաղորդակցման պայմաններում: <Եղինակը նույնիսկ բուժում էր երկայնական վնասվածքը լայնական վնասվածքի առաջացման միջոցով: Սակայն այս եղանակը շատ հեղինակներ համարել են անարդյունավետ, քանի որ այն թուլացնում է մահիկի կառուցվածքը: Z.C.Zhang-ը և D.N.Gershuni-ն իրարից անկախ ստեղծեցին անոթային թունել՝ մահիկի տրեպանացիայի միջոցով: Սակայն նման մոտեցումը շատ հաճախ ուղղակիորեն վնասում է մահիկի հյուսվածքը: <Ետագայում առաջարկվել են նաև ֆիբրինային մակարդուկների, թաղանթների, սոսինձների կիրառումը [1,152]:

Որոշ օրթոպեդներ նշում են, որ երիտասարդ տարիքի իիվանդների շրջանում մահիկի թարմ երկայնակի վնասվածքների կարումից հետո դիտվում են հեռակա լավ արդյունքներ: Սակայն վիճելի է հանդիսանում նրանց այն կարծիքը, որ կարճ՝ 5 մմ-ից փոքր վնասվածքները իրենց բնույթով կայուն են և կարող են բուժվել կոնսերվատիվ եղանակով: Միայն 5 մմ-ից ավելի վնասվածքների դեպքում է անհրաժեշտ կատարել վիրահատական միջամտություն [135,136,142,152]:

Newman և համահեղինակները հայտնաբերել են, որ չնայած ուղիալ վնասվածքների հյուսվածքաբանական լավացմանը, այսինքն սպիտի առաջացմանը, շրջանաձև

ֆիբրոթելերը չեն վերականգնում իրենց յուրօրինակ կառուցվածքը, և որպես հետևանք խափանվում է մահիկի ծանրաբեռնումային ֆունկցիան [19,115,116]:

Bucket-handle կամ «ցնցուղի կանթի» տեսակի վնասվածքների ֆիքսման համար P.M. Albrecht-Olsen-ը առաջարկել է կիրառել տարբեր երկարության ներծծվող սլաքներ կախված այն բանից, թե մահիկի որ սեզմենտն է ֆիքսվելու: T.D.Koukoubis-ը իրականացնում է վնասվածքի ռեֆիքսացիա ներծծվող կեռիկների միջոցով, որոնց դեգրադացիայի գործընթացը տևում է 1 տարի [258]: Կատարված հետազոտությունները պարզել են, որ կեռիկներն ունեն ավելի լավ ֆիքսելու հատկություն, քան կարերը [2,3,4]:

J.J.Klimkiewicz-ի և B.Shaffer-ի աշխատանքները նվիրված են մահիկների պատովածքների կոնսերվատիվ բուժմանը: Ընդհանրացնելով մահիկների բուժման մոտեցումները նրանք եկան եզրակացության, որ կոնսերվատիվ բուժման ցուցումներ են հանդիսանում կայուն երկայնական մինչև 1 սմ և ավելի երկարությամբ պատովածքները, որոնք արթրոսկոպիայի ժամանակ չեն տեղաշարժվում ավելի քան 3-5մմ, դեգեներատիվ փոփոխությունների հետևանքով առաջացած պառվածքներ, կինհիկորեն չարտահայտվող պատովածքները [4,6,7,13,28,30]:

Մնացած բոլոր դեպքերում նրանց կարծիքով ցուցված է վիրահատական միջամտություն՝ կարում կամ ռեզեկցիա [4,60,65,66,70,72]:

K.R.Stone-ը՝ լինելով արթրոսկոպիկ վերականգնողական եղանակների կողմնակից գտնում է, որ եթե վնասվածքը ներառում է համապատասխան չափի և ամրության աճառ, ապա այն ենթակա է վերականգնման: Որոշումը՝ նրա կարծիքով, պետք է հիմնվի ոչ թե մահիկի անոթավորման, այլ վնասված հատվածի որակի և ծավալի վրա [4,103,112,114]: Մյուս կողմից նա նշում է, որ անոթավորված գոտու վնասվածքների դեպքում լավագույն արդյունքները նկատվում են մինչև 50 տարեկան հիվանդների մոտ [4,102,107,111,146]:

Մահիկների տարբեր տեսակի կարերի համեմատական աշխատանքներ կատարել են E.K.Soong-ը, K.B.Lee-ն: Այս ուղղությամբ իրականացված հետազոտությունները շատ հակասական արդյունքներ են տվել կախված վնասվածքի չափից, տեղակայումից և կարման տեսակից: Հիմնական պատճառը նրանում է, որ փորձերը կատարվել են տարբեր կենդանիների վրա: Ակնհայտ է որ այս պայմաններում ընտրությունը միա-

նշանակ լինել չի կարող [4]: Ճշգրիտ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է համեմատել միանման կենսաբանական տեսակներ և նման վնասման մեխանիզմներ, որոնք առավելագույն մոտեցված լինեն մարդու մահիկի վնասմանը: Այդ պատճառով մահիկների վնասվածքների բուժման սխեմաները և մոտեցումները դեռևս կարիք ունեն ճշգրտման և հստակեցման:

Մահիկների արթրոսկոպիկ կարման արդյունքները ներկայում բավականին հուսադրող են և 71-94 % - դեպքերում տալիս են դրական արդյունքներ: Masahiro Kuroasaki-ն և համահեղինակները 111 երիտասարդ հիվանդների մոտ կատարել են մահիկների արթրոսկոպիկ կարում: Հարհողաշապկային վնասվածքների լավացում նկատվել է 90 դեպքերում, իսկ 13 հիվանդի մոտ կրկին դիտվել է պատովածք [4,46,49,50,58,59]:

Այսպիսով գրականության տվյալներով մահիկների հարհողաշապկային վնասվածքների դեպքում վնասված հատվածի կարումը համարվում է վիրահատության ընտրության տարբերակ [4,80,84,86,87]:

Չնայած մահիկների վերականգնմանը նվիրված աշխատանքների բազմազանությանը, արտասահմանում, օրինակ ԱՄՆ-ում՝ վերականգնման է ենթարկվում բոլոր տեսակի վնասվածքների ընդամենը 10%: Ռուսաստանում մահիկի վերականգնումները կրում են եզակի բնույթ, իսկ <<-ում նման աշխատանքների գրեթե չենք հանդիպում: Այս ամենը վկայում է մահիկների վերականգնման բարդության և հետագա հետազոտությունների շարունակելու անհրաժեշտության մասին:

Ընդհանրացնելով գրականության ակնարկը կարելի է նշել, որ մահիկների վնասվածքները կարիք ունեն համալիր հետազոտման ժամանակակից ոչ ինվազիվ ախտորոշիչ եղանակների կիրառմամբ: Հաշվի առնելով մահիկների անոթավորումը անհրաժեշտ է մշակել հստակ ցուցումներ ինչպես կոնսերվատիվ, այնպես էլ վիրահատական բուժման եղանակների համար [4,103,112,114,115,116,118]:

#### **1.4. Երկրորդային գոնարթրոզը (ԳԱ), որպես մահիկների**

##### **վնասվածքների հետևանք և դրա բուժումը**

1986 թ-ին ՕՍ ախտորոշման և բուժման հարցերով ենթակոմիտեն և Ամերիկայի ուսմատոլոգների քոլեջը առաջարկել են ՕՍ հետևյան բնորոշումը՝ «Օստեոարթրոզը

դա հիվանդությունների հետերոգեն խումբ է, որի ժամանակ հոդաճառի և ենթահոդաճառային ուսկրի ամբողջականության խախտման ու փոփոխությունների հետևանքով տվյալ հոդի կողմից զարգանում է կլինիկական ախտանիշների համալիր»։ Այս բնորոշման մեջ փորձ է արվել սևեռել ուշադրությունը հիվանդության էթիոպաթոգենեզի վրա։ ՕՍ բնորոշվում է որպես ախտաբանական վիճակ՝ պայմանավորված կենսաբանական և մեխանիկական գործոնների ազդեցությամբ, որոնք բերում են խոնդրոցիտների սինթեզի և դեգրադացիայի, արտաքացնելու մատրիքսի, հոդաճառի և սուբխոնդրալ ուսկրի միջև նորմալ հարաբերակցությունների ապակայունացման [1,9,11,12,63,91,125,126]։

Հիվանդությունն առաջանում է արտաքին գործոնների ազդեցության ներքո, որոնք բացասաբար են ազդում հոդաճառի վիճակի և այլ ներհոդային կառուցների վրա [1,92,99,108,129,134]։

ՕՍ զարգացման կարևորագույն գործոն է հանդիսանում ծնկահոդի վնասվածքը։ M. A. Davis-ը և համահեղինակները 1989 թ-ին նշել են կապը ծնկահոդի վնասվածքի և մեկ կամ երկկողմանի ռենտգենաբանորեն հաստատված ԳԱ միջև։ Նրանք ուսումնասիրել են՝ 22 տարեկանում կրած վնասվածքի և հետագա ԳԱ զարգացման կապը։ 141 հիվանդից 96 մոտ 65 տարեկան հասակում ախտորոշվել է ԳԱ [1,99,105,125,126]։

Վնասվածքից հետո ՕՍ զարգացման ռիսկը աճում է 5,17 անգամ K.D.Brandt -ը առանձնացնում է հարհոդային մկանների թուլությունը որպես ԳԱ զարգացման ռիսկի գործոն։ ՕՍ հիվանդների մոտ հաճախ նկատվում է քառագլուխ մկանի թուլություն՝ կախված վնասված վեցույթի նվազ շարժունության հետ։ Պրոստեկտիվ հետազոտությունները վկայում են, որ քառագլուխ մկանի թուլությունը ոչ միայն հանդիսանում է ԳԱ դրսենորման պատճառ, այլ նաև կարող է հանդես գալ որպես ինքնուրույն ռիսկի գործոն [1,82,85,90,92]։

Երկար տարիներ ՕՍ զարգացման պատճառը համարում էին ծերացման գործընթացը։ Ներկայումս ՕՍ պաթոգենեզի մասին պատկերացումները զգալիորեն փոխվել են։ Ենթադրում են, որ ՕՍ պաթոգենեզը կազմված է 2 բաղկացուցիչից՝ ախտաբանական սթրես, այսինքն չափից ավելի ծանրաբեռնվածություն հոդի վրա, որը կարող է կապված լինել վնասվածքի և տարբեր դիսպլազիաների հետ։ Հոդաճառի վա-

դաժամ մաշվածության պատճառ կարող է լինել վերջինիս վրա ֆիզոլոգիականը գերազանցող երկարատև ծանրաբեռնվածությունը, կամ առօրյա ֆիզիկական ծանրաբեռնվածության նկատմամբ հոդաճառի տողերանտության իշեցումը՝ մետաբոլիկ խանգարումների հետևանքով [1,105,125,126,127]:

ԳԱ զարգացման դիսկը աճում է 35 տ-ից բարձր կանանց մոտ և կազմում է 68 %, իսկ տղամարդկանց մոտ 45 տ-ից հետո այն կազմում է 76.8 % [1,28,32,37,47]:

Հաստատված է նաև գենետիկ գործոնների որոշակի դերը ԳԱ զարգացման գործում:  
Հնարավոր է ստորին վերջույթների բնածին անոմալիաների, ջլակապանային համակարգի, հոդաշապիկի բնածին փոփոխությունների ժառանգական փոխանցումը, որոնք բերում են հոդամակերեսների անհամապատասխանության և գերշարժունության [1,11,12,18,28]:

Առավել հաճախ ԳԱ զարգացումը կապում են հոդի երկարատև ֆիզիկական ծանրաբեռնման և սպորտային ակտիվության հետ: Այս դեպքում հոդաճառի վրա ծանրաբեռնվածությանն անհավասար բաշխվում, և առավել մեծ ծանրաբեռնման բաժինն ընկնում է փոքր մակերեսի վրա՝ հոդամակերեսների առավելագույն շիման գոտում, բերելով հոդաճառի դեգեներատիվացիայի և դիստրոֆիայի [1,32,37,47,61,69,75,82,85,90,92]:

ՕՍ զարգացման հիմնական մեխանիզմները կախված են մատրիքսի ռեպարացիայի և դեգրադացիայի մեխանիզմների խաթարման հետ: Դրանք բերում են աճառի պրոգրեսիվող էրոզիայի, 2-րդ տեսակի կոլագենային թելերի քայքայմանը և պրոտեոգլիկանային մակրոմոլեկուլների դեգրադացիայի [1,99,105,125,126,127]:

Խոնդրոցիտները գտնվում են անոթավորումից գուրկ աճառային հյուսվածքում և սնուցվում են հիմնականում սինովիալ թաղանթի և սուբխոնդրալ ոսկրի մազանոթներից՝ աճառի մատրիքսի և սինովիալ թաղանթի միջնորդությամբ: Նորմայում մետաբոլիկ պրոցեսների ինտենսիվությունը հոդաճառում բարձր չէ: ԳԱ ժամանակ ուժեղանում են կատարողիկ գործընթացները, ընդ որում մատրիքսի գլխավոր մակրոմոլեկուլների քայքայումը՝ 2-րդ տեսակի կոլագենի և պրոտեոգլիկանների իրակականանում է երկու էտապով: Սկզբում մակրոմոլեկուլները ճեղքվում են խոշոր մասերի, այնուհետև

դրանց դեգրադացիան ավարտում են լիզոսոմալ ֆերմենտները, որոնք արտադրվում են մատրիքսի խոնդրոցիտներում [1,10,40,105,152]:

Վնասված խոնդրոցիտներն արտադրում են կարճ ֆիբրիլներ չառաջացնող 1-ին տեսակի կոլագեն: Սինթեզի նվազումը և դեգրադացիայի ավելացումը փոփոխում են մատրիքսի ֆունկցիոնալ հատկությունները, ինչը բերում է կայունության նվազեցմանը և դրա հետագա բարակեցմանը: Զևավորվում է այսպես կոչված խոնդրոիդ հյուսվածք՝ ծգման և ճնշման ցածր ունակություններով: Աճառի մեռուկացման պայմաններում մեխանիկական ծանրաբեռնվածության հատուցողական վերաբաշխման նպատակով հոդամակերեսների եզրով աճում է աճառային հյուսվածք, որը ոսկրանում է և առաջացնելով օստեոֆիտներ: Վերջիններս բերում են ծանրաբեռնվածության նկատմամբ տոլերանտության նվազեցմանը և հոդի անհամապատասխանությանը: Արդյունքում զարգանում է սինովիտ [1,25,27,34,92,101,106,123,125,126,127]:

Սինովիալ թաղանթի բորբոքային գործընթացը բնորոշվում է վենովաների լայնացումով և արյունալեցմամբ, արտերիոլների նեղացումով, մազանոթների թափանցելիության բարձրացումով, լեյկոցիտար ինֆիլտրացիայով և ֆիբրինի կուտակումով: Սինովիտը կարող է առաջանալ ԳԱ ցանկացած փուլում, ընդ որում, վաղ փուլը՝ համեմատած ուշ փուլերի՝ բնորոշվում է բորբոքային ռեակցիայի առավել արտահայտվածությամբ: Սահմանային փուլերում սինովիալ թաղանթում գերակշռում են սկլերոտիկ գործընթացները, ինչը հոդաճառում և սուրխոնդրալ ոսկրում դեգեներատիվ փոփոխությունների պրոգրեսի հետ մեկտեղ որոշում է հիվանդության կլինիկական ելքը [1,11, 12,101,106,123,152]:

Սինովիտի ճիշտ ժամանակին ախտորոշումը որոշում է բուժման արդյունավետությունը և նպաստում ԳԱ դանդաղեցմանը: ԳԱ պաթոգենետիկ գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հոդի ախտահարումն իրենից ներկայացնում է հոդաճառի, սինովիալ թաղանթի և սինովիալ հեղուկի միաժամանակյա ախտահարում: Վերոհիշյալը Պավլովան 1980թ-ին բնորոշել է որպես հոդի սինովիալ միջավայր: Նրա կարծիքով այս երեք բաղկացուցիչները կապված են միմյանց և մեկի ֆունկցիոնալ փոփոխությունները բերում են հոդում ախտաբանական գործընթացի զարգացմանը [1,90, 92,99,105,125]:

Հոդամակերեսների դեստրոկցիայի և սինովիալ հեղուկի կազմի փոփոխության պայմաններում խախտվում է յուբրիկացիոն ֆունկցիան: Պաթոգենեզում կարևոր է սինովիալ հեղուկի մածուցիկ և էլաստիկ հատկանիշների նվազեցումը, ինչը ուղղակիորեն կապված է հիալուրոնատի կոնցենտրացիայի և մոլեկուլար կշռի նվազեցման հետ [1,10,40,99,127]:

Այս ամենը բերում է աճառի զգայունության բարձրացմանը և վերջինիս վնասմանը: Այսպիսով վերոնշյալը փաստում է, որ ԳԱ բուժումը աետք է ներառի աճառի դեստրոկցիայի, սինովիտի և ոսկրի վերակառուցման դեմ ուղղաված միջոցառումներ [1,152]:

ՕՍ ամենատարածված տեղակայումը ծնկահողն է: ԱՄՌ-ում ԳԱ հանդիպում է 25 և բարձր տարիքով անձանց մոտ 13.9 և 65-ից բարձր տարիքում՝ 33.6% մոտ [50]: Բացի դեմոգրաֆիկ պատճառներից ՕՍ զարգացման համար որոշիչ են նաև, տարիքը, սեռը, ծնկահողի վնասվածքը և հավելյալ քաշը [33] :

Ծնկահողի վնասվածքը հանդիսանում է ՕՍ զարգացման ռիսկի գործոն: Սակայն դրա զարգացման, ինչպես նաև մահիկահատումներից հետո առաջացող մեխանիզմների մասին տվյալները աղքատիկ են: Ըստ հայտնի կարծիքի ԳԱ զարգացումը մահիկահատումներից հետո հանդիսանում է հոդի վնասվածքի և աճառային մակերեսների միջև շփման սթրեսի աճման արդյունք [27]:

Վնասված մահիկի հատվածների վիրաբուժական հեռացումից հետո նկատվում է ՕՍ զարգացման բարձր տոկոս: Կորելյացիոն կապը՝ հեռացված մահիկի և աճառային շերտի դեգեներացիայի միջև, ցույց է տալիս, որ որքան մեծ է հեռացված հատվածը, այնքան ավելի արագ է զարգանում ՕՍ: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ մահիկի վնասվածքները հանդիպում են միջին և երիտասարդ տարիքի անձանց մոտ մեկ երրորդի մոտ: Սակայն եթե մահիկի վնասվածքն ինքնին բերում է ՕՍ զարգացմանը, ապա մահիկահատումների զգալի մասը նույնպես ավարտվում են ՕՍ-ով: Այդ պատճառով անհրաժեշտ է ոչ միայն վնասվածքի ճշգրիտ ախտորոշում, այլ նաև համարժեք բուժման տակտիկա:

Այնուամենայնիվ, Multicenter Osteoarthritis Study (MOST) կոչվող հետազոտության արդյունքում ապացուցվել է, որ վնասված և վիրահատական միջամտության չեն-

թարկված մահիկների առկայության դեպքում 30 ամիս հետո երիտասարդ և միջին տարիքի անձանց մոտ նկատվել են ՕՍ ռենտգենաբանորեն հայտնաբերված երևոյթներ [48]: Johnson-ը և համահեղինակները ապացուցել են, որ հիվանդների տարիքը լավացման հարցում որոշիչ չէ [14]:

Fairbank-ը դեռ 1948 թ-ին հայտնել է, որ եթե մահիկը լրիվ կամ մասնակի հեռացված է, ապա զգալիորեն մեծանում է դեգեներացիայի զարգացման հավանականությունը: Մահիկի վնասվածքը կարող է բերել ՕՍ զարգացմանը, այն իր հերթին նպաստում է մահիկի սպոնտան վնասվածքի՝ դրա հյուսվածքի փխրունության պատճառով [14,56, 68,71,72,74,75]:

Չնայած այն փաստին, որ ՕՍ հանդիսանում է վաթսունն անց անձանց հոդերի ախտահարող գործընթաց, այնուամենայնիվ ներկայումս կան աշխատանքներ, որոնք ապացուցում են, որ ՕՍ կարող է առաջանալ նաև ավելի երիտասարդ անձանց մոտ, որոշակի պայմանների առկայության դեպքում: Մասնավորապես, մահիկահատումները, ինչպես լրիվ, այնպես էլ մասնակի, կամ մահիկների զանազան չբուժված պատովածքները բերում են հոդաճառի դեգեներատիվ փոփոխությունների զարգացման: Պարզվել է, որ հիվանդների ավելի քան 75%-ի մոտ առկա է ՕՍ այս կամ այն աստիճանը, ընդ որում այն զարգացել է մահիկի նախորդող վնասվածքից հետո: Այս տվյալները համահունչ էին նախկինում կատարված տարբեր հետազոտությունների հետ, ըստ որոնց ՕՍ հիվանդների 52–92%-ի մոտ առկա էին մահիկների զանազան վնասվածքներ: Այս փոփոխություններն էլ ավելի արտահայտված էին և ավելի արագ էին զարգանում, եթե առկա էր միջային մահիկի վնասվածք կամ էքստրուզիա: Cerejo-ն և համահեղինակները այս երևոյթի պատճառը համարում են ծնկահոդի միջային հատվածի գերծանրաբեռնվածությունը: Cicuttini-ն և համահեղինակները ցույց են տվել, որ աճառի հարաճող կորուստն ավելի արտահայտված է մասնակի մահիկահատման ենթարկված հիվանդների մոտ [18,126]:

Նմանատիպ հետազոտություններ կատարել էին Biswal-ը և մյուսները: Արդյունքում պարզվել է, որ մահիկների և առաջային խաչաձև կապանի վանսվածքներով հիվանդների մոտ երկու տարբա ժամանակահատվածում զարգանում է աճառի դեգեներացիա [18]:

Մեկ այլ հետազոտություն, որը կատարվել էր Felson-ի և համահեղինակների կողմից, մահիկների վնասվածքներից հետո նույնպես ցույց տվեց աճառային շերտի դեգեներացիա[18]:

Englund և համահեղինակների կողմից կատարված մահիկահատումների հեռավոր արդյունքների վերլուծումը ցույց տվեց, որ մահիկների պատովածքները հանդիսանում են ՕՍ զարգացման ահազնագ [18,31,38,41,58]:

Թե վնասված մահիկի պայմաններում, թե վիրահատված ծնկահոդում ՕՍ զարգացման հավանականությունը մեծանում է, սակայն մեծ նշանակություն ունի ինչպես վնասվածքի տեսակն ու վաղեմությունը, իիվանդի տարիքը, կոնստիտուցիոնալ վիճակը, այնպես էլ վիրահատական եղանակի ընտրությունը և հետագա վերականգնումը: Հաջողության հասնելու համար վիրաբուժին անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք կարևոր գործոններ: Դրանց ճիշտ համադրությունը և ընտրությունն էլ որոշում է հետագա արդյունքների բարելավումը:

Այսպիսով, ժամանակակից գործառության վերլուծությունը ցույց տվեց, որ միջային մահիկի վնասվածքներին վերաբերվող շատ հարցեր մինչև վերջ չեն պարզաբանված, առկա են թերի, իսկ երբեմն էլ իրար հակասող կարծիքներ և մոտեցումներ: Մասնավորապես, միջային մահիկի վնասվածքնի գոյություն ունեցող դասակարգումները գրեթե միշտ ոչ լիարժեք են բնորոշում այդ կարևոր կառուցի ֆունկցիոնալ և անատոմիական վիճակները՝ դրանով իսկ թերագնահատովում է ծնկահոդի՝ որպես ամբողջական համակարգի, կարգավիճակը:

Գրականության մեջ առկա են այս վնասվածների բուժման շատ եղանակներ, որոնցից մի մասն ունի պատմական նշանակություն (բաց մահիկահատումներ): Մնացած եղանակների օգտագործման դեպքում դիտվում են բուժման տարբեր հեռակա արդյունքներ, մասնավորապես մինչև վերջ չի լուսաբանված արթրոսկոպիկ տարբեր մահիկահատումների և հետվիրահատական գոնարթրոզի զարգացման միջև եղած կապերը: Մեր կարծիքով այդ փաստը պայմանավորված է արթրոսկոպիկ բուժման տարբերակիչ մոտեցումների բացակայությամբ կամ էլ եղած տակտիկաների որոշակի թերություններով:

Անհրաժեշտություն է առաջանում ստեղծել այնպիսի մոտեցումներ, որոնք հաշվի կառնեն վնասվածքի տեղակայումը ըստ սեկտորների և անոթավորման լիարժեքության գոտիների, ինչպես նաև կոնկրետ վնասվածքի տեսակի, ծավալի և ծանրության աստիճանի: Բացի այդ մահիկահատման ծավալի կամ մահիկի վերականգնման արթուրուկութիկ եղանակի ընտրությունը պետք է կատարել, նախապես հաշվի առնելով, թե այդ վիրահատությունից հետո ինչպիսի կենսամեխանիկական փոփոխություններ կարող են առաջանալ ծնկահորում, ինչպես կփոխվի վիրահատված մահիկի անատոմիան և ֆունկցիան, արդյոք կզարգանա հոդաճառի դեգեներատիվ փոփոխություններ, թե ոչ:

Բացի այդ նկարագրված մահիկահատումները, որոնք իրագործվում են արթուրուկութիկ եղանակով, հիմնականում ոչ խնայող են (մասնակի, սուբտոտալ, տոտալ), այսինքն բացակայում է օրգանպահպանողական սկզբունքը, և լրջորեն խախտվում է հոդի նորմալ ամատոմիան: Մեր կարծիքով սա նույնպես հետագա գոնարթողի զարգացման կարևոր պատճառ է: Անհրաժեշտություն է առաջանում ստեղծել Էլ ավելի նվազ վնասվածքային մահիկահատման եղանակներ, որոնք թույլ կտան առավելագույնս պահպանել մահիկի շրջանաձև ամբողջականությունը:

Այսպիսով վերոհիշյալ հանգամանքներով է պայմանավորված ընտրված թեմայի արդիականությունը: Մեր կարծիքով առաջադրված հարցերի լուծումը թույլ կտա նվազեցնել հետվիրահատական գոնարթողի զարգացման հաճախականությունը, դրանով իսկ բարելավել բուժման վերջնական արդյունքները:

Այդ և մի շարք այլ հարցերին են նվիրված այս աշխատանքի հաջորդ գլուխները:

**ԳԼՈՒԽ 2.**  
**ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

**2.1. Հիվանդների ընդհանուր բնութագիրը**

Մեր հսկողության տակ գտնվել են ծնկահոդի միջային մահիկի տարբեր բնույթի վնասվածքներ ունեցող 287 հիվանդներ, որոնք հետազոտվել և բուժվել են ՎՕԳԿ-ում 2007-2015 թվականների ընթացքում:

Նրանցից 193 (67.2%)-ը արական, իսկ 94 (32.8%)-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ էին: Տղամարդկանց և կանաց հարաբերությունը կազմել է 2:1:

Հիվանդների տարիքը տատանվում էր 16-ից 50 տարեկանի սահմաններում: Այուսակ 1 ներկայացված են հիվանդների տվյալները ըստ սեռի և տարիքային խմբերի:

**Աղյուսակ 1.**

**Հիվանդների բնութագիրը ըստ սեռի և տարիքի**

Սեռ	Տարիքային խմբեր	16-ից 30տ	31-ից 40 տ.	41-ից 50 տ.	Ընդամենը
Տղամարդ		101	56	36	193 (67,2%)
Կին		48	27	19	94 (32,8%)
	Ընդամենը	149(51,9%)	83(28,9%)	55(19,2%)	287 (100%)

Ինչպես երևում է այուսակից, հիվանդների կեսից ավելին՝ 149 (51.9%) հոգի գտնվել են 16-30 տ. տարիքային խմբում: Ամենաքիչ քանակ դիտվել է 41-ից 50 տ. տարիքային խմբում՝ 55 (19.2%): 31-ից 40 տ. խմբում հիվանդների քանակը կազմել է 83 (28,9%) հոգի: Հիվանդների առավել մեծ խումբ են կազմել 16-ից 30 տարեկան արական սեռի անձիք՝ 101 հիվանդ:


Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ծնկահոդի մահիկների վնասվածքներն առավել հաճախ հանդիպում են երիտասարդ տարիքային խմբերում (16-ից 40 տարեկան): Ըստ մեր տվյալների այդ տարիքում հիվանդների քանակը կազմել է 232 (80,8%)

հոգի, ընդ որում, նրանցից 157-ը եղել են տղամարդ, իսկ 75-ը՝ կին: Մեր կարծիքով, դա պայմանավորված է այս խմբերի անհատների ավելի բարձր ֆիզիկական, աշխատանքային կամ սպորտային ակտիվությամբ:

287 հիվանդից 216 (75,3%) աշխատում էին: Նրանցից 121-ը կատարում էր ֆիզիկական, իսկ 95-ը՝ մտավոր աշխատանք: Առաջին դեպքում առավել հաճախ հանդիպում էին շինարարներ, բանվորներ, մեքենա նորոգողներ, վարորդներ, իսկ մտավոր աշխատանք կատարողների շրջանում՝ գործարարներ, օֆիսային աշխատողներ, գիտնականներ, ուսանողներ և այլն: Առանձնահատուկ պետք է նշել, որ 10 հիվանդ պրոֆեսիոնալ պարողներ էին:

Հիվանդներից 52 (18.1%)-ը պրոֆեսիոնալ մարզիկներ էին, իսկ 98 (34.1%)-ը՝ մասնագիտությանը զուգահեռ, պարբերաբար զբաղվում էին տարբեր սպորտաձևերով: Երկու դեպքում էլ հիմնական սպորտաձևներն էին՝ ֆուտբոլ, բասկետբոլ, լեռնադահուկային սպորտ, ալպինիզմ, ըմբշամարտ, ծանրամարտ, վազք, բոդիբիլիթինգ և այլն:

Նկար 1-ում ներկայացված են տրավմատիզմի տեսակները բոլոր 287 հիվանդների շրջանում:



**Նկար 1. Տրավմատիզմի տեսակները 287 հիվանդների շրջանում**

Ինչպես երևում է նկարից, հիվանդների կեսից ավելին վնասվածքը ստացել էին սպորտային պարապմունքների կամ էլ որևէ սպորտաձևով զբաղվելու ժամանակ (150 հիվանդ՝ 52.3%): Մնացած դեպքերում դիտվել էին կենցաղային, արտադրական կամ ճանապարհատրանսպորտային տրավմատիզմի տեսակներ:

Անամնեզում ստորին վերջույթի տարբեր ուսկրերի նախկինում տարած կոտրվածքներ նշում էին 33 (11.5%) հիվանդ: Ընդ որում, առավել հաճախ դիտվել էին մեծ ոլոքի պրոքսիմալ ծայրի ներհոդային կոտրվածքներ՝ 16 դեպք: Այս հիվանդները բուժվել էին այլ հիվանդանոցներում կոնսերվատիվ կամ վիրահատական եղանակով, ընդ որում, մահիկի ռեգելեցիա նրանց մոտ չէր կատարվել: 6 հիվանդ նշում էին սրունքի ոսկրերի դիաֆիզար, 4-ական հիվանդ՝ պճեղների և ազդրոսկրի դիաֆիզար և 3 հիվանդ՝ ոտնաթաթի ոսկրերի նախկինում տարված կոտրվածքներ:

Այլ 7 հիվանդի մոտ հետազոտման ժամանակ հայտնաբերվել է ծնկահոդերի վալգուսային դեֆորմացիա (genu valgum) մանկական հասակում տարած ռախիտի հետևանքով:


Մեր կարծիքով ստորին վերջույթների ոսկրերի վերը նշված կոտրվածքների հետևանքները կամ հիվանդությունները կարող էին փոփոխել կենսամեխանիկական փոխհարաբերությունները ծնկահոդում, դրանով իսկ նպաստելով մահիկների հետագա վնասմանը, կամ էլ մահիկները կարող էին վնասվել հենց այդ կոտրվածքների ժամանակ (ոլոքային հարթակի կոտրվածքներ):

Միջային մահիկի վնասվածք ստանալու հանգամանքները վերլուծելիս պարզվեց, որ այն առաջացել է հիմնականում վալգուսային ռոտացիոն անուղղակի մեխանիզմով՝ ֆիքսված ոտնաթաթի պայմաններում իրանի հարկադրական պտույտից կամ էլ ծնկահոդի դրսային մակերեսին ուժի ազդեցության հետևանքով վալգուսային ռոտացիոն հարկադրական շարժումից:

Ծնկահոդի թարմ վնասվածքով (Վաղեմությունը 1-ից 10 օր) մեզ դիմել էին ընդամենը 35 (12.2%) հիվանդ: Մնացած 252 (87.8%) դեպքերում հիվանդները կլինիկա էին ընդունվել ավելի ուշ ժամկետներում մահիկի հնացած վնասվածքներով: Նկար 2-ում ներկայացված են հիվանդների տվյալները կախված վնասվածքի վաղեմությունից:

Ինչպես երևում է դիագրամից հիվանդների ճնշող մեծամասնությունը՝ 142 հոգի (49.5%), մեզ էր դիմել վնասվածքը ստանալուց հետո 3-ից 6 ամսվա ընթացքում: 66 հիվանդի (23%) մոտ վնասվածքի վաղեմությունը կազմել էր 6 ամսից մինչև 1 տարի և 35 (15.3%)-ի մոտ՝ 1-2 տարի:

Միջային մահիկի հնացած վնասվածքներ ունեցող 252 հիվանդների շրջանում հատուկ ուշադրություն է դարձվել այն անամնեստիկ տվյալներին, որոնք վերաբերվել են այլ բժշկական հաստատություններում ծնկահորի սկզբնական տրավմայի ախտորոշման և բուժման հարցերին:



**Նկար 2. Հիվանդների քանակը կախված վնասվածքի վաղեմությունից  
(հնացած վնասվածքներ - 252 դեպք)**

Նշված վերլուծությունը նպատակ է հետապնդել լուսաբանել այն հնարավոր սխալները կամ թերությունները, որոնք կարող էին պաճառ հանդիսանալ մահիկի վնասվածքի ոչ ճշտգրիտ ախտորոշմանը և համարժեք բուժման ուշացմանը, դրանով իսկ նպաստելով որոշ բարդությունների, մասնավորապես գոնարթորողի զարգացմանը:

Այսպես, 27 (10.7%) հիվանդներ՝ առաջնային վնասվածքը ստանալուց հետո, բժշկի չէին դիմել և զբաղվել էին ինքնաբուժությամբ: 42 (16.7%) դեպքում հիվանդները

«բուժվել» էին հեքիմների կողմից, ընդ որում կատարվել էին անթույլատրելի ուժային «ներուղումներ», դրվել էին տարբեր հեքիմական կապեր:

Մնացած 183 (72.6%) հիվանդները բուժվել էին այլ բժշկական հաստատություններում հիմնականում ամբողատոր կարգով (167 դեպք): Վերոհիշյալ 16 հիվանդները, որոնց մոտ առկա էին մեծ ոլոքի պրոքսիմալ հատվածի ներհոդային կոտրվածքներ, բուժվել էին ստացիոնար կարգով:

Անամեստիկ տվյալների վերլուծումը ցույց տվեց, որ 183 հիվանդից 102 (55.7%) մոտ սկզբնական շրջաններում միջային մահիկի վնասվածքը ընդհանրապես չէր ախտորոշվել, քանի որ չէին կատարվել հոդի գերձայնային կամ ՄՌԾ հետազոտությունները: Նրանց մոտ ախտորոշվել էին ծնկահոդի կապանների գերձգվածություն, սալշարդ կամ հեմարթրոզ: Նախնական բուժմումն ավարտելուց հետո (մոտ 1-1.5 ամիս) հիվանդները չէին հետազոտվել մահիկների և/կամ կապանների վնասվածքները հայտնաբերելու նպատակով, այսինքն չէին ստուգվել ծնկահոդի տարրական համընդհանուր ընդունված թեստերը (ներառյալ սթրես թեստերը): Այս փուլում նույնպես չէին կատարվել վերը նշված սարքավորումներով հետազոտությունները:

Ծնկահոդի թարմ վնասվածքի նախնական բուժման ժամանակ թույլ էին տրվել որոշ բժշկական սխալներ կամ բացթողմուներ:

Այսպես, 62 (33.9%) հիվանդների մոտ բուժումը եղել էր ոչ լիարժեք՝ անշարժացման բացակայություն, շատ կարճատև անշարժացում (գիպսային կամ ֆիքսատորով), վնասված վերջույթի վաղ ծանրաբեռնում, հոդի վաղ պունկցիա և հորմոնների ներարկում, ցուցված դեպքերում պունկցիայի բացակայություն և այլն:

Մեծ ոլոքի պրոքսիմալ ծայրի ներհոդային կոտրվածքների կապակցությամբ վիրահատված հիվանդների մոտ (8 դեպք) օստեոսինթեզի ժամանակ մահիկահատումներ չէին կատարվել:

Հիմնական բուժումն ավարտելուց հետո հիվանդների մոտ կեսի (91 դեպք - 49.7%) մոտ բացակայել կամ թերի էին եղել վերականգնողական միջոցառումները:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ծնկահոդի նախնական վնասվածքի կապակցությամբ համարժեք բուժում էին ստացել 252-ից 92 հիվանդ, որը կազմել էր ընդամենը

36.5%: Մնացած 160 դեպքերում (63.5%) թույլ էին տրվել բուժման այս կամ այն սխալ-ներ, կամ բուժումը լրիվ բացակայել էր:

Անամնեստիկ տվյալների հիման վրա մեր կողմից մշակվել են ծնկահողի թարմ վնասվածքների ախտորոշման և բուժման որոշ ուղեցույցներ, որոնց իրականացումը մեր կարծիքով կնվազեցնի հնարավոր հեռակա բարդությունների, մասնավորապես գոնարթրոզի տեսակարար կշիռը:

### **Ախտորոշիչ ուղեցույցներ.**

- ծնկահողի հնարավորինս վաղ գերձայնային, մինի արթրոսկոպիկ կամ ՄՌԸ հետազոտումներ,
- եթե դրանք չեն կատարվել, ապա պետք է իրականացվեն գոնե թարմ վնասվածքի բուժումն ավարտելուց հետո (1-1.5 ամիս),
- հեմարթրոզը բուժելուց հետո ծնկահողը պարտադիր պետք է զննվի մահիկների և/կամ կապանների վնասվածքն ախտորոշելու տեսանկյունից (տվյալ վնասվածքներին բնորոշ թեստեր):

### **Բուժական ուղեցույցներ.**

- ծնկահողի թարմ վնասվածքի (հեմարթրոզի) դեպքում վերջույթի պարտադիր անշարժացում (գիպսային կապերով կամ հատուկ ֆիքսատորներով) ամենաքիչը 2-3 շաբաթ ժամկետով,
- ցուցված դեպքերում ծնկահողի պունկցիա (վնասվածքը ստանալուց 2-3 օր հետո),
- դեղորայքային բուժում (ցավազրկողներ, ոչ ստերոիդ հակաբորբոքիչներ),
- հորմոնների ներփակումների բացառում,
- բոլոր դեպքերում համարժեք ֆիզոթերապևտիկ և վերականգնողական բուժում:  
Այսպիսով ծնկահողի թարմ վնասվածքների դեպքում վերոհիշյալ ախտորոշիչ և բուժական մոտեցումնը, մեր կարծիքով, թույլ կտան միջային մահիկի անոթավորված գոտու պատովածքների դեպքում կոնսերվատիվ եղանակով վերականգնել դրա ամբողջականությունը, իսկ այլ տեղակայումների ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ հետագա վիրահատական բուժման արդյունքները բարելավելու նպատակով:

## **2.2. Հետազոտման եղանակները**

Ծնկահոդի միջային մահիկի վնասվածքներ ունեցող հիվանդների շրջանում ճշգրիտ ախտորոշման, ինչպես նաև հետվիրահատական տարբեր ժամկետներում անատոմիական և ֆունկցիոնալ արդյունքները գնահատելու նպատակով մեր կողմից օգտագործվել են կլինիկական, ռենտգենաբանական, սոնոգրաֆիկ, մինի-արթրոսկոպիկ, ՄՌՇ (միջուկառեզոնանսային շերտագրում) հետազոտման եղանակներ և ծնկահոդի ներվիրահատականն ստուգում: Ստացված թվային տվյալները մշակվել են վիճակագրական եղանակներով:

### **2.2.1. Կլինիկական հետազոտում**

Այս հետազոտման ժամանակ ուսումնասիրվել են հիվանդի գանգատները՝ ցավային համախտանիշի առկայությունը, տեղակայումը, ինտենսիվությունը, կապը ծանրաբեռնումների, խոնավ եղանակի հետ, երկարատևությունը, դեղորայքային միջոցների նկատմամբ հիվանդի զգայունությունը և ցավի հետ կապված այլ հարցեր:

Ուշադրություն է դարձվել այն գանգատներին, որոնք կապված են ծնկահոդի և ամբողջ ստորին վերջույթի ֆունկցիոնալ վիճակի հետ: Դրանց շարքին են դասվում ախտահարված հոդում շարժումների սահմանափակումը, քայլելու, կանգնելու, նստելու, աստիճաններով բարձրանալու և իջնելու ֆունկցիաները, կաղության առկայությունը, դրա ինտենսիվությունը, կապը ծանրաբեռնումների հետ, հենման օգնող միջոցների (ձեռնափայտ, հենակ և այլն) օգտագործումը և այլն:

Կատարվել է անամնեստիկ տվյալների հավաքում և վերլուծություն: Պարզաբանվել է ծնկահոդի վնասվածքի առկայության փաստը, վաղեմությունը, հանգամանքները, այդ կապակցությամբ ստացված կոնսերվատիվ կամ վիրահատական բուժման առկայությունը, եղանակները, վերականգնողական բուժումը, անաշխատունակության ժամկետները, հաշմանդամության առկայությունը, մասնագիտության փոփոխությունը, սպորտից հրաժարվելը և նմանատիպ այլ հարցեր:

Կյանքի անամնեզը հավաքելուց ուշադրություն է դարձվել սոմատիկ, հորմոնալ և այլ հիվանդությունների առկայությանը, տարբեր դեղորայքային միջոցների (այդ թվում

հորմոնալ պրեպարատների) օգտագործմանը, այլ վնասվածքների, հատկապես ախտահարված հոդը կազմող ուսկրերի կոտրվածքների առկայությանը:

Ախտահարված ծնկահոդի արտաքին զննման ժամանակ որոշվել են դրա ուրվագծերը, հոդի չափերը, ծփանքի և ծնկուկրի լողացման ախտանիշները, վերին բունցի վիճակը: Հոդի կայունությունը ստուգվել է «սթրես-թեստերի» միջոցով: Ուսումնասիրվել են մահիկների վնասման մասին վկայող, մասնավորապես Շտեյմանի և ՄակՄարեի ախտանիշները:

Անկյունաչափի միջոցով որոշվել է շարժումների ծավալն ախտահարված ծնկահոդում: Նորմալ ծնկահոդում այն կազմում է 150-155°: Ազդրի մկանների հիպոտրոֆիայի և ծնկահոդի ծավալի (չափերի) մեծացման աստիճանները որոշելու համար կատարվել է այդ սեզմենտմների շրջագծերի չափումներ սանտիմետրով: Անհրաժեշտ է նշել, որ արտաքին զննման և չափումների ժամանակ ստացված բոլոր տվյալները համեմատվել են առողջ կողմի տվյալների հետ:

Ախտահարված հոդի գննումը վերոհիշյալ եղանակներով իրականացվել է ինչպես ընդունված հիվանդների շրջանում (մինչ վիրահատական բուժումը), այնպես էլ վիրահատությունից 3 ամիս, 6 ամիս, 1 և ավելի տարիներ հետո բուժման հեռակա արդյունքները գնահատելիս:

## 2.2.2. Ճառագայթային հետազոտություն

**ՈԵՆՊԳԵՆԱԲԱՆԱԿԱՆ ԻԵՎԱԳՈՎՐՈՒԹՅՈՒՆ:** Այս հետազոտությունը կատարվել է համընդհանուր եղանակներով: Իրականացվել է զուգ ծնկահոդերի նկարահանում առաջահետին և կողմնային, իսկ որոշ դեպքերում նաև աքսիալ պրոյեկցիաներով՝ 1 մետր հեռավորությունից: Հոդի անկայունությունը որոշելու համար երբեմն կատարվել են նաև «սթրես» ռենտգենյան նկարներ:

Ռենտգենյան վերլուծման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել հոդաճեղքի նեղացմանը, դրա չափերին, լայնացմանը, օստեոֆիտների, սուրխոնդրալ սկլերոզի, կիստոզ կամ նեկրոտիկ օջախների առկայությանը: Հեղուկի առկայությունը հոդում որոշվել է ըստ վերին բունցի մթեցման և հոդի ուրվագծերի մեծացման աստիճանների:

Ունտգենյան հետազոտությունը կատարվել է բոլոր հիվանդների շրջանում, ինչպես նախավիրահատական, այնպես էլ հետվիրահատական շրջաններում՝ վերոհիշյալ ժամկետներում: Վերջին դեպքում այն հնարավորություն է ընձեռնել դինամիկայում հայտնաբերել հնարավոր գոնարթրոզի նշանները, գնահատել հիվանդության փուլը, կատարել համապատասխան դեղորայքային շտկումներ և դրա հետ կապված այլ միջոցառումներ:

Ունտգենաբանական հետազոտությունն իրականացվել է ստացիոնար PICER RadView (65) (ԱՄՆ) և Rym 20M (Ռուսաստան) ունտգենյան սարքերով:

**Գերձայնային հետազոտություն:** Ծնկահոդերի գերձայնային հետազոտումն (ԳՁՀ) իրականացվել է բոլոր հիվանդների շրջանում նախավիրահատական փուլում և հիվանդների մի մասի մոտ (ըստ ցուցումների) հետվիրահատական տարբեր ժամկետներում: Վերջին դեպքում հետազոտումը կատարվել է բուժման արդյունքները գնահատելու նպատակով:

Հետազոտման ժամանակ հիվանդը պառկում է մեջքին՝ ծնկահոդի  $45^{\circ}$  ծալման պայմաններում: Ծնկափոսի հետազոտումը կատարվել է որովայնի վրա պառկած դիրքում՝ ծնկահոդի լրիվ տարածման պայմաններում:

Հիմնականում օգտագործվել են սկանավորման երկայնական մուտքեր, իսկ ախտորոշման ճշտման նպատակով երբեմն օգտագործվել է միջածիգ մուտք:

Հետազոտությունը հնարավորություն է ընձեռնում գնահատել հոդի և հարիդային շրջանների փափուկ հյուսվածքների վիճակը՝ ներհոդային ազատ հեղուկի առկայությունը, էխոլկառուցվածքը, մոտավոր քանակը, սինովիալ թաղանթի, մահիկների, կապանների, հոդաճառի և ծնկափոսի վիճակները: Միջային մահիկի հետազոտումը կատարվել է միջային երկայնական մուտքով, ընդ որում տվիչը հերթականությամբ տեղադրվել է մահիկի մարմնի առաջային, ապա հետին եղյուրների պրոյեկցիայով: Գնահատվել է վնասված գոտու տեղակայումը, մոտավոր չափերը, էխոգենությունը, էքստրովիայի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վնասվածքի մոտակավաղեմությունը:

ԳԶՀ ժամանակ օգտագործվել են Toshiba Xario -200 (Ճապոնիա) ստացիոնար և SonoScape A5 (Չինաստան) պորտատիվ գերձայն սկաները՝ փոփոխական 7,5-14 ՄՀց հաճախականության գծային տվյալներով:

**Միջուկառեզոնանսային շերտագրում (ՄՌԾ):** ՄՌ շերտագրումը կատարվել է նախավիրահատական շրջանում 145 (50,5%) հիվանդի մոտ: Այս հետազոտությունը թույլ է տալիս ուսումնասիրել ծնկահողի փափուկիյուսվածքային կառուցները, մասնաւորապես մահիկների տարբեր տեղակայման և ծնի վնասվածքները, մենիսցեալ կիստաների առկայությունը, ինչպես նաև հայտնաբերել սինովիալ թաղանթի գերաճը, ազատ հեղուկի առկայությունը, քանակը, որակը և այլն: Ստուգվել է նաև հոդի կայունությունն ապահովվող կապանների վիճակը, դրանց վնասվածքների առկայությունը, տեղակայումը, ծանրության աստիճանը և այլն:

Հոդը կազմող ուկրածայրերի հետազոտումը հնարավորություն է տվել հայտնաբերել գոնարթրոզին բնորոշ նշաններ՝ հոդաճառի փոփոխություններ, ազատ մարմնիկներ, սուբխոնդրալ ուկրի սկլերոզ, կիստոզ կամ նեկրոտիկ օջախներ և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ՄՌԾ հետազոտմամբ գոնարթրոզի նշանները հայտնաբերվում են հիվանդության վաղ փուլերում, երբ հոդի ռենտգենարանական պատկերը դեռ փոփոխված չէ: Այս տեսանկյունից ՄՌԾ հետազոտումն ավելի տեղեկատվական է և նախընտրելի:

ՄՌԾ հետազոտումն իրականացվել է Siemens Magnetom Symphony (1,5 tesla) միջուկությունանսային տոմոգրաֆիկ սարքով (Գերմանիա): Օգտագործվել են ծնկահողի ստանդարտ 2 հիմնական և 2 լրացուցիչ - T2sag., T1 sag., T1 cor., T2 tra և PD cor.strip, T1 sag.FS արտածումներ:

### 2.2.3. Ինվազիվ հետազոտություն

**Մինի արթրոսկոպիկ հերպազոպություն:** Տվյալ հետազոտությունը կատարվել է նպատակ ունենալով նախապես ենթադրվող, բայց այլ եղանակներով չհաստատված միջային կամ դրսային մահիկների վնասվածքների ախտորոշման հաստատման, ինչպես նաև այդ վնասվածքի տեսակի պարզաբանման համար: Ուղեկցող գոնարթրոզի

դեպքում եղանակը թույլ է տալիս տեսանելի դարձնել հոդաճառը, վերջինիս դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխությունները, ախտահարման մակերեսի մեծությունը:

Արթրոսկոպիայի այս պարզեցված տարբերակը մեր կողմից օգտագործվել է նախավիրահատական շրջանում 52 (18,1%) հիվանդի մոտ:

Արթրոսկոպիկ կատարման տեխնիկան հետևյալն է: Տեղային անզգայացման պայմաններում (Sol.Lidocaini 1% - 2 կամ 3 մլ) սրածայր (N11) նշտարով կատարվում է մոտ 2-2,5 մմ կտրվածք-անցք, որտեղից դեպի հոդախոռոչ մտցվում է բութ կոնաձև տրոակարը: Միջային մահիկի վնասվածքի կասկածի դեպքում պորտալը ընտրվում է ոչ թե ստանդարտ եղանակով, այլ այն հատվածում, որը թույլ կտա առավելագույնս տեսանելի դարձնել մահիկի բոլոր բաժինները, ինչպես նաև հոդի այդ հատվածի այլ կառուցվածքները: Տելեսկոպը՝ տրոակարի միջով, հոդախոռոչ է մտցվում ծնկահողի  $60^{\circ}$ -ի տակ ծալված դիրքում, ծնկոսկրի ստորին բևեռից 1 սմ ներքև և սեփական կապանից 1 սմ միջայնորեն:

Այս եղանակի առավելություններն են՝

- տեխնիկայի պարզություն, որը թույլ է տալիս այն կիրառել ամբողատոր պայմաններում,
  - ընդհանուր անզգայացման բացակայություն,
  - նվազ վնասվածքային է,
  - միջամտության կարճ տևողություն,
  - մահիկների և դրանց վնասվածքների իրական տեսանելիություն,
  - եղանակը՝ համեմատած ՄՌՇ-ն հետ, էժան է մոտ 2-2,5 անգամ:
- Եղանակի թերությունները շատ չեն: Դրանց շարքին են դասվում՝
- այս եղանակը՝ համեմատած ՄՌՇ-ն հետ, ինվազիվ է,
  - բացի արթրոսկոպից պահանջվում են լրացուցիչ հարմարանքներ՝ մինչ տելեսկոպներ իրենց օժանդակ գործիքներով (տրոակարներով):

Հետազոտման այս եղանակի ժամանակ մեր կողմից օգտագործվել է KARL STORZ ֆիրմայի (Գերմանիա) արթրոսկոպ՝ 1,0 և 2 մմ տրամագիծ և 6,5 ու 9,5 սմ աշխատանքային երկարություն ունեցող տելեսկոպներ (նկար 3):



### **Նկար 3. Մինի արթրոսկոպիայի ժամանակ օգտագործվող տարբեր չափերի տելեսկոպներ և տրոակարներ**

**Ծնկահողի ներվիրահաբական սպուզում (ուսիզիա):** Ախտահարված ծնկահողի ներվիրահատական ստուգումը կատարվել է բոլոր հիվանդների մոտ, արթրոսկոպիկ վիրահատության շրջանակներում: Այն հանդիսացել է վիրահատության առաջին ախտորոշիչ փուլը և հնարավորություն է ընձեռնել վերջնականապես ճշգրտել մահիկի վնասվածքը, բնույթը, տեղակայումը, հողի մյուս կառուցվածքների վիճակը, դրանով իսկ ընտրել վիրահատության կոնկրետ տարբերակը տվյալ հիվանդի մոտ: Ստացված տվյալների, ինչպես նաև վերոհիշյալ այլ հետազոտությունների հիման վրա, մեր կողմից մշակվել է ծնկահողի միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգում, որի մասին խոսքը կզնա հաջորդ գլուխներում:

Վիրահատական բուժման հեռակա արդյունքները գնահատվել են մեր կողմից ծնկափոխված և ծնկահողի համար հարմարեցված 4 բալանց սանդղակով: Ըստ այդ սանդղակի «գերազանց» արդյունք են համարվել այն դեպքերը, երբ հիվանդները գանգատներ չեն ունեցել, բացակայել են ցավային զգացողությունները, շարժումների սահմանափակումները, կաղությունը: Ունտգենաբանական ԳԶՀ և ՄՌՇ հետազոտություններով (եթե վերջինս կատարվել է) ծնկահողի կողմից որևէ ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:

Հիվանդների ֆիզիկական ակտիվությունը լրիվ վերականգնվել է, նրանք շարունակել են իրենց մասնագիտական և/կամ սպորտային գործունեությունը և գոհ են եղել կատարված վիրահատական արդյունքից:

«Լավ» արդյունքի դեպքում հիվանդները գանգատվել են ծնկահողի շրջանի անշան ցավերից, որոնք հիմնականում առաջանում էին ֆիզիկական ծանրաբեռնումների

ժամանակ, ընդունում ցավերն անհետանում էին հանգստի կամ ցավազրկող միջոցի ընդունումից հետո:

Ծնկահոդում շարժումների ծավալը համապատասխանել է նորմային, կամ առկա է եղել  $10^{\circ}$ - $20^{\circ}$  սահմանափակում:

Քայլելու ժամանակ կաղությունը բացակայել է, հիվանդները չեն օգտվել հենման օգնող միջոցներից (ձեռնափայտ, հենակ և այլն):

Ունտգենաբանորեն և գերձայնային հետազոտություններով վիրահատված հոդում որևէ ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել: ՄՌԸ հետազոտմամբ երբեմն դիտվել է սուբխոնդրալ ոսկրի չափավոր սկլերոզ, ազդրոսկրի միջային կոճի աճառային մակերեսի խոնդրոմալյացիա:

Հիվանդները հիմնականում շարունակել են իրենց մասնագիտական և/կամ սպորտային գործունեությունը և գոհ են եղել կատարված միջամտության արդյունքից:

«Բավարար» ելքերի դեպքում հիվանդները գանգատվել են ծնկահոդի չափավոր ցավային զգացողություններից, որոնք եղել են ինչպես «մեկնարկային», այնպես էլ կապված ֆիզիկական, նույնիսկ աննշան ծանրաբեռնումների հետ: Ցավերը դժվարությամբ են վերացել՝ հիմնականում ցավազրկող միջոցների օգտագործման դեպքում:

Շարժումների ծավալը ծնկահոդում եղել է զգալի սահմանափակ և կազմել է  $40^{\circ}$  ից  $60^{\circ}$ : Այս հիվանդների շրջանում դիտվել է աննշան կամ չափավոր կաղություն, որի պատճառով նրանց մի մասը քայլելուց օգտվել է ձեռնափայտից:

Ունտգենաբանորեն հայտնաբերվել են հոդաճեղքի նեղացում 3-5 մմ սահմաններում, սուբխոնդրալ չափավոր սկլերոզ, երբեմն եզրային օստեոֆիտների առկայություն: ԳԶՀ դիտարկվել է միջային մահիկի դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխություններ: ՄՌԸ հետազոտման ժամանակ (եթե այն կատարվել է) նկատվել են հոդաճառի, մահիկների զգալի դեգեներատիվ-դիստրոֆիկ ծևափոխություններ, սուբխոնդրալ սկլերոզ և կիստոզ օջախներ:

Հիվանդները նշել են ֆիզիկական և մասնագիտական (նաև սպորտային) ակտիվության զգալի սահմանափակումներ, որի հետևանքով նրանց մի մասը փոխել է աշխատանքի բնույթը կամ իրաժարվել տվյալ սպորտածնից:

Այս խմբի հիվանդների մեծ մասը դժգոհ է եղել կատարված վիրահատական արդյունքներից:

«Վատ» ելքերի դեպքում հիվանդները գանգատվել են արտահայտված և հաստատուն, ծանրաբեռնումների հետ չկապված ցավերից: Ցավերը դժվարությամբ են վերացել ցավազրկող ոչ ստերոիդ հակաբորբոքիչ դեղամիջոցներից, ֆիզիոթերապևտիկ միջոցառումներից կամ ներհոդային արգելափակումներից: Այս հիվանդների մի մասը մեկ կամ մի քանի անգամ հոսախտալացվել է ստացիոնար բուժում ստանալու նպատակով: Հիվանդների մի մասը նշել է նաև սինովիտ, որի կապակցությամբ կատարվել են ծնկահոդի պունկցիաներ:

Շարժումների ծավալը ծնկահոդում եղել է զգայի սահմանափակված՝ մինչև 100° և ավելի, իսկ հազվագյուտ դեպքերում դրանք բացակայել են (կոնտրակտուրա):

Հիվանդներն աշխատել են շատ չքայլել, իսկ քայլելուց առկա է եղել զգայի հաստատուն կաղություն, որի կապակցությամբ նրանք միշտ օգտագործել են օգնող միջոցներ՝ ձեռնափայտ կամ հենակներ:

Ունտգենաբանորեն հայտնաբերվել է հոդաճեղքի զգայի նեղացում, երբեմն մասնակի օբյիւտերացիա, սուբխոնդրալ արտահայտված սկլերոզ, պորոզ, կիստոզ օջախներ, եզրային օստեոֆիտներ, հոդամակերեսների տձևություն, հոդի վարուային դեֆորմացիա: Անհրաժեշտ է նշել, որ այս խմբի մոտ ունտգենաբանական նշաններն այնքան ցայտուն են եղել, որ կարիք չի եղել կատարել լրացուցիչ գերձայնային կամ այլ հետազոտություններ:

Հիվանդների մի մասի մոտ արձանագրվել է հաշմանդամություն կամ Էլ նրանք հրաժարվել են իրենց հիմնական մասնագիտությունից կամ սպորտային գործունեությունից:

### 2.3. Բուժման եղանակները


Մեր հսկողության տակ գնտվող բոլոր 287 հիվանդները վիրահատվել են արթրոսկոպիկ եղանակով ողնուղեղային կամ կոմբինացված ցավազրկման պայմաններում: Ըստ ընտրված վիրահատական եղանակի հիվանդները բաժանվել են երկու՝ հիմնական և սոուգիչ խմբերի:

Առաջին հիմնական խմբում ընդգրկվել են 202 (70,4%) հիվանդ, որոնց շրջանում օգտագործվել է մեր կողմից առաջարկված համալիր բուժման տարբերակիչ տակտիկա, որի հիմքը կազմել են արթրոսկոպիկ եղանակի մի քանի տարբերակներ:

Մնացած 85 (29,6%) հիվանդները ներառվել են երկրորդ ստուգիչ խմբում, որտեղ կիրառվել են արթրոսկոպիկ բուժման համընդհանուր մոտեցումներ:

Առաջին խմբում (202 հիվանդ) իրականացվել են հետևյալ միջամտություններ՝

- միջային մահիկի մոդելավորող ռեզեկցիա՝ 120 (59,4 %) հիվանդ,
- մահիկի հյուսվածքի վերականգնում (կարում)՝ 38 (18,8%) հիվանդ,
- մահիկահոդաշապկային վերականգնում (կարում)՝ 27 (13,4%) հիվանդ,
- մահիկի մասնակի (պարցիալ) ռեզեկցիա՝ 17 (8,4%) հիվանդ (Նկար 4) :



**Նկար 4. Հիվանդների առաջին խմբում կատարված վիրահատությունները**

Անհրաժեշտ է նշել, որ միջային մահիկի մոդելավորող ռեզեկցիան, որը կատարվել է հիմնական խմբի հիվանդների ճնշող մեծամասնության մոտ (59,4%), հանդիսանում է արթրոսկոպիկ բուժման մեր կողմից ձևափոխված տարբերակ:

Առաջին խմբում, կախված միջային մահիկի վնասվածքի բնույթից, տեղակայումից, ինչպես նաև սինովիալ թաղանթի և հոդամակերեսի ախտաբանական փոփոխությունների առկայությունից, վերոհիշյալ վիրահատությունները բոլոր դեպքերում լրացվել են այլ միջամտություններով կամ դրանց զուգակցումներով:

Այսպես, 189 (93.6 %) դեպքում լրացուցիչ կատարվել է մասնակի սինովէկտոմիա, 40 (19,8%) դեպքում՝ աճառախն հոդամակերեսի մեխանիկական մշակում, 48 (23.8%) դեպքում՝ մեղիոպատեյար հիպերտրոֆիկ ծալքի հեռացում, 22 (10,9%) դեպքում՝ հոդամակերեսի կորյացիոն հարթեցում և 8 (4%) դեպքում՝ ազատ հոդախն մարմնիկների («մկների») հեռացում:

Առաջին խմբի բոլոր 202 հիվանդների մոտ վաղ հետվիրահատական շրջանում վիրահատված հորի մեջ ներարկվել են հիալուռնաթթվի ածանցյալներ համընդհանուր եղանակներով: Հիվանդները ստացել են նաև համարժեք վերականգնողական բուժում:

Ստուգիչ խմբում ընդգրկված 85 հիվանդների շրջանում օգտագործվել են արթրոսկոպիկ բուժման հետևյալ տարրերակները՝

- միջային մահիկի ոչ խնայող ռեզեկցիա՝ 43 (50.6%) հիվանդ,
- սուբտոտալ մահիկահատում՝ 38 (44.7%) հիվանդ,
- տոտալ մահիկահատում 4 (4.7%) հիվանդ:

Վերոհիշյալ վիրահատությունները 15 (17,6%) դեպքում լրացվել են աճառային հոդամակերեսի մեխանիկական մշակմամբ, 68 (80%) դեպքում՝ մասնիկի սինովէկտոմիայով, 25 (29.4%) դեպքում՝ մեղիոպատեյար հիպերտրոֆիկ ծալքի հեռացումով և 6 (7%) դեպքում՝ ազատ հոդային մարմնիկների հեռացումով: Նշված լրացուցիչ միջամտություննորը հիմնականում զուգակցվել են տարրեր ձևերով:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հիվանդների այս խմբում հոդամակերեսի կորյացիոն մշակում չի կատարվել:

Հետվիրահատական շրջանում նշված բոլոր 85 հիվանդները ստացել են համարժեք վերականգնողական բուժում:

## 2.4. Վիճակագրական վերլուծություն

Վերոհիշյալ բոլոր հետազոտումների արդյունքում ստացված թվային տվյալները մշակվել են վիճակագրական եղանակով, ընդ որում օգտագործվել են վիճակագրական վերլուծման ծրագրերի ստանդարտ փաթեթներ (Statistica for Windows XP, Microsoft Excel 2000): Հետազոտումն իրականացվել է վարիացիոն վիճակագրության և վիճակագրական գործակիցների (որակական նշանների համեմատման համար) օգտագործ-

մամբ: Քանակական նշանների համեմատության նպատակով հաշվվել են միջին մեծությունները (M), միջին թվաբանականի ստանդարտ շեղումը և միջին սխալը ( $M \pm m$ ):

Որակական նշանների վերլուծությունն իրականացվել է  $\chi^2$  ռչ պարամետրիկ գործակցի օգնությամբ: Հետազոտման արդյունքները հավաստի են համարվել  $p < 0,05$  դեպքում:

### **ԳԼՈՒԽ 3.**

## **ՍԵՓԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

### **3.1. Հիվանդների հետազոտման արդյունքները**

#### **3.1.1. Դիտարկվող խմբաքանակի կլինիկական բնութագիրը**

Բոլոր 287 հիվանդները գանգատվում էին ախտահարված ծնկահոդի ցավերից: 25 (8,7%) դեպքում հիվանդները նշում էին խիստ արտահայտված ցավային համախտանիշ, որն ուղեկցվում էր հոդում շարժումների զգալի սահմանափակումով (ծնկահոդի արգելափակում):

Մնացած 262 (91,3%) դեպքերում ցավը բութ բնույթի էր, չափավոր կամ աննշան արտահայտվածության: Վերջույթի ծանրաբեռնման դեպքում ցավերն ավելանում էին, իսկ երբեմն էլ՝ ուղեկցվում խրթոցով:

20 (7%) հիվանդները նշում էին մեկնարկային ցավեր և հոդի կաշկանդվածություն, որոնք վերանում էին կամ նվազում արթնանալուց 20-30 րոպե հետո:

Բոլոր դեպքերում ցավը տեղակայված էր ծնկահոդի միջային մահիկի մակերեսին՝ հոդաճեղքի մակարդակով:

Ցավերը հիմնականում կապված չէին եղանակային գործոնի հետ և նվազում էին ցավազրկողների կամ ոչ ստերոիդ հակաբորբոքիչ դեղամիջոցների օգտագործման դեպքում:

97 (33,8%) հիվանդները գանգատվում էին ծնկահոդում տարբեր արտահայտվածության շարժումների սահմանափակումից՝ սկսած շարժումների գրեթե լրիվ բացակայությունից (հոդի արգելափակում) մինչև դրանց աննշան սահմանափակումներ:

11 (3,8%) դեպքում հիվանդները նշում էին ախտահարված ծնկահոդում անկայունության զգացում:


Հիվանդների քայլվածքը հիմնականում նորմալ էր, և կարիք չէր լինում օգտվել հենման լրացուցիչ օգնող միջոցներից (ձեռնափայտ և այլն):

Արտաքին զննման ժամանակ 201 (70%) հիվանդի մոտ ազդրի ստորին երրորդականի շրջագիծը մոտ 1-2 սմ փոքր էր համեմատած առողջ կողմի հետ (հիպոտրոֆիա):

Մնացած դեպքերում (86 - 30%) տվյալ սեգմենտի մկանային հիպոտրոֆիա չէր հայտնաբերվում:

56 (19,5%) դեպքում ախտահարված ծնկահողի ծավալը մեծացած էր՝ դրա շրջագիծը 1-1,5 սմ ավել էր համեմատած առողջ կողմի հետ: Հիվանդների այս խմբի մոտ դիտվում էր նաև հոդի ուրվագծերի հարթեցում և ծիանք:

Հիվանդների շրջանում կատարվել է ախտահարված հոդի շարժումների ծավալի որոշում: Ստացված տվյալները ներկայացված են նկար 5 -ում:



Նկար 5. Ծալման-տարածման սահմանափակման ծավալը 287 հիվանդների մոտ

Ինչպես երևում է նկարից 190 (66,2%) հիվանդների մոտ ծալման-տարածման սահմանափակումներ չեն հայտնաբերվել: Առավել հազվադեպ (25-8,7% հիվանդ) դիտվել է շարժումների ծավալի  $155^{\circ}$ -ից  $160^{\circ}$  սահմանափակում (արգելափակում): 42 (14,6%) դեպքում ծավալի սահմանափակումը կազմել է  $20^{\circ}$ - $30^{\circ}$  և 30 (10,5%) դեպքում  $30^{\circ}$ - $40^{\circ}$ :

Անհրաժեշտ է նշել, որ ախտահարված հոդում շարժումների սահմանափակումները հիմնականում հայտնաբերվել են այն հիվանդների մոտ, որոնք մեզ դիմել են նախնական վնասվածք ստանալուց 2-3 հետո:

Մահիկների վնասվածքներին բնորոշ Մակ-Մարեյի և Շտեյմանի թեստերը դրական էին 179 (62,4%), իսկ միջային կոլլատերալ կապանի վնասման մասին վկայող «սթրես» թեստը՝ 11 (3,8%) հիվանդների մոտ:

### **3.1.2. Ծնկահոդերի ռենտգենաբանական բնութագիրը**

Ինչպես վերը նշվել էր, ռենգենաբանական հետազոտումն իրականացվել էր բոլոր հիվանդների մոտ, ընդ որում 232 (80,8%) դեպքում ախտահարված ծնկահոդերում ռենգենաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել: Մնացած 55 (19,2%) հիվանդների մոտ դիտվել են վնասված մահիկների հետևանքով առաջացած տարբեր ախտաբանական վիճակներին (սինովիտ, գոնարթորոզ և այլն) բնորոշ ռենտգենաբանական նշաններ: Այդ տվյալները ներկայացված են № 2 աղյուսակում:

#### **Աղյուսակ № 2**

##### **Ռենտգենյան պատկերը 287 հիվանդի մոտ**

Նշանները	Քանակը %	Քանակը	Տոկոսները
Նորմա		232	80,8%
Սուբխոնդրալ սկլերոզ		55	19,2%
Վերին բունցի մթագնում		54	18,8%
Հոդաճեղքի նեղացում		37	12,9%
Դրական «սթրես» թեստ		11	3,8%
Ազատ խոնդրալ մարմնիկներ		8	2,8%
Եզրային օստեոֆիտ		2	0,7%

Պետք է նշել, որ աղյուսակում նշված ռենտգենյան նշանները մեծամասամբ դեպքերում միմյանց հետ զուգակցվել են: Ինչպես երևում է աղյուսակից, առավել հաճախ (55 դեպք - 19,2%) դիտվել է աննշան կամ չափավոր արտահայտված սուբխոնդրալ ոսկրի սկլերոզ, որը հիմնականում տեղակայված է եղել մեծ ոլոքի միջային կոճի շրջանում: Սինովիտի և հոդաշապկի հաստացման մասին վկայող վերին բունցի մթագնում հայտնաբերվել է 54 (18,8%) դեպքերում: 37 (12,9%) հիվանդի մոտ՝ առողջ կողմի հետ

համեմատած նկատվել է հոդաճեղքի հետ նեղացում մոտ 2-3 մմ չափով: Միջային կոլլատերալ կապանի մասնակի վնասման մասին վկայող «սթրես» թեստը դրական է եղել 11 (3,8%) հիվանդի մոտ (նկար 6):



**Նկար 7. Ծնկահոդի ռենտգենաբանական պատկեր:  
Դիտվում է արտահայտված դրական «սթրես» թեստ**

Ռենտգենաբանական հետազոտման ժամանակ առավել հաճախ դիտվել է սուբխոնդրալ սկլերոզի, հոդաճեղքի նեղացման և վերին բունոցի մթագման նշանների գուգակցում, որոնց հիման վրա 55 (19,2%) հիվանդի մոտ ախտորոշվել է I-II աստիճանի գոնարթրոզ (նկար 7) ըստ H.C.Կօսինսկօյ (1961):




**Նկար 8. Ծնկահոդերի ռենտգենագրամ:  
Դիտվում է սուբխոնդրալ սկլերոզ և հոդաճեղքի նեղացում**

Այսպիսով պետք է փաստել, որ ծնկահոդի մահիկների վնասման դեպքում ռենտգենյան հետազոտումը նվազ տեղեկատվական է: Այն թույլ է տալիս հիմնականում ախտորոշել ուշացած դեպքերը, երբ հոդում առկա են մահիկի վնասվածքի հետևանքով:

առաջացած դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ: Այն նաև թույլ է տալիս ախտորոշել զուգակցող կոտրվածքների առկայությունը:

### 3.1.3. Ծնկահոդերի գերձայնային հետազոտման արդյունքները

Գերձայնային հետազոտումը կատարվել է բոլոր 287 հիվանդների մոտ: 114 (39,7%) դեպքում ծնկահոդի և դրան հարող փափուկ հյուսվածքների կողմից ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:



**Նկար 9. Ցուցադրված է մահիկի վնասվածքի գա պատկերը**

Մնացած 173 (60,3%) հիվանդների մոտ դիտվել են միջային մահիկի հյուսվածքի զանազան վնասվածքներ (Նկար 9): Ըստ գերձայնային պատկերի մահիկի հետին եղջյուրի վնասվածք նշվել է 91 (31,7%), մարմնի վնասվածք՝ 45 (15,7%), առաջային եղջյուրի և հարհոդաշապկային վնասվածք՝ 22 (7,7%) և համալիր վնասվածքներ՝ 15 (5,2%):

Նշված 173 հիվանդի մոտ միջային մահիկի տարբեր տեղակայման վնասվածքները այս կամ այն տարբերակով համակցվել են ծնկահոդի գերձայնային հետազոտությամբ հայտնաբերված այլ փոփոխությունների հետ: Դրանց շարքին են դասվում՝

- հոդամակերեսների խոնդրոմալյացիա՝ 41 (14,3%),
- հոդաշապկի հաստացում՝ 58 (20,2%),
- ազատ հեղուկի առկայություն՝ 34 (11,8%),
- Հոֆֆի մարմնի հիպերտրոֆիա՝ 32 (11,1%),
- հոդամակերեսների դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ՝ 21 (7,3%),
- ծնկոսկրի սեփական կապանի և քառագլուխ մկանի տենդիոզ՝ 21 (7,3%),
- միջային կոլատերալ կապանի էնտեզոպաթիա՝ 15 (5,2%):

Առավել հաճախ մահիկների վնասվածքները գուգակցվել են հոդամակերեսների խոնդրոմայացիայի, սինովիալ թաղանթի հաստացման, հոդում ազատ հեղուկի առկայության և/կամ Գոֆֆի մարմնի հիպերտրոֆիայի հետ: Ծնկահոդի կապանների վնասվածքներ ԳՁՀ չեն հայտնաբերվել:


Այսպիսով անհրաժեշտ է նշել, որ միջային մահիկի վնասվածքների ախտորոշման գործընթացում ծնկահոդի գերձայնային հետազոտումը՝ համեմատած ռենտգենարանական եղանակի, անհամեմատ ավելի տեղեկատվական է: Այն հնարավորություն է ընձեռնում ախտորոշել ոչ միայն մահիկի վնասվածքը, այլ նաև դրա տեղակայումը, ինչպես նաև փափուկ հյուսվածքների և հոդաճառի ուղեկցող փոփոխությունները:

### **3.1.4. Ասեղային և մինի արթրոսկոպիայի արդյունքները**


Պետք է նշել, որ արթրոսկոպիայի այս նվազ վնասվածքային եղանակը մեր կողմից իրագործվել է 52 հիվանդների մոտ, որը կազմում է հիվանդների ընդհանուր քանակի (287) 18,2%-ը: Հիվանդների այսպիսի քիչ քանակությունը բացատրվում է այն փաստով, որ այս եղանակը մեր Կենտրոնում ներդրվել է վերջին 2 տարվա ընթացքում: Չնայած դրան հետազոտումն ապահովվում է բարձր տեղեկատվություն:

Այսպես, բոլոր 52 հիվանդների մոտ այն հնարավորություն է տվել ախտորոշել միջային մահիկի վնասվածքները, ընդ որում 31 դեպքում (59,6%) հայտնաբերվել է հետին եղյուրի, 15 (28,8%) դեպքում՝ մարմնի, 4 (7,7%) դեպքում՝ առաջնային եղյուրի և հարիողապես մահիկի համալիր վնասվածքներ (Նկար 10):

12 (23%) դեպքում միջային մահիկի վնասվածքը գուգակցվել է հոդաճառի խոնդրոմայացիայի, 8 (15,4%) դեպքում՝ դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխությունների, իսկ 7 (13,5%) դեպքում՝ հոդում ազատ հեղուկի առկայության հետ: Պետք է նաև նշել, որ այս հետազոտությամբ հոդում ազատ մարմնիկներ («մկներ») չեն հայտնաբերվել:



**Նկար 10. Ծնկահողի արթրոսկոպիա:  
Դիտվում է միջային մահիկի հետինեղյուրի պատռվածք:**



**Նկար 11. Աճառի խոնդրոմալյացիայի արթրոսկոպիկ պատկեր**


### **3.1.5. Միջուկոեզոնանսային շերտագրման արդյունքները**

Հետազոտության այս ժամանակակից եղանակը ծնկահողի ախտահարման դեպքում օգտագործվել է 145(50,5%) հիվանդի մոտ:

Բոլոր դեպքերում հայտնաբերվել են միջային մահիկի տարբեր տեղակայման վնասվածքներ:


Ինչպես երևում է նկար 12-ից, ՄՌՇ հետզոտությամբ առավել հաճախ հանդիպել են մահիկի հետին եղյուրի (38,6%) և մարմնի (30,3%) վնասվածքներ: Մարմնի և հետին եղյուրի միաժամանակյա վնասվածք հայտնաբերվել է 15,9% դեպքերում: Ավելի քիչ հանդիպել են մահիկի հարհողաշապկային գոտու, ապա մուլտիզոնալ և առաջային եղյուրի վնասվածքներ:

## Միջային մահիկի վնասվածների տեղակայումը ըստ ՍՈՇ տվյալների



**Նկար 12. Միջային մահիկի վնասվածքների տեղակայումը  
ըստ ՍՈՇ տվյալների (145 հիվանդ)**

ՄՈՇ հետազոտմամբ որոշվել է նաև միջային մահիկի վնասվածքի տեսակը: Այդ տվյալները ներկայացված են՝ նկար 13-ում:



**Նկար 13. Միջային մահիկի վնասվածքների տեսակները  
ըստ ՍՈՇ հետազոտության (145 հիվանդ)**

Ինչպես երևում է նկարից, առավել հաճախ հանդիպել են միջային մահիկի թեք լաթածն (71 դեպք – 49%), երկայնական (29 դեպք – 20%) և ուստիալ (26 դեպք – 17,9%), իսկ ավելի քիչ երկայնական «ցնցուղի կանթի» նման, հարհողաշապկային և համալիր վնասվածքներ:

Միջային մահիկի վնասվածքների տեղակայման և տեսակի մասին տվյալների միաժամանակյա մեկնաբանությունից պարզ է դառնում, որ առավել հաճախ դիտվել են հետին եղյուրի և մարմնի թեք լաթածն երկայնական և ուստիալ վնասվածքներ:



**Նկար 14. Ծնկահողի միջուկոեզոնանսային շերտագրում:  
Դիտվում է մահիկի երկայնակի վնասվածք:**



**Նկար 15. Ծնկահողի միջուկոեզոնանսային շերտագրում:  
Դիտվում է մահիկի հետին եղյուրի հորիզոնական վնասվածք:**

Մահիկների վնասվածքները 35 (24,1%) դեպքում գուգակցվել են Գոֆֆի մարմնի և մեղիոպատելյար ծալքի հիպերտրոֆիայի, 28 (19,3%) դեպքում՝ հոդամակերեսների դեգեներատիվ-դիստրօֆիկ փոփոխությունների, 12 (8,3%) դեպքում՝ հոդում ազատ հեղուկի առկայություն, 4 (2,7%) դեպքում՝ հոդի միջային կոմպարթեմենթի տրաբեկույար այտուցի և 3-ական դեպքերում (2,1%)՝ խոնդրոմատոզ մարմինների ու առաջային խաչաձև կապանի մասնակի վնասման հետ: Նշված գուգակցումները հանդիպել են զանազան տարբերակներով, բայց առավել հաճախ դիտվել է մահիկի վնասվածքի, մեղիոպատելյար ծալքի հիպերտրոֆիայի և հոդաճառի դեգեներատիվ գործընթացների գուգակցումներ:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է փաստել, որ ՄՌՇ-ը առավել զգայուն և տեղեկատվական է ծնկահոդի վնասվածքների ախտորոշման գործընթացում: Այն 100% դեպքերում թույլ է տալիս ոչ միայն հայտնաբերել մահիկի վնասվածքները, այլ նաև որոշել վնասվածքի տեղակայումը և տեսակը:

Մեր կողմից կատարվել է հետազոտման բոլոր եղանակների (ռենտգենարանական, ԳՁՀ, մինի-արթրոսկոպիա, ՄՌՇ) արդյունքների համատեղ վերլուծություն, նպատակ ունենալով պարզել միջային մահիկի վնասվածքների հետ գուգակցվող սինովիտի և գոնարթրոզի հաճախականությունը: Ըստ հետազոտումների տվյալների ծնկահոդում ազատ հեղուկի առկայություն դիտվել է 8,3-ից 19,6%, իսկ I-II աստիճանի գոնարթրոզի նշաններ՝ 7,3-ից 19,3%, դեպքերում:

Ստացված տվյալների այսպիսի տարբերությունները բացատրվում է այն փաստով, որ հետազոտման վերոհիշյալ եղանակներն ունեն տարբեր զգայունություն ու տեղեկատվություն, և բացի այդ՝ օգտագործվել են քանակային տեսակետից ոչ համարժեք խմբերում:

Այսպիսով, պետք է նշել, որ ծնկահոդի մահիկների վնասվածքների և դրանց ուղեկցող ախտաբանական գործընթացների ճշգրիտ ախտորոշման նպատակով պետք է իրականացվեն համալիր մոտեցումներ, որոնք պետք է ներառեն ինչպես կլինիկան, այնպես էլ գործիքային հետազոտման եղանակներ:

### **3.2. Ծնկահոդի միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգումը**

#### **3.2.1. Մահիկների որոշ կենսամեխանիկական և տոպոմետրիկ**

##### **առանձնահատկությունները**

Մահիկների տարբեր տեղակայման և տեսակի վնասվածքների ճիշտ գնահատման և համարժեք վիրահատական բուժման ընտրման նպատակով շատ կարևոր է հասկանալ, թե ինչպիսի ֆունկցիաներ են իրականացնում տվյալ մահիկի տարբեր հատվածները, ինչպես ստատիկ, այնպես էլ դինամիկ իրավիճակներում:

Ըստ համընդհանուր ընդունված կարծիքների ծնկահոդի մահիկները կատարում են հետևյալ ֆունկցիաները՝

- մեծացնում հոդամակերեսների՝ միմյանց նկատմամբ,
- համապատասխանությունը,
- մեծացնում են շփող մակերեսները, դրանով իսկ հավասարաչափ բաշխելով ազդող ուժերը,
- ապահովում են ամորտիզացիա և ծնկահոդի կայունություն տարածության մեջ,
- խոչընդոտում են հոդաշապկի ներհոդային օղակմանը,
- մասնակցում են սինովիալ հեղուկի շրջանառությանը,
- բարելավում են հոդաճառի սնուցումը:

Հայտնի է, որ դրսային մահիկը՝ համեմատած միջային մահիկի հետ, ավելի շարժունակ է: Համեմատած հետին եղյուրների հետ՝ յուրաքանչյուր մահիկի առաջային եղյուրները նույնպես ավելի շարժուն են: Այսինքն զույգ մահիկների բոլոր հատվածների մեջ առավել սակավաշարժ գոտին դա միջային մահիկի հետին եղյուրն է: Դրանով է պայմանավորված այն փաստը, որ համեմատած դրսայինի, միջային մահիկն ավելի հաճախ է վնասվում, և վնասվածքը հիմնականում ընդգրկում է հետին եղյուրը և դրան հարող հատվածները:

Մահիկները՝ ծնկահոդի տարածման և ծալման ժամանակ, տեղաշարժվում են առաջահետին և որոշ չափով՝ կողմնային-հետին ուղղություններով: Արդյունքում որոշակի փոխվում է դրանց անատոմիական տեսքը: Մահիկների այդպիսի դեֆորմացիան

առանցքային ծանրաբեռնումների ժամանակ պայմանավորված է դրանց միկրոկառուցվածքով՝ այսիքն ֆիբրոզ միկրոթելերի ուղղվածությամբ և միահյուսմամբ: Վերջիններս կարող են ունենալ ռադիալ (շառավիղային), շրջանաձև և միահյուսվող (աերֆորանտ) ուղղվածություն:

Տարբեր ուղղության և ուժի ազդեցության պայմաններում այդ միկրոթելերն այս կամ այն չափով շեղվում են և դեֆորմացվում: Միկրոթելերի այս հատկությունով է պայմանավորված մահիկների ճնշման (կոմպրեսիայի) և ձգման հնարավորությունը:

Հայտնի է, որ մահիկը շրջանաձև ձգման նկատմամբ անհամեմատ ավելի դիմացկուն է, քան ռադիալ ձգման նկատմամբ:

Առանցքային ծանրաբեռնման պայմաններում հոդաճառ-հոդաճառ և մահիկ - հոդաճառ համակարգերում առաջանում է շփման «սթրես-ֆենոմեն», որն ուղիղ համեմատական է ազդող ուժին և հակառակ համեմատական շփման մակերեսին, այսինքն ինչքան մեծ է շփման մակերեսը, այնքան փոքր է վերը նշված համակարգերում «սթրես - ֆենոմենը»:

Մահիկները առանցքային և ծանրաբեռնվածության ազդեցության ներքո ծածկում են ավելի մեծ շփման մակերես, միաժամանակ ենթարկվելով հոդաճեղքից դեպի դուրս ֆունկցիոնալ արտափրման (էքստրուզիա): Այս երևույթը պայմանավորված է շրջանաձև միկրոթելերով, որոնք ապահովում է մահիկի շրջանաձև ձգման ունակությունը:

Հոդի ծալման ժամանակ շփման ուժը նկատելի նվազում է դրա առջևի հատվածում: Համապատասխանորեն մի քանի անգամ ավելանում է հետին հատվածների ծանրաբեռնումը: Դրսային մահիկի հետին եղջյուրը՝ լինելով ավելի շարժունակ, արտափրվում է դեպի հետ՝ դուրս գալով ոլոքի հետին եզրից: Այդ պայմաններում, միջային մահիկը լինելով ավելի սակավաշարժ, իր չափերը գրեթե չի փոխում և ճնշվում է երկու հոդամակերեսների միջև՝ իր վրա վերցնելով դրանց ծանրաբեռնվածությունը:

Պետք է ենթադրել, որ մահիկի ամբողջականության պահպանումը հիմնականում պայմանավորված է դրա կազմի մեջ գտնվող շրջանաձև միկրոթելերով, որոնք ապահովելով մահիկի երկայնական դեֆորմացիան, դիմակայում են ազդող ուժի նկատմամբ:


Այս երևույթը մեր կողմից անվանվել է մահիկի «շրջանաձև ֆունկցիա» (ՇՖ): Բնական է, որ դրսային մահիկը շրջանաձև ավելի ֆունկցիոնալ է, քան միջայինը:

Մահիկների տարբեր վնասվածքների ժամանակ տեղի ունի դրանց շրջանաձև անընդհատության մասնակի կամ ամբողջական խախտում: Դրանց համապատասխանորեն անվանել ենք մահիկի մասնակի կամ լրիվ շրջանաձև դիսֆունկցիա (մասնակի կամ լրիվ ՇԴՖ):

ՇԴՖ-ն նկարագրելու, տարբեր վնասվածքներով պայմանավորված ՇԴՖ-ի աստիճանը գնահատելու և տարբերակելու, ինչպես նաև համարժեք, պարզեցված և օրգան-պահպանողական վիրահատական մոտեցումներ մշակելու նպատակով մեր կողմից առաջարկվել է «սեկտորային տոպոմետրիա» հասկացությունը, համաձայն որի միջային մահիկը դիտվում է որպես շրջանի տարածական միավոր:


Սեկտորը շրջանագծի բաղկացուցիչ մասն է, որը կազմված է երկու շառավիղներից և աղեղից: Ոլոքային հարթակը դիտվում է որպես շրջանագիծ, որի կեսը կազմում է միջային մահիկը: Վերջինս շառավիղներով բաժանվում է երեք սեկտորների՝

- սեկտոր A (Anterior)- ընդգրկում է մահիկի առաջին եղյուրը և մարմնի մի փոքր հատվածը,
  - սեկտոր M (Medial)- ընդգրկում է մահիկի միջին հատվածը՝ մարմինը,
  - սեկտոր P (Posterior) - ընդգրկում է հիմնականում մահիկի հետին եղյուրը
- (Նկար 16):



Նկար 16. Միջային մահիկի սխեմատիկ բաժանումը 3 սեկտորների ԱMP

Նշված յուրաքանչյուր սեկտոր իր հերթին բաժանվում է սեզմենտների կամ գոտիների: Հաշվի առնելով միջային մահիկի կենսամեխանիկական առանձնահատկությունները և դրա տարբեր սեկտորների ֆունկցիոնալ փոփոխությունները ծնկահողի ստատիկ և դինամիկ վիճակներում, մեր կողմից առաջարկվել է հետին և միջին սեկտորները բաժանել երեքական ակտիվ, իսկ առջևինը՝ երկու ակտիվ գոտիների(ըստ Cooper-ի գոտիների մեր կողմից ծնափոխված տարբերակի) (նկար 17):



**Նկար 17. Միջային մահիկի 3 սեկտորների սխեմատիկ բաժանումը գոտիների**

Ըստ առաջարկված տոպոմետրիայի ավելի միջայնորեն և մահիկի ամբողջ երկարությամբ տեղակայված առաջին գոտին (1) անատոմիական տեսակյունից ամենաբարակն է, իսկ կենսամեխանիկական առումով այն՝ մյուս գոտիների հետ համեմատած, նվազ կարևոր է: Մահիկի մարմնի և հետին եղյուրի 2-րդ գոտին անատոմիորեն ավելի հաստ է, իսկ հյուսվածքաբանորեն պարունակում է մինչև 25% շրջանածն միկրոթելեր, այսինքն 25 %-ով մասնակցում է մահիկի ծգման ֆունկցիայի (ՇՖ) ապահովմանը: Միջային մահիկի առջևի եղյուրի 2-րդ գոտին համապատասխանում է հետին եղյուրի և մարմնի 3-րդ գոտուն: Ամբողջ մահիկի երկարությամբ ծգվող այս գոտին ամենահաստն է և պարունակում է մինչև 75% շրջանածն միկրոթելեր: Այդ իսկ պատճառով այն կենսամեխանիկայի տեսակյունից ամենակարևորն է, և վիրահատական բուժման դեպքում անհրաժեշտ է հնարավորինս այն վերկանգնել և պահպանել:

Մահիկ-հոդաշապկային անցման գոտին անվանվել է զրոյական (0) գոտի: Վերջինս ամրացնող և կարևորագույն պրոպրիոցեպտիվ գոտի, այսինքն մահիկի ստատիկ

և դինամիկ փոփոխությունների ժամանակ տեղի ունեցող միկրոդետոնացիաները խորանիստ ռեցեպտորների շնորհիվ վերափոխվում են աֆերենտ նյարդային ազդակի, որը ԿՆՀ-ում վերլուծվելուց հետո, էֆերենտ ազդակների միջոցով կարգավորում է ծնկահոդի կայունությունը տարածության մեջ, ինչպես բնականոն, այնպես էլ հարկադրական շարժումների ժամանակ: Վերոհիշյալը արտահայտվում է ներհոդային և արտահոդային կայունացնող կառուցների ներդաշնակ աշխատանքով:

Հաշվի առնելով միջային մահիկի վերը նկարագրված սեկտորային տոպոմետրիան մեր կողմից մշակվել է դրա շրջանձև դիսֆունկցիայի դասակարգումը տարբեր վնասվածքների պայմաններում:

## ՇԴՖ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

### 1. Ըստ արտահայտվածության՝

- . մասնակի
- . ամբողջական

### 2. Ըստ բիոկինեմատիկայի՝

- . մեխանիկական հյուսվածքային
- . ֆունկցիոնալ հյուսվածքային
- . ֆունկցիոնալ ոչ հյուսվածքային - ZONE-0 միայն

### 3. Ըստ սեկտորների կարևորության՝

- . P-M-A (posterior-problematic, middle-moderate, anterior-asymptomatic)

### 4. Ըստ սեգմենտների կարևորության՝

- . սեգմենտ 3 -100% ,սեգմենտ 2- 25-50% , սեգմենտ 1-ՇԴՖ առկա չէ

### 5. ZONE-0՝


- . ՇԴՖ - երկրորդային ֆունկցիոնալ

### 6. Ըստ վերականգնելիության՝

- . վերականգնելի
- . պոտենցիալ վերականգնելի
- . անվերականգնելի կամ անհեռանկարային

Այս դասակարգումը թույլ է տալիս կոնկրետ հիվանդի մոտ որոշել ՇԴՖ-ի ծանրության աստիճանը, դրանով իսկ ընտրել վիրահատական բուժման համարժեք տարբերակ:

Անատոմիական տեսանկյունից ազդրոսկրի միջային կոճի հոդամակերեսը շփվում է միջային մահիկի ազդրային մակերեսի և մեծ ոլոքի հարթակի միջային հոդմակերեսի հետ: Այն անվանել ենք «Եռակառույց ինտերպոզիցիոն կոնտակտավորում» (Նկար 18):



**Նկար. 18. Եռակառույց ինտերպոզիցիոն կոնտակտավորման սխեմատիկ պատկերը՝ ա. ազդրոսկր, բ. միջային մահիկ, գ. մեծ ոլոք**

Այս համակարգում ազդրոսկրի և ոլոքի շփվող մակերեսները երկրաչափորեն անփոփոխ (ստատիկ) կառուցվածքներ են, իսկ մահիկը՝ դինամիկ փոփոխվող: Հանգստի դեպքում միջային մահիկը զբաղեցնում է ազդրոսկրի և ոլոքի հպվող մակերեսների 68-71%-ը: Ծանրաբեռնման ժամանակ՝ ցիրկուլյար ծգման շնորհիվ, այն դեֆորմացվում է, մասնակի արտահրվում մեծ ոլոքի եզրից դրսանորեն: Արդյունքում ինտերպոզիցիոն կոնտակտային մակերեսը փոքրանում է մինչև 57-59%: Այս բնականոն ֆենոմենը մահիկի տարբեր վնասվածքների ժամանակ կրում է զգալի որակական փոփոխություններ: Առանցքային զգալի ուժերի ազդեցության պարագայում, երբ խախտված է մահիկի ամբողջականությունը, վերանում է վերջինիս շրջանաձև ծգման և հակա-

կշռման ֆունկցիան, ինչպես նաև թուլանում է մահիկի ինտերպոզիցիոն կողային ստատիկ կայունացման ֆունկցիան: Արդյունքում՝ ազդրոսկրի և մեծ ոլոքի միջային մակերեսների առանցքային պտտական կենտրոնը տեղաշարժվում է միջայնորեն՝ առաջացնելով գրավիտացիոն առանցքի տարբեր աստիճանի շեղումներ: Դրա հետևանքով ծնկահողի դրսային բաժնում ծանրաբեռնման ուժը կտրուկ նվազում է, իսկ միջային բաժնում՝ կտրուկ ավելանում: Արդյունքում ժամանակի ընթացքում առաջանում է միջային բաժնի հոդամակերեսների խոնդրոմայացիա՝ ընդհուպ մինչև օստեոարթրոզի զարգացում:

Տվյալ կենսամեխանիկական գործոնը հանդիսանում է մահիկի վնասվածքների դեպքում մեր կողմից մշակված բուժման տակտիկայի հիմքը: Դա նշանակում է, որ վիրահատական բուժման ժամանակ պետք է առավելագույնս փորձել պահպանել կամ վերականգնել մահիկի շրջանաձև ծգման և ազդող ուժին հակակշռման ֆունկցիան՝ հնարավորինս նվազեցնելով գրավիտացիոն առանցքի շեղման աստիճանը:

### **3.2.2. Միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգումը**

Համադրելով ISAKOS (Internacional Society of Arthroscopy, Knee Surgery and Orthopaedic Sports, Medicine) միջային մահիկի վնասվածքների տեսակների դասակարգումը և մեր կողմից առաջարկված տոպոմետրիկ տվյալները՝ ստեղծել ենք հետևյալ աշխատանքային դասակարգումը:

## **ՄԻՋԱՅԻՆ ՄԱՀԻԿԻ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ**

### **1. Ռադիալ (շառավղային)**

A սեկտոր – (A<sub>1</sub>, A<sub>1-2(3)</sub>)

M սեկտոր – (M<sub>1</sub>, M<sub>1-2</sub>, M<sub>1-2-3</sub>)

P սեկտոր – (P<sub>1</sub>, P<sub>1-2</sub>, P<sub>1-2-3</sub>)

### **2. Թեք (թեք-լաթաձև)**

A սեկտոր – (A<sub>1</sub>, A<sub>1-2</sub>, A<sub>2</sub>-M<sub>2</sub>, A<sub>1</sub>-M<sub>2-3</sub>)

M սեկտոր – (M<sub>1</sub>, M<sub>1-2</sub>, M<sub>1-2-3</sub>, M<sub>1</sub>-P<sub>2</sub>, M<sub>1</sub>-P<sub>2-3</sub>, M<sub>1</sub>-A<sub>2</sub>)

P սեկտոր – (P<sub>1</sub>, P<sub>1-2</sub>, P<sub>1</sub>-M<sub>2</sub>, P<sub>1</sub>-M<sub>2-3</sub>)

### **3. Շրջանաձև**

A սեկտոր – (A2, A2- M2, A2- M2- P2)

M սեկտոր – (M2, M2- P2, M3 - P3)

P սեկտոր – (P2, P3)

### **4. Հորիզոնական**

A սեկտոր – գործնականում չի հանդիպում

M սեկտոր – (M2, M2-3, M2 – P2, M2-3 - P2-3)

P սեկտոր – (P2, P2-3)

### **5. Հարհողաշապկային**

A սեկտոր – (A0, A0- M0, A0- M0- P0)

M սեկտոր – (M0, M0- P0)

P սեկտոր – (P0)

### **6. Բարդ համալիր – բազմասեկտորային և բազմատեսակ:**

Ըստ այս դասակարգման մահիկի տարբեր տեսակի վնասվածքները կարող են տեղակայվել ինչպես մեկ, այնպես էլ միաժամանակ 2 և ավելի սեկտորներում: Վերջին դեպքում դրանք անցումային վնասվածքներ են:


Ուղիալ կամ շաղավիղային վնասվածքները բնական է, որ տեղակայվում են A, M կամ P սեկտորներից որևէ մեկում վնասելով 1-ից մինչև 3-րդ գոտիները: Եթե 3-րդ գոտին ընդգրկված է, ապա այդ վնասվածքը ռադիալ ավարտված է: Մնացած բոլոր դեպքերում այն ոչ լրիվ կամ անավարտ վնասվածք է:

Թեք կամ թեք-լաթաձև վնասվածքները՝ ընդգրկվելով մեկ կամ երկու սեկտորներ, ըստ լաթի առաջահետին ուղղվածությամբ կարող են լինել դեպի առաջ կամ հետ, իսկ 3-րդ գոտին ընդգրկելու դեպքում կարող են լինել ավարտված:

Շրջանաձև վնասվածքները՝ անկախ սեկտորից և տեղակայման գոտուց կարող են լինել անավարտ կամ ավարտված: Անավարտ վնասվածքը ընդգրկում է մահիկի հաստության միայն ազդրային մակերեսը, իսկ ավարտվածը՝ մահիկի ամբողջ հաստությունը: Վերջինս՝ կախված վնասվածքի երկայնական չափից, կարող է բարդանալ

վնասված հատվածի դեպի հողախոռոչ դիստոպիայով, առաջացնելով արգելափակում:  
Այս տեսակը կոչվում է «ցնցուղի կանթի» տիպի վնասվածք:

Հորիզոնական վնասվածքները յուրատեսակ են (Նկար 19):



**Նկար 19. Միջային մահիկի հորիզոնական վնասվածքի սխեմատիկ պատկերը:**

Ա սեկտորում դրանք բարակության պատճառով, գործնականում չեն հանդիպում, այլ տեղակայվում են M կամ P սեկտորներում, կամ Էլ վերջին երկուառմ'միաժամանակ:

Բարդ համալիր վնասվածքները միաժամանակ ախտահարում են մի քանի սեկտորներ և մի քանի գոտիներ:

Այսպիսով նշված դասակարգման առավելությունը կայանում է նրանում, որ հաշվի է առնվում նաև մահիկի շրջանաձև ֆունկցիայի խանգարման աստիճանը: Կախված վնասվածքի տեղակայումից, չափից և տեսակից միջային մահիկի այդ ֆունկցիան տուժում է տարբեր տարբերակներով:

Այսպես, մահիկի այն վնասվածքների ժամանակ, որոնք ընդգրկում են դրա բոլոր (ներառյալ 3-րդ) գոտիները, առաջանում է շրջանաձև բացարձակ դիստոպիա: Այդպիսիների շարքին են դասվում միայն ավարտված ռադիալ և թեք վնասվածքները: Այսպիսի վնասվածքների դեպքում անհրաժեշտ է վերականգնել մահիկի ամբողջականությունը, անկախ տվյալ հատվածի անոթավորման առանձնահատկություններից:

Միջային մահիկի այլ վնասվածքների դեպքում, երբ պահպանված է 3-րդ գոտու ամբողջականությունը, շրջանաձև ձգման ֆունկցիան տուժում է ավելի քիչ, այսինքն հնարավոր է կատարել մահիկի մոդելավորող ռեզեկցիաներ:

Այս և այլ հարցերին է նվիրված աշխատանքի հաջորդ բաժինները:

### **3.3. Միջային մահիկի վնասվածքների վիրահատական բուժումը**

#### **3.3.1. Ծնկահոդերի ներվիրահատական ստուգման (ռևիզիա) արդյունքները**

Ծնկահոդի ներվիրահատական ստուգումը հանդիսացել է արթրոսկոպիկ վիրահատության առաջին փուլը: Այն իրականացվել է բոլոր 287 հիվանդների շրջանում: Ստացված տվյալների վերլուծությունը կատարվել է ըստ երկու, վերը նկարագրված խմբերի՝ I -հիվանդների հիմնական և II' հիվանդների ստուգիչ խմբեր:

I-ին խմբում ընդգրկված 202 (70,4%) հիվանդների մոտ, ըստ մեր կողմից առարկված դասակարգման, դիտվել են միջային մահիկի հետևյալ վնասվածքները՝

- ռադիալ ավարտված վնասվածքներ - 15 (7,4%) դեպք

A<sub>1-2(3)</sub> – 2 հիվանդ

M<sub>1-2-3-</sub> 9 հիվանդ

P<sub>1-2-3</sub> – 4 հիվանդ

- թեք (թեք-լաթաձն) վնասվածքներ – 23 (11,4%) դեպք

A<sub>1-</sub> M<sub>2-3-</sub> 6հիվանդ

M<sub>1-</sub> P<sub>2-3-</sub> 4 հիվանդ

P<sub>1-</sub> M<sub>2-3</sub> – 5 հիվանդ

M<sub>1-2-3-</sub> 5 հիվանդ

M<sub>1-</sub> A<sub>2(3)</sub> – 3 հիվանդ:

Ինչպես երևում է վերոհիշյալից, միջային մահիկի ավարտված վնասվածքների ընդհանուր քանակը կազմել է 38 դեպք (18,8%): Դրանցից 23 հիվանդի մոտ դիտվել են թեք կամ թեք -լաթաձն, իսկ 15-ի մոտ՝ ռադիալ վնասվածքներ.

- հարիոդապկային վնասվածքներ՝ 27 (13,4%) դեպք

A<sub>0-</sub> 1 հիվանդ

A<sub>0-</sub> M<sub>0</sub> – 11 հիվանդ

A<sub>0-</sub> M<sub>0-</sub> P<sub>0-</sub> 2 հիվանդ

M<sub>0</sub> – 8 հիվանդ

M<sub>0-</sub> P<sub>0-</sub> 3 հիվանդ

P<sub>0-</sub> 2 հիվանդ:

Վերը նշվածից երևում է, որ միջային մահիկի հարհողաշապկային վնասվածքներ դիտվել են 27 (13,4%) դեպքերում, ընդ որում առավել հաճախ դրանք տեղակայվել են առաջային եղյուրի և մարմնի (Աօ- Մօ – 11 հիվանդ), ինչպես նաև միայն մարմնի (Մօ – 8 հիվանդ) շրջանում:

➤ Ռադիալ և թեք անավարտ վնասվածքներ - 88 դեպք (43,6%): Ռադիալ անավարտ վնասվածքներ հայտնաբերվել են 35 (17,3%) և թեք անավարտ վնասվածքներ՝ 53 (26,3%) հիվանդների շրջանում: Պետք է նշել, որ այս վնասվածքները հիմնականում հավասարաչափ են տեղաբաշխվել մահիկի տարբեր սեկտորներում:

➤ Շրջանաձև և հորիզոնական վնասվածքներ - 32 (15,8%): Միջային մահիկի շրջանաձև վնասվածքներ դիտվել են 22 (10,9%) և հորիզոնական վնասվածքներ՝ 10 (4,9%) հիվանդի մոտ: Վերոհիշյալ վնասվածքները նույնպես հավասարաչափ են տեղակայվել մահիկի բոլոր սեկտորներում:

Բազմասեկտոր և բազմագոտի վնասվածքներ արձանագրվել են 17 (8,4%) դեպքերում:

Արթրոսկոպիկ ստուգման ժամանակ I խմբի հիվանդների մոտ, բացի միջային մահիկի վնասվածքներից հայտնաբերվել են նաև հոդի այլ ախտաբանական փոփոխություններ: Այսպես 36 (17,8%) դեպքում դիտվել է հոդաճառի խոնդրոմայացիա, 26 (12,9%) դեպքում՝ դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններ և 37 (18,3%) դեպքում՝ հոդում ազատ հեղուկի (սինովիտ) առկայություն:

II-րդ ստուգիչ խմբում հիվանդների ընդհանուր քանակը կազմել է 85 (29,6%): Անհրաժեշտ է նշել, որ այս խմբի հիվանդների բուժման ժամանակ, մեր կողմից դեռ չէր մշակվել միջային մահիկի վնասվածքների աշխատանքային դասակարգումը: Այդ իսկ պատճառով մահիկի վնասվածքները նկարագրելու համար օգտվել ենք համընդհանուր ընդունված դասակարգումներից:

Այսպես, միջային մահիկի հետին եղյուրի վնասվածքներ դիտվել են 46 (54,1%), մարմնի վնասվածքներ՝ 28 (32,9%), առջևի եղյուրի վնասվածքներ՝ 7 (8,2%) և բարդ համալիր վնասվածքներ՝ 4 (4,7%) հիվանդների մոտ:

Վնասվածքների տեսակները հետևյալն էին՝

➤ հարհողաշապկային - 20 դեպք,

- շրջանաձև - 19 դեպք,
- հորիզոնական – 17 դեպք,
- թեք – 14 դեպք,
- ռադիալ – 11 դեպք,
- բարդ համալիր – 4 դեպք:

Բացի միջային մահիկի վնասվածքներից, հիվանդների այս խմբի մոտ 10 (11,8%) դեպքում հայտնաբերվել է հոդամակերեսների խոնդրոմալյացիա, 5 (5,9%) դեպքում՝ արթրոզի երևույթներ և 17 (20%) դեպքում՝ սինովիտ:

### **3.3.2. Ծնկահոդի միջային մահիկի վնասվածքների արթրոսկոպիկ բուժումը և հիվանդների վերականգնումը**

Ներկայումս ծնկահոդի միջային մահիկի վնասվածքների բուժումը հիմնականում վիրահատական է, ընդ որում օգտագործվում են արթրոսկոպիայի տարբեր եղանակներ: Սակայն պետք է նշել, որ հիմնականում հաշվի չի առնվում միջային մահիկի անատոմա-ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, և որպես հետևանք, իրականացվում են մահիկի ոչ խնայող կամ սուբտոտալ մասնահատումներ (ոեզեկցիա): Արդյունքում խաթարվում են ծնկահոդի կենսամեխանիկական բնութագրերը, մեծանում է հոդի միջային բաժնի ծանրաբեռնվածությունը, որն էլ ժամանակի ընթացքում պատճառ է հանդիսանում հոդաճառի դեգեներատիվ և դիստրոֆիկ փոփոխությունների զարգացման:

Հաշվի առնելով վերոհիշյալը և նպատակ ունենալով կանխարգելել հետվիրահատական գոնարթրոզի զարգացումը մեր կողմից մշակվել են միջային մահիկի վնասվածքների արթրոսկոպիայի հետևյալ հիմնական սկզբունքները՝

- արթրոսկոպիայի ժամանակ անհրաժեշտ է օգտագործել բուժման տարբերակիչ տակտիկա կախված վնասվածքի տեղակայումից, չափսերից և տեսակից,
- բոլոր դեպքերում անհրաժեշտ է հնարավորինս պահպանել կամ վերականգնել վնասված մահիկի շրջանաձև ֆունկցիան,
- այդ սկզբունքը պետք է իրականացնել օրգան-պահպանողական վիրահատությունների (մոդելավորող ոեզեկցիա, մահիկի վերականգնման) միջոցով:

Մեր կողմից մշակվել է արթրոսկոպիկ բուժման տարբերակիչ տակտիկա, ընդորում դրա հիմքը կազմել են մահիկի տոպոմետրիկ և ֆունկցիոնալ վերոհիշյալ առանձնահատկությունները (ՄՇՖ, ՇԴՖ) և դրա վնասվածքների առաջարկված աշխատանքային դասակարգումը:

Ըստ այդ տակտիկայի՝

- մահիկի մոդելավորող ռեզեկցիան ցուցված է շրջանաձև, հորիզոնական, ռադիալ անավարտ և թեք (թեք-լաթաձև) անավարտ վնասվածքների ժամանակ,
- մահիկի վերականգնումը կարերի միջոցով՝ անկախ տվյալ գոտու անոթավորումից, ցուցված է ռադիալ ավարտված և թեք (թեք-լաթաձև) ավարտված վնասվածքների ժամանակ,
- մահիկ-հարհոդաշապկային վերականգնումը կարերի միջոցով ցուցված է հարհոդաշապկային վնասվածքների ժամանակ,
- մահիկի պարզիալ ռեզեկցիան ցուցված է միայն բազմասեկտոր-բազմատեսակ վնասվածքների ժամանակ:

Արթրոսկապիկ վիրահատությունների այս ցուցումները և տարբերակիչ տակտիկան կիրառվել է հիվանդների հիմնական 1 խմբում (202 հիվանդ – 70,4%), ընդորում մահիկի մոդելավորող ռեզեկցիան կատարվել է 120 (59,4%), մահիկի կարումը՝ 38 (18,8%), մահիկ-հարհոդաշապկային վերականգնումը կարերի միջոցով՝<sup>27</sup> (13,4%) և մահիկի պարզիալ ռեզեկցիան՝<sup>17</sup> (8,4%) հիվանդների շրջանում:

Պետք է նշել, որ մահիկի մոդելավորող պահպանողական ռեզեկցիան, որը կատարվել էր 50%-ից ավելի դեպքերում, հանդիսանում է մեր կողմից ձևափոխված մահիկահատման տարբերակ:

Հիվանդների այս խմբի մոտ՝ կախված հոդում մահիկի վնասվածքների հետ համակցվող այլ ախտաբանական փոփոխությունների առկայությունից, կատարվել են նաև լրացուցիչ միջամտություններ: Այսպես՝

- սինովիալ թաղանթի գերաճի դեպքում իրականացվել է մասնակի սինովիկումիա – 189 (93,6%) հիվանդ,

- խոնդրոմայացիայի կամ դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունների դեպքում աճառի մեխանիկական մշակում՝ 40 (19,8%) կամ կոբյացիոն հարթեցում՝ 22 (10,9%) հիվանդներ,
- մեղիոպատելյար ծալքի գերաճի դեպքում՝ դրա հեռացում՝ 48 (23,8%) հիվանդ,
- ազատ հոդային մարմինների հեռացում՝ 8 (4%) հիվանդ,

Բնական է, որ այս վիրահատությունները տարբեր տարբերակներով գուգակցվել են:

Հիվանդների 11 ստուգիչ խումբը (85 դեպք - 29,6%) միջային մահիկի վնասվածքի կապակցությամբ բուժվել էր հետազոտության սկզբնական փուլերում, երբ դեռ չէին մշակված վերոհիշյալ դասակարգումը և բուժման տակտիկան: Այս իսկ պատճառով այս խմբում օգտագործվել են արթրոսկոպիկ մահիկահատման համընդհանուր ընդունված տարբերակներ:

Այսպես, միջային մահիկի ոչ խնայող (ոչ օրգանպահպանողական) ռեզեկցիան կատարվել է 43 (50,6%), սուբտոտալ մահիկահատումը՝ 38 (44,7%) և տոտալ մահիկահատումը՝ 4 (4,7%) հիվանդների մոտ:

Նշված վիրահատությունները մի քանի տարբերակներով գուգակցվել են մասնակի սինովէկտոմիայի՝ 68 դեպք - 80%, մեղիոպատելյար ծալքի հեռացման՝ 25 (29,4%), հոդաճառի մեխանիկական մշակման՝ 15 (17,6%) և ազատ հոդային մարմնիկների հեռացման՝ 6 (7%) միջամտությունների հետ: Անհրաժեշտ է նշել, որ այս խմբում հոդամակերեսների կոբյացիոն մշակում չի կատարվել:

### **Արթրոսկոպիկ վիրահատությունների դեխնիկան:**


Բոլոր վիրահատությունները կատարվել են ողնուղեղային անզգայնացման պայմաններում: Պնևմատիկ օղալարանի տեղադրումից հետո վիրահատությունները սկսում են արթրոսկոպիկ առաջադրսային մուտքից: Ծնկահողի  $60^{\circ}$  տակ ծալման պայմաններում ծնկոսկրի ստորին քսեռից 1 սմ ցած և սեփական կապանից 1սմ դրսայնորեն հորիզոնական ուղղությամբ կատարվում է մաշկի 1 սմ կտրվածք: Հոդաշապիկը հատվում է ուղղաձիգ ուղղությամբ: Դեպի հոդախոռոչ է մտցվում  $30^{\circ}$  տելեսկոպը, որի միջոցով կատարվում է հոդի առաջնային զննում, վնասվածքի հայտնաբերում և գնահատում:

Կախված վնասվածքի տեսակից և տեղակայումից առաջամիջային ստանդարտ մուտքը կարող է գտնվել առաջադրսային մուտքից ներքև կամ վերև:



Առաջամիջային մուտքից ստուգիչ կեռիկի օգնությամբ գնահատվում է մահիկի վնասված հատվածի չափը, սահմանները, դեպի հոդաճեղք ախտաբանական շարժունությունը, կայացվում է վերջնական տարբերակում և վիրահատության տեսակի ընտրություն:

### ***Մահիկի մոդելավորող ռեզեկցիա:***



Մահիկահատման մեր կողմից ձևափոխված այս տարբերակն իրականացվում է մահիկահատիչ կրծանների օգնությամբ, որոնք կարող են լինել ուղիղ կամ Էլ աջ կամ ձախ թեքված: Վնասված ամբողջ հատվածը հեռացվում է նույր աստիճանական շարժումների միջոցով՝ սկսած հենց բուն վնասվածքից մինչև անվնաս գոտի: Այնուհետև կատարվում է մահիկի աղեղնաձև մոդելավորում՝ սկզբում վնասված գոտուց դեպի հետ, ապա դեպի առաջ ուղղություններով (Նկարներ 20, 21, 22):



**Նկար 20. Միջային մահիկի շրջանաձև վնասվածքի սխեմատիկ պատկեր:  
Կատարվել է մահիկի մոդելավորող ռեզեկցիա:**



**Նկար 21. Միջային մահիկի ռադիալ անավարտ վնասվածքի սխեմատիկ պատկեր:  
Կատարվել է մահիկի մոդելավորող ռեզեկցիա:**



**Նկար 22. Միջային մահիկի թեք անավարտ վնասվածքի սխեմատիկ պատկեր:  
Կատարվել է մահիկի մոդելավորող ռեզեկցիա:**

Զնավորված գոտու վերջնական հարթեցումն իրականացվում է կորյացիոն սարքի օգնությամբ (Նկար 23):




**Նկար 23. Կորյացիոն սարքի արտաքին տեսքը:**

Անհրաժեշտության դեպքում կատարվում են լրացուցիչ միջամտություններ (սինովիկոտոմիա, մեղիոպատելյար ծալքի հեռացում, հոդամակերեսների մշակում և այլն) համընդահուր եղանակով: Արթրոսկոպիկ մուտքերը կարվում են մեկական կարերով: Կատարվում է էլաստիկ բինտավորում և ծնկահոդն անշարժացվում է կոշտ ֆիքսատորով:

#### **Մահիկի վերականգնում Պ-ձև կարերով (outside-in եղանակով)**


Այս եղանակով միջային մահիկի վերականգնումը կարարվում է 2 էպիդուրալ ասեղների միջոցով: Առաջին ասեղը, որի մեջ գրնվում է կարանյութը, արթրոսկոպիկ

հսկողության ներքո ներմաշկային անց է կացվում դեպի հոդաճեղը՝ մահիկի հասպության միջով, անցնելով մահիկի վնասված գույրուց դեպի հետ ընկած հարվածով (Նկար 24):



**Նկար 24. Կարանյութով էպիդուրալ ասեղը անցնում է վնասվածքից դեպի հետ ընկած հատվածով (սխեմա):**

Երկրորդ ասեղն անցնում է նոյն եղանակով, բայց արդեն վնասվածքից դեպի առաջ ընկած հարվածով: Այդ ասեղի միջով դեպի հոդախառոչ է մყցվում մանդրենը, որի օղաձև ծայրով բռնվում է կարաթելը և քաշվում դեպի դուրս: Երկու թելերի միացման շրջանում կարարվում է փոքր մաշկային կրովածք, բութ եղանակով բացազարում է ենթամաշկային բջջանքը, որից հետո թելերը կապվում են, իսկ հանգույցը ձգվում է արթրոսկոպի հսկողության ներքո՝ դեղակայվելով արդահոդային: Նոյն եղանակով դիպվում է երկրորդ Պ-ձև հորիզոնական կարը:




**Նկար 25. Մահիկի ռադիալ ավարտված վնասվածքի վերականգնումը երկու Ո-ձև հորիզոնական կարերով (սխեմա) :**

Արթրոսկոպիկ մուղքերը կարվում են մեկական կարերով: Դիրվում է էլաստիկ վիրակապ և հոդի ժամանակավոր անշարժացում:

#### **Մահիկ-հարհոդաշապկային վերականգնում:**

Վերականգնման այս եղանակը նույնական է outside-in տեխնիկայով, բայց այս դեպքում դրվում են ուղղահայաց կարեր: Կախված վնասվածքի չափերից կարերի քանակը կարող է լրացնալ: Սովորաբար դրվում են 1-ից 3 իրար հաջորդող կարեր (Նկար 26):



**Նկար 26. Մահիկի հարհոդաշապկային վնասվածքը վերականգնվել է 3 իրար հաջորդող կարերով (սխեմա) :**

Հազվագյուտ դեպքերում մեր կողմից օգտագործվել է նաև all inside եղանակը, որը պահանջում է հարուկ գործիքների առկայություն (Նկար 27):



**Նկար 27. All-inside եղանակի համար նախատեսված գործիքները:**

Հիվանդների լլ ստուգիչ խմբում կատարվել են արթրոսկոպիկ տարբեր մահիկահատումներ՝ հանընդհանուր ընդունված տեխնիկաների կիրառմամբ:

### **3.3.3. Հետվիրահատական շրջանը և հիվանդների վերականգնողական բուժումը**

Բոլոր 287 հիվանդները հետվիրահատական շրջանում ստացել են ցավազրկողներ, ոչ ստերոիդ հակաբորբոքիչներ, հակամակարդիչ միջոցներ և հակաբիոտիկներ ընդունված սխեմաներով և չափաբաժիններով: Կատարվել են վիրակապություններ, իսկ խիստ հազվագյուտ դեպքերում՝ հոդի պունկցիա: Վիրահատության երկրորդ օրվանից հիվանդները քայլել են հենակների օգնությամբ՝ աստիճանաբար ծանրաբեռնելով վիրահատված վերջույթը: Արտաքին անշարժացումը սովորաբար հանվել է 4-5-րդ օրվանից: Առաջին երկու շաբաթվա ընթացքում հիվանդները կատարել են քառագլուխ մկանի իզոմետրիկ վարժություններ: Դրանց շարքին են դասվել հետևյալ վարժությունները.

1. Մեջքի վրա պառկած և ծնկահողը օրթեզով ֆիքսված վիճակում կատարվում է վերջույթի վեր բարձրացում 3-5 վայրկյանի ընթացքում: Կատարվում է ամեն 1-2 ժամը մեկ՝ 10 վարժություն:
2. Մեջքի վրա պառկած վիճակում իրականացվում է ազդրի բոլոր մկանների իզոմետրիկ կծկում: Կատարվում է 10-15 անգամ, 3 մոտեցում 15 վայրկյան ընդմիջումներով, ամեն 2 ժամը մեկ:
3. Մեջքի վրա պառկած վիճակում վիրահատված վերջույթը ուղիղ բարձրացվում է վերև, այնուհետև կատարվում զատում և առբերում օդում: Կատարվում է 5-10 անգամ, ամեն 2 ժամը մեկ:

Սկսած 3-րդ շաբաթից հիվանդները կատարել են ակտիվ դինամիկ վարժություններ (ծալում-տարածում): Հոդի ծանրաբեռնումով ուղեկցվող վարժություններն իրականացվել են վիրահատությունից 1 ամիս հետո ռետինե ժապավենների կամ ծանրոցների օգնությամբ: Դրանց շարքին են դասվում՝

1. Առողջ կողմի վրա պառկած վիճակում իրականացվում է վիրահատված վերջույթի զատում 10 վայրկյան տևողությամբ: Կատարվում է 10 անգամ, ամեն 2 ժամը մեկ:
2. Փորի վրա պառկած վիճակում և սրունք-թաթային հոդի շրջանում ռետինե ժապավենի առկայությամբ կատարվում է վերջույթի դանդաղ ծալում և տարածում 10 վայրկյան տևողությամբ, ամեն 2-3 ժամը մեկ:
3. Աթոռին նստած, ծունկը ծալած և ոտնաթաթի վրա ծանրոցի առկայության պայմաններում իրականացվում է սրունքի տարածում: Կատարվում է 10-15 անգամ՝ 5 մոտեցում 20 վայրկյան ընդմիջումներով, ամեն 2-3 ժամը մեկ:
4. Մեջքի վրա պառկած վիճակում վիրահատված վերջույթը ծալվում է մինչև  $30^{\circ}$  և բարձրացվում մահճակալի մակարդակից վեր: Այս դիրքում սրունքը տարածվում և ծալվում է 10-15 անգամ, այնուհետև ոտնաթաթի վրա ավելացվում է 1-3 կգ քաշով ծանրոց: Կատարվում է 3 մոտեցում՝ 15 վայրկյան ընդմիջումներով, ամեն 2-3 ժամը մեկ:
5. Մեջքի վրա պառկած վիճակում վիրահատված վերջույթը դրվում է բարձր վրա այնպես, որ ծնկահողը ծալված լինի  $45^{\circ}$  անկյան տակ: Հիվանդը կատարում է

տարածում՝ աշխատելով վերջոյթը պահել այս դիրքում 10 վայրկյանի ընթացքում: Կատարվում է մաքսիմալ ծանրաբեռնվածության մոտ 75%-ի չափով, 20 անգամ՝ 3 մոտեցում 30 վայրկյան ընդմիջումներով, 3 օրվա ընթացքում:

6. Աթոռին նստած, ծնկահողի ծալած և ոտնաթաթի վրա 1-3 կգ ծանրոցի առկայության պայմաններում իրականացվում է սրունքի տարածում: Կատարվում է մաքսիմալ ծանրաբեռնվածության 75%-ի չափով 20 անգամ, 3 մոտեցում՝ 30 վայրկյան ընդմիջումներով, օրը 3 անգամ:
7. Վիրահատված վերջոյթի վրա կանգնած և ծնկահողը  $30-80^{\circ}$  ծալած վիճակում կատարվում են ճոճքային և պտտային շարժումներ մյուս վերջոյթով  $30-60$  վայրկյանի ընթացքում: Մեկ սերիայի ընթացքում կատարվում է 6 վարժություն, 2 րոպե ընդմիջումներով:
8. Հիվանդը ընդունում է լեռնադահուկորդի դիրք ծնկահոդերը ծալելով  $30-60^{\circ}$  և պահում է այս դիրքում  $30-60$  վայրկյան, 2 րոպե ընդմիջումներով:

Հիվանդների հիմնական խմբում (202 հիվանդ)՝ վիրահատությունից 2 շաբաթ հետո, կատարվել են նաև հիալուռոնաթթվի տարբեր ածանցյալների ներհոդային ներարկումներ (1-3 սրսկում): Այս հիվանդները, սկսած 10-րդ օրվանից, ստացել են նաև խոնդրոպրոտեկտորներ (գյուկոզամին և խոնդրոիտինի սուլֆատ)հաբերի կամ դեղապատիճների ձևով՝ 5-6 ամիս տևողությամբ:

Այսպիսով միջային մահիկի վնասվածքների արթրոսկոպիկ բուժման տարբերակված տակտիկան և համարժեք օրգանոպահպանողական վիրահատությունները, թույլ են տվել վերականգնել ախտահարված հոդի ֆունկցիան և բարելավել բուժման արդյունքները: Այս հարցերին է նվիրված ածխատանքի հաջորդ վերջին գլուխը:

#### **ԳԼՈՒԽ 4.**

### **ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Անհրաժեշտ է միանգամից նշել, որ վաղ հետվիրահատական փուլում 287 վիրահատված հիվանդների շրջանում լուրջ բարդություններ չեն դիտվել; Խստ հազվագյուտ դեպքերում առկա է եղել հեմարթրոզ, որը լիկվիդացվել է պունկցիայի միջոցով: Հիվանդները սովորաբար դուրս են գրվել վիրահատությունից 7-8 օր հետո և հետագա վերականգնողական բուժումը ստացել են ամբողատոր կարգով:

Արթրոկոսափիկ բուժման հեռակա արդյունքներն ուսումնասիրվել են 267 (93%) հիվանդի մոտ՝ 1-ից 4 տարի (միջինը 2-2,5 տ) ժամանակահատվածում: Մնացած 20 հիվանդները տարբեր պատճառներով դուրս են մնացել մեր տեսադաշտից:

Բուժման հեռակա արդյունքները գնահատվել և վերլուծվել են մեր կողմից ձևափոխված և ծնկահոդի ախտահարումներին հարմարեցված 4-բալանց սանդղակով (տես Ենթագլուխ 2.1):

Նշված վերլուծությունն իրականացվել է վերոհիշյալ երկու խմբերով: I հիմնական խմբում կրկնակի հետազոտվել են 183, իսկ II ստուգիչ խմբում՝ 84 հիվանդ:


#### **4.1. Հիվանդների I խմբի բուժման հեռակա արդյունքները**

Այս խմբում մեր տեսադաշտից դուրս են մնացել 19 հիվանդ: Մնացած 183 դեպքերում հիվանդների մոտ կատարվել էին հետևյալ արթրոսկոպիկ վիրահատությունները (Նկար 28):

- մահիկի մոդելավորվող ռեզեկցիա – 103 (56,3%),
- մահիկի կարում- 37 (20,2%),
- մահիկի հոդաշապկային վերականգնում - 26 (14,2%),
- մահիկի պարցիալ ռեզեկցիա – 17 (9,3%):

Կրկնակի հետազոտությունների ժամանակ 81 (44,3%) հիվանդ վիրահատված վերջույթի և ծնկահոդի կողմից որևէ գանգատ չեն ներկայացրել: Բացակայել էին ցավային զգացողությունները, շարժումների սահմանափակումները, կաղությունը: Ունտ-

գենաբանական և/կամ գերձայնային հետազոտումներով (եթե վերջինս կատարվել էր) վիրահատված ծնկահոդում ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:



**Նկար 28. I-ին խմբում կատարված վիրահատական  
միջամտությունները ըստ տեսակի**

Հիվանդները նշել էին, որ լրիվ վերականգնվել է իրենց ֆիզիկական ակտիվությունը: Նրանք շարունակել էին զբաղվել նախկին մասնագիտական և/կամ սպորտային գործունեությամբ և գոհ էին վիրահատության արդյունքից: Պետք է նշել նաև, որ այս 81 դեպքում հիվանդների մոտ իրականացվել էին մահիկի մոդելավորող (37 դեպք) կամ պարցիալ (4 դեպք) ռեզեկցիաներ և մահիկի (27 դեպք) կամ մահիկ-հոդաշապկային (13 դեպք) վերականգնումներ:

Այսպիսով, ըստ 4 բալանց սանդղակի, նշված 81 (44,3%) հիվանդի մոտ վիրահատական բուժման արդյունքները գնահատվել են որպես «գերազանց»:

Կրկնակի հետազոտման ժամանակ 63 (34,4%) հիվանդներ գանգատվում էին ծանրաբեռնումների արդյունքում առաջացող ծնկահոդի շրջանի աննշան ցավերից, որոնք հեշտությամբ վերանում էին հանգստի կամ ցավազրկող միջոցների ընդունման դեպքում:

Արտաքին գննման ժամանակ ծնկահոդի կողմից տեսանելի փոփոխություններ չեն արձանագրվել, շարժումների ծավալը հիմնականում համապատասխանել է նորմային կամ էլ դիտվել է  $10^{\circ}$ - $20^{\circ}$  սահմանափակում (22 դեպք):

Կաղությունը այս հիվանդների մոտ բացակայում էր, և քայլելու դեպքում նրանք չեն օգտվում հենման օգնող միջոցներից:

Ուենտգենյան և գերծայնային հետազոտումներով վիրահատված ծնկահոդում ախտաբանական փոփոխություններ չեն արձանագրվել:

Հիվանդները նշել են, որ հիմնականում շարունակել են իրենց մասնագիտական և/կամ սպորտային գործունեությունը:

Անհրաժեշտ է շեշտել, որ այս 63 դեպքում կատարվել էին նույնատիպ մահիկապահանողական վիրահատություններ՝ մոդելավորող (39 դեպք) և պարզիալ ռեզեկցիա՝ (5 դեպք), մահիկի (9 դեպք) կամ մահիկիոդաշապկային (10 դեպք) վերականգնումներ:

Այսպիսով նշված 63 (34,4%) հիվանդների շրջանում ըստ 4-բալանց սանդղակի, վիրահատական բուժման արդյունքները գնահատվել են որպես «լավ»:

Մնացած 39 (21,3 %) հիվանդները՝ կրկնակի հետազոտման ժամանակ, գանգատվում էին վիրահատված ծնկահոդի շրջանի չափավոր ցավային զգացողություններից, որոնք ունեին ինչպես մեկնարկային, այնպես էլ ծանրաբեռնումների հետ կապված բնույթ: Հիվանդները նշում էին, որ ցավերը հիմանկանում վերանում էին ցավազրկող կամ ոչ ստերոիդ հակաբորբոքիչ միջոցների ընդունման պարագայում: Ծալման – տարածման ծավալը ծնկահոդում սահմանափակված էր և կազմում էր  $40^{\circ}$ - $60^{\circ}$ : Դիտվում էր նաև աննշան չափավոր կաղություն, որի պատճառով հիվանդների մի մասը (17 հոգի) քայլելուց օգտվում էր ձեռնափայտից:

Այս հիվանդները նշում էին նաև ֆիզիկական և մասնագիտական ակտիվության նվազում, որի պատճառով նրանց մի մասը փոխել էր աշխատանքի բնույթը:

Անհրաժեշտ է փաստել, որ այս հիվանդների մոտ կատարվել էին հետևյալ վիրահատություններ՝ մահիկի մոդելավորող (27 դեպք) և պարզիալ (8 դեպք) ռեզեկցիաներ կամ մահիկի (1 դեպք) և մահիկիոդաշապկային (3 դեպք) վերականգնումներ:

Ունտգենաբանորեն այս խմբում դիտվում էր վիրահատված ծնկահողի հոդաճեղքի նեղացում՝ 3-4 մմ, սուբխոնդրալ չափավոր սկլերոզ, իսկ որոշ դեպքերում՝ նաև եզրային օստեոֆիտներ:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս 39 հիվանդից 30-ի մոտ I և II աստիճանի գոնարթրոզի ռենտգենաբանական նշանները դիտվել էին նախքան վիրահատական բուժումը, այսինքն նրանք ընդունվել էին մեր կլինիկա արդեն իսկ գոնարթրոզի առկայությամբ: Ընդ որում, 26 դեպքում (14,2%)՝ մինչ վիրահատությունը, առկա էր I և 4 (2,2%) դեպքում՝ II աստիճանի գոնարթրոզ: Մեր կողմից իրականացված վիրահատական բուժումից հետո նշված հիվանդների մոտ ռենտգենաբանորեն այդ իմաստով՝ փոփոխություններ չեն դիտարկվել:

Մնացած 9 դեպքում հետվիրահատական գոնարթրոզի զարգացման պատճառ էին հանդիսացել մահիկի բազմասեկտոր և բազմատեսակ, համալիր վնասվածքները, որոնք ուղեկցվում էին շրջանաձև արտահայտված դիսֆունկցիայով: Այս դեպքերում հարկադրաբար կատարվել էր մահիկի պարցիալ ռեզեկցիա:


Պետք է նշել, որ այս 39 հիվանդները, կրկնակի հետազոտումից հետո, ամբողատոր կարգով ստացել են լրացուցիչ կոնսերվատիվ բուժում (հիալուռոնաթթվի ներփակումներ, ոչ ստերոիդ հակաբռոքքիչներ, գլուկոզամին, խոնդրոիտին, ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բուժում), որի արդյունքում գրանցվել էր հիվանդության երկարատև ռեմիսիա:

Այսպիսով, նշված 39 (21,3%) հիվանդների մոտ արթրոսկոպիկ բուժման հեռակա արդյունքները գնահատվել են որպես «բավարար»:

Նկար 28-ում ներկայացված են հիվանդների հիմնական խմբի (183 դեպք)՝ մեր կողմից առաջարկված արթրոսկոպիկ տակտիկայով բուժման հեռակա արդյունքները:

Ինչպես երևում է 29 նկարից, հիվանդների հիմնական խմբում, մոտ 80% դեպքերում արձանագրվել են գերազանց և լավ հեռակա արդյունքներ: 39 հիվանդների մոտ դիտված բավարար արդյունքները բացատրվում են այն փաստով, որ այդ հիվանդների մեծ մասը մեզ էր դիմել նախնական վնասվածքը ստանալուց 2-3 տարի հետո, երբ վնասված հոդում արդեն հասցրել էին զարգանալ գոնարթրոզի անվերադարձ երևոյթներ:

## **Հիվանդների I խմբի (183դեպք) վիրահատական բուժման արդյունքները**



**Նկար 29. Հիվանդների I խմբի (183դեպք) վիրահատական բուժման արդյունքները:**

Մյուս մասի մոտ ծնկահոդում առկա էին միջային մահիկի այնպիսի բազմասեկտոր վնասվածքներ, որ հնարավոր չէր կատարել դրա պահպանողական վիրահատություններ:

### **4.2. Հիվանդների II ստուգիչ խմբի բուժման արդյունքները**

II ստուգիչ խմբում կրկնակի հետազոտման են ենթարկվել 84 հիվանդ: Մեկ հիվանդ դուրս է մնացել մեր տեսադաշտից: Պետք է հիշեցնել, որ այս հիվանդների մոտ կատարվել էին միջային մահիկի ոչ խնայող, սուբտոտալ, իսկ երբեմն նաև տոտալ մահիկահատումներ:

Դրանցից 23 (27,4%) հիվանդ՝ հեռակա արդյունքները գնահատելիս, որևէ գանգատ չէին ներկայացնում: Վիրահատված հոդում շարժումները լրիվ ծավալով էին: Ունտգենաբանորեն (և/ կամ գերձայնային) հետազոտություններով վիրահատված ծնկահոդում ախտաբանական փոփոխություններ չէին արձանագրվում: Այս հիվանդների մոտ լրիվ վերականգնվել էր նրանց ֆիզիկական ակտիվությունը: Արդյունքում նրանք գոհ էին կատարված վիրահատությունից:

Սակայն պետք է նշել, որ այս 23 դեպքից 22-ում կատարվել էր միջային մահիկի մասնակի, ոչ խնայող ռեզեկցիա, այսինքն որոշ չափով պահպանվել էր դրա շրջանաձև ֆունկցիան: Միայն մեկ հիվանդի մոտ իրականացվել էր սուբտոտալ մահիկահատում:

Այսպիսով 23 (27,4 %) դեպքում բուժման հեռակա արդյունքները գնահատվել են «գերազանց»:

30 (35,7%) հիվանդ գանգատվում էին ծնկահոդի շրջանի՝ ֆիզիկական ծանրաթեոնումների հետ կապված ցավերից, որոնք վերանում էին հանգստից կամ ցավազրկողների ընդունումից հետո:

Արտաքին գննման ժամանակ ծնկահոդի կողմից որևէ փոփոխություններ չեն նկատվում, իսկ շարժումների ծավալը հոդում աննշան սահմանափակված էր՝  $10^{\circ}$ - $20^{\circ}$ -ի սահմաններում:

Հիվանդների քայլվածքը խանգարված չէր, և նրանք չեն օգտվում հենման լրացուցիչ միջոցներից:

Ունտգենաբանորեն վիրահատված հոդում ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվում:

Հիվանդների ֆիզիկական, մասնագիտական և/կամ սպորտային ակտիվությունը հիմնականում վերականգնվել էր, և նրանք գոհ էին կատարված միջամտության արդյունքից: Պետք է նշել, որ այս խմբում՝ 30 դեպքից 19-ում կատարվել էր մահիկի ոչ խնայող մասնակի, իսկ 11-ում՝ սուբտոտալ մահիկահատում:

Այսպիսով այս 30 (35,7 %) դեպքում բուժման հեռակա արդյունքները գնահատվել են որպես «լավ»:

28 (33,3%) դեպքում հիվանդները գանգատվում էին ծնկահոդի շրջանի չափավոր ցավային զգացողություններից, որոնք առաջանում էին առավոտյան կամ էլ նոյն իսկ աննշան ծանրաթեոնումների հետևանքով: Այս ցավային համախտանիշը բավականին դժվար էր վերանում ցավազրկող դեղամիջոցներից: Շարժումների ծավալն ախտահարված ծնկահոդում սահմանափակված էր  $40^{\circ}$ -ից  $60^{\circ}$  սահմաններում:

Ունտգենաբանորեն դիտվում էր հոդաճեղքի նեղացում (3-5 մմ), սուբխոնդրալ չափավոր սկլերոզ, երբեմն՝ եզրային օստեոֆիտներ: Պետք է նշել, որ այս 28 դեպքից 13 (15,5%) հիվանդի մոտ՝ նախքան վիրահատությունը, արդեն իսկ առկա էին գոնարթ-

րոզի ռենտգենաբանական նշաններ, ընդ որում՝ 8 դեպքում հայտնաբերվել էր I աստիճանի և 5 դեպքում՝ II աստիճանի արթրոզ:

Մնացած 15 դեպքում գոնարթրոզը զարգացել էր վիրահատությունից հետո՝ հիմնականում 1-2 տարվա ընթացքում:

Այսպիսով, ընդհանուր առմամբ այս 28 հիվանդների մոտ առկա էր գոնարթրոզ, որոնցից 9 դեպքում այն I և 19 դեպքում՝ II աստիճանի էր:

Հիվանդները նշում էին ֆիզիկական և մասնագիտական ակտիվության զգալի սահմանափակումներ, չնայած դրան նրանցից մոտ 50%-ը այնուամենայնիվ գտնում էր, որ վիրահատությունից հետո առկա է որոշակի բարելավում:

Պետք է նշել, որ այս հիվանդների մոտ 26 դեպքում կատարվել է սուբստոտալ, իսկ մեկական դեպքերում՝ ոչ խնայող և տոտալ մահիկահատումներ: Այսպիսով այս 28 (33,3%) հիվանդների մոտ՝ համաձայն 4-բալանոց սանդղակի բուժման արդյունքները գնահատվել են որպես «բավարար»:

Կրկնակի հետազոտման ժամանակ 3 (3,6%) հիվանդներ գանգատվում էին վիրահատված ծնկահողի շրջանի արտահայտված ցավերից, որոնք դժվարությամբ էին վերանում ցավազրկողների ընդունումից: Այս բոլոր հիվանդները՝ վիրահատությունից հետո տարբեր ժամկետներում, հոսպիտալացվել էին կոնսերվատիվ բուժում ստանալու նպատակով:

Շարժումների ծավալը հոդում զգալի սահմանափակված էր:

Քայլելու ժամանակ առկա էր կաղություն, որի կապակցությամբ նրանք օգտվում էին ձեռնափայտից:


Ռենտգենաբանորեն հայտնաբերվում էր հոդաճեղքի զգալի նեղացում, սուբխոնդրալ արտահայտված սկլերոզ, կիստոզ օջախներ և եզրային օստեոֆիտներ (գոնարթրոզ III<sup>o</sup>):

Պետք է նշել նաև, որ այս հիվանդների մոտ կատարվել էր տոտալ մահիկահատում:

Այսպիսով այս 3 (3,6%) դեպքում բուժման ելքը գնահատվել է որպես «վատ»:

30-րդ նկարում ներկայացված են արթրոսկոպիկ բուժման հետակա արդյունքները II ստուգիչ խմբի 84 կրկնակի հետազոտված հիվանդների շրջանում:

## Հիվանդների և ստուգիչ խմբի (84 դեպք) վիրահատական բուժման արդյունքները



### Նկար30. Հիվանդների և ստուգիչ խմբի (84 դեպք) վիրահատական բուժման արդյունքները:

Ինչպես երևում է նկար 30-ից՝ կեսից ավելի (53-63,1%) դեպքերում դիտվել են բուժման գերազանց և լավ արդյունքներ: 28 (33,3%) հիվանդի մոտ արձանագրվել են բավարար և 3 (3,6%) հիվանդի մոտ՝ վատ ելքեր:

Հիվանդների և խմբում կատարվել է բուժման արդյունքների վերլուծություն կախված իրականացված արթրոսկոպիկ միջամտությունից՝ նպատակ ունենալով որոշել տվյալ եղանակի արդյունավետությունը գոնարթրոզը կանխարգելելու տեսանկյունից: Այդ տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Ինչպես երևում է աղյուսակից ավելի արդյունավետ է եղել մահիկի ոչ խնայող (մասնակի) ռեզեկցիան (գերազանց – 22, լավ -19): Մահիկի սուբտոտալ և տոտալ մահիկահատումները հիմնականում բերել են հոդում գոնարթրոզի զարգացմանը կամ էլ արդեն իսկ եղած գոնարթրոզի խորացմանը, որի մասին վկայում են բավարար և վատ ելքերի բարձր տեսակարար կշիռները:

**Բուժման հեռակա արդյունքները կախված կատարված  
վիրահատությունից (II խումբ - 84 հիվանդ)**

Բուժման արդյունքներ կատարված վիրահատությունը	Գերա- գանց	Լավ	Բավարար (արթորզ I-II°)	Վատ (արթորզ III°)	Ընդամենը
Մահիկի ոչ խնայող ռեզեկցիա	22	19	1	--	42
Սուբտոտալ մահիկահատում	1	11	26	--	38
Տոտալ մահիկահատում	--	--	1	3	4
Ընդամենը	23 (27,4 %)	30 (35,7%)	28 (33,3 %)	3 (3,6 %)	84 (100 %)

**4.3.Հիվանդների I և II խմբերի բուժման հեռակա  
արդյունքների համեմատական վերլուծությունը**

Մեր կողմից կատարվել է հիվանդների I և II խմբերի բուժման արդյունքների համեմատական վերլուծություն նպատակ ունենալով պարզաբանել արթրոսկոպիկ բուժման վերոհիշյալ երկու տակտիկաների արդյունավետությունը:

Հիվանդների I խմբում բուժման հեռակա արդյունքները ուսումնասիրելիս I – II աստիճանի գոնարթորզ դիտվել է 39 (21,3%) դեպքում (հիվանդների ընդհանուր քանակը – 183 հոգի): Սակայն նրանցից 30-ի մոտ գոնարթորզը ախտորոշվել էր մինչև կատարված վիրահատությունը: Ընդ որում 26 դեպքում առկա էր I և 4 դեպքում II° արթորզ: Վիրահատական բուժումից հետո այս հիվանդների մոտ հոդում դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխությունների առաջխաղացում չի արձանագրվել: Մնացած 9 (4,9%) հիվանդի մոտ հետվիրահատական կրկնակի հետազոտման արդյունքում դիտվել է I° գոնարթորզ, որի պատճառ էին հանդիսացել մահիկի բարդ բազմասեկտոր համալիր վնասվածքները և հարկադրաբար կատարված մահիկի պարցիալ ռեզեկցիան:


Հիվանդների II ստուգիչ խմբում (84 հիվանդ) կրկնակի հետազոտման արդյունքում ծնկահողի դեֆորմացնող արթորզ արձանագրվել է 31 (36,9%) դեպքում: Դրանցից 13 դեպքում այն առկա էր մինչև վիրահատական բուժումը, ընդ որում 8 դեպքում տեղի

ուներ I և 5 դեպքում՝ II աստիճանի գոնարթրոզ: Վիրահատությունից հետո միջինը 2-3 տարվա ընթացքում, այս հիվանդների շրջանում դիտվել է գոնարթրոզի երևոյթների առաջխաղացում (I° գոնարթրոզ - 3 դեպք, II° - 9 դեպք, III° - 1 դեպք):

Մնացած 18 (21,4%) հիվանդների շրջանում գոնարթրոզը զարգացել էր վիրահատական բուժումից հետո նույն ժամկետներում, ընդ որում I աստիճանի ախտահարում դիտվել էր 2, II աստիճանի՝ 14 և III աստիճանի՝ 2 դեպքերում:

Վերոհիշյալից երևում է, որ միջային մահիկի վնասվածքների մեր կողմից առաջարկված արթրոսկոպիկ բուժման տարբերակից տակտիկան՝ համեմատած համընդհանուրի, հավաստի թույլ է տվել մոտ 4 անգամ նվազեցնել հետվիրահատական գոնարթրոզի զարգացման հավանականությունը (I խումբ - 4,9 % և II խումբ- 21,4% ) ( $p < 0,001$ ,  $\chi^2 = 11,7$ ): Ընդ որում, եթե աճառի դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություններն այնուամենայնիվ առաջացել են, ապա դրանք՝ համեմատած II ստուգիչ խմբի հետ, եղել են կլինիկոռենտգենմարանորեն ավելի թույլ արտահայտված:

Նկար 31-ում ներկայացված են հիվանդների բուժման հեռակա արդյունքները ըստ երկու խմբերի:



Նկար31. Բուժման հեռակա արդյունքները ըստ 2 խմբերի

Ինչպես երևեմ է նկարից արթրոսկոպիկ բուժման գերազանց արդյունքները հիվանդների և խմբում՝ համեմատած և խմբի հետ, հավաստի ավելացել են մոտ 1,5 անգամ (44,3% և 27,4%) ( $p<0,01$ ,  $\chi^2=6,9$ ): Լավ արդյունքները երկու նշված խմբերում դիտվել են մոտավորապես նույն տոկոսային քանակությամբ, իսկ բավարար արդյունքները և խմբում նվազել են 12%-ով (21,3% և 33,3%) ( $p<0,05$ ,  $\chi^2=4,43$ ): և խմբում 3,6% դեպքերում դիտվել են նաև բուժման վատ արդյունքներ, այնինչ և խմբի հիվանդների շրջանում դրանք ընդհանրապես բացակայել են:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ հիվանդների և խմբում՝ համեմատած և խմբի հետ, առկա է արթրոսկոպիկ բուժման գերազանց արդյունքների ավելացում ի հաշիվ բավարար արդյունքների նվազեցման և վատ արդյունքների բացառման: Այսինքն առկա է բուժման վերջնական ելքերի որակական բարելավում:

Այսպիսով ծնկահողի միջային մահիկի վնասվաճքների մեր կողմից առաջարկված աշխատանքային դասակարգումը և դրա հիման վրա մշակված արթրոսկոպիկ բուժման տարրերակված տակտիկան թույլ տվեցին հիվանդների մոտ զգայի նվազեցնել հետվիրահատական գոնարթորողի զարգացման հավանականությունը, դրանով իսկ որակապես բարելավել բուժման վերջնական արդյունքները, որն ի սկզբանե հանդիսացել էր այս աշխատանքի հիմնական նպատակը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օստեոարթրոզին նվիրված են բազմաթիվ գիտական աշխատանքներ: Դրանցում մանրամասն լուսաբանվում է այդ հիվանդության առաջացման հիմնական պատճառները, ախտահարման զարգացումը, ինչպես նաև բուժման և կանխարգելման մոտեցումները: Չնայած դրան, այն հանդիսանում է հասուն բնակչության հենաշարժական համակարգի առավել տարածված ախտահարումներից մեկը [11,12,18,28,37,47, 61,69]:

Օստեոարթրոզը հիմնականում ախտահարում է ստորին վերջույթների խոշոր հողերը: Այսպես, գոնարթրոզի զարգացման ռիսկը 35 տարեկանից բարձր կանաց շրջանում կազմում է 68%, իսկ 45 տարեկանից բարձր տղամարդկանց շրջանում՝ 76,8% [1,82,85,90]:

Երկար տարիներ օստեոարթրոզի զարգացման պատճառ էին հանդիսանում ծերացման գործընթացները: Սակայն այժմ ենթադրում են, որ այդ ախտաբանության պաթոգենեզը կազմված է 2 բաղկացուցիչից՝ ախտաբանական սթրես, այսինքն գերծանրաբեռնվածություն հողի վրա վնասվածքների կամ դիսպլազիայի արդյունքում: Հոդաճառի վաղաժամ մաշվածության պատճառ կարող է լինել նաև սովորական ծանրաբեռնումների նկատմամբ աճառի տոլերանտության իջեցումը նյութափոխանակության խանգարումների հետևանքով [1,92,99,105,125]:

Գոնարթրոզի առաջացման հաստատված պատճառներից է նաև գենետիկ գործոնների դերը, որոնց շարքին են դասվում հոդաշապկի, ուսկրերի և ջլակապանային համակարգի բնածին անոմալիաները [59; 139; 400]:

Գոնարթրոզի զարգացման կարևոր գործոն է հանդիսանում ծնկահոդի վնասվածքը: Հեղինակները նշում են, որ գոնարթրոզի առաջացման գործընթացում մեծ դեր ունի երիտասարդ տարիքում կրած վնասվածքը: Վերջինիս դեպքում ծնկահոդում դեգեներատիվ և դիստրոֆիկ փոփոխությունների ռիսկը աճում է 5,17 անգամ [1,18,28,32,126]:

Գոնարթրոզի առաջացումը կարող է կապված լինել նաև շարունակական ծանրաբեռնման հետ, եթե տեղի է ունենում հողի միկրովնասվածքներ երկարատև ժամանակահատվածի ընթացքում: Այս գործընթացը դիտվում է հիմնականում սպորտսմեն-

ների կամ սպորտով ոչ պրոֆեսիոնալ զբաղվող անձանց շրջանում: Շփման ուժերի անհամաչափ բաշխման արդյունքում զարգանում է հոդաճառի դեգեներացիա և դիստրոֆիա [1, 105,125,126]:

Վերջին տասնամյակներում նկատվում են գոնարթրոզի երիտասարդացման միտումներ: Դրանք հիմնականում արդյունք են այն փաստի, որ երիտասարդ անձիք առավել հաճախ են զբաղվում տարբեր սպորտաձևերով: Մեծանում է ծնկահողի վնասվածքների, հատկապես մահիկների վնասվածքների տեսակարար կշիռը [17,19,32,48, 121,123]: Ըստ տարբեր հեղինակների՝ գոնարթրոզի հաճախականությունը ֆուտբոլստերի շրջանում կազմում է 16-29%, վազորդների շրջանում՝ 14-20% և ծանրամարտիկների շրջանում մոտ 31% [21,125,126]:

Մի շարք հեղինակների կարծիքով հասուն բնակչության հենաշարժական ախտահարումների արդյունքում հաշմանդամության հիմնական պատճառ է հանդիսանում ծնկահողի դեֆորմացնող արթրոզը [11,12,32,37,47]:

Վերջինս հիմնականում առաջանում է մահիկների վնասվածքների ժամանակ՝ ինչպես չբուժված կարգավիճակում, այնպես էլ սխալ կամ թերի ընտրված բուժական մոտեցումների դեպքում:

Վերջին 50 տարիների ընթացքում մոտեցումները մահիկների դերի նկատմամբ փոխվել են՝ ֆունկցիոնալ անպետք կառուցներից մինչև կենսական կարևորագույն կառուցների, որոնք մասնակցում են ծնկահողի աշխատանքին; Դրա հետ մեկտեղ զարգացում են ապրել նաև մահիկների վնասվածքների բուժման մոտեցումները:

Տարբերում են մահիկների վնասվածքների բուժման բաց (արթրոտոմիա) և փակ արթրոսկոպիկ եղանակներ: Բաց վիրահատական եղանակները ներկայումս գրեթե չեն կիրառվում, քանի որ ապացուցվել է դրանց ցածր արդյունավետությունը և բարդությունների բարձր տոկոսը:

Մահիկների վրա փակ միջամտություններ կատարելու նպատակով ներկայումս օգտագործում են արթրոսկոպիկ տարբեր եղանակներ: 20-րդ դարի 20-ական թվականներից սկսած ծնկահողի վրա կատարվել են տարբեր արթրոկոպիկ միջամտություններ: Սակայն դրանք փորձարարական էին և կրում էին եզակի բնույթ: Բացի այդ

օգտագործվում էին գործիքներ, որոնք ստեղծված էին այլ նպատակների համար (լապարուկոպ, ցիստոկոպ):

1931 թ. Ճապոնացի գիտնական Տակագին առաջարկեց առաջին արթրոսկոպը: Հետագայում նրա աշակերտները, մասնավորապես M.Vatanabi-ն շարունակեցին զարգացնել արթրոսկոպիան՝ ստեղծելով նոր ժամանակակից սարքավորումներ [4,28]: Դրանց զարգացման հետ մահսին սկսեցին կատարելագործվել նաև մահիկների վրա կատարվող միջամտությունների տեսակները: Սկզբնական շրջանում իրագործվում էին լրիվ մահիկահատումներ [29,31,130]:

Սակայն հետագայում կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ միջամտությունից հետո հեռավոր ժամկետներում դիտվում է ծնկահողի դեֆորմացնող արթրոզ: Այսպես, որոշ հեղինակներ կլինիկորեն դրսևորող գոնարթրոզ նշել են 53%, իսկ միայն արթրոզի ռենտգենաբական նշաններ՝ մոտ 40% դեպքերում [32,99,105, 125,126]:

Հաշվի առնելով այս փաստը շատ հեղինակներ ներկայումս աշխատում են հնարավորինս պահպանել մահիկի հյուսվածքը՝ կատարելով մասնակի մահիկահատումներ [38,41,55,68,70,74,75], քանի որ այս վիրահատություններից հետո դիտվում են ավելի բարենպաստ արդյունքներ: Սակայն նույնիսկ մահիկի հեռացումներից հետո հոդաճառի դեգեներատիվ փոփոխություններ այնուամենայնիվ զարգանում են [32,37,47,69]:

Այսպիսով մահիկահատումների տարբեր տեսակների հեռավոր արդյունքների մասին կարծիքները միանշանակ չեն: Այդ իսկ պատճառով մի շարք օրթոպեդներ սկսեցին իրականացնել մահիկի անոթավորված գոտու վնասվածքների վերականգնում: Սակայն հետագայում պարզվեց, որ հնարավոր է նաև այլ գոտիների վնասվածքների վերականգնում [6,7,8,13,15,28,71,72]: Ներկայումս առաջարկված են մահիկի վերականգնման երեք եղանակներ՝ ներսից դուրս, դրսից ներս, ամբողջովին ներսում [2,3,5,30,42,43, 45,50,58]:

Պետք է նշել, որ վերոհիշյալ եղանակները ունեն իրենց առավելությունները և բացասական կողմերը: Այդ իսկ պատճառով մահիկի վնասվածքների բուժման մոտեցումները շարունակում են մնալ մշտական քննարկումների և հետազոտությունների առարկա: Միանշանակ կարծիքներ չկան թարմ և հնացած վնասվածքների դեպքում

մահիկի վերականգնման տարբեր եղանակների վերաբերյալ: Այնուամենայնիվ հեղինակների մեծ մասը նշում է բարնպաստ արդյունքներ՝ համեմատած մահիկահատումների արդյունքների հետ [4]:

Չնայած մահիկների վերականգնմանը նվիրված բազմաթիվ աշխատանքներին, օրինակ ԱՄՆ-ում վերականգնման են ենթարկվում այդ կառուցի վնասվածքների ընդամենը 10%-ը, մնացած դեպքերում կատարվում են տարբեր մահիկահատումներ: Ռուսաստանում և <<-ում մահիկների կարման վիրահատությունները կրում են եզակի բնույթ [1,89,97,124,131,132,133]:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ներկայում չկան մահիկների վնասվածքներով հիվանդների ախտորոշման և բուժման մշակված ալգորիթմներ, վիճելի են բուժական արթրոսկոպիայի, մահիկների վրա կատարվող վիրահատությունների հստակ ցուցումները և հակացուցումները, լուսաբանված չեն նշված վիրահատությունների և ուշ հետվիրահատական շրջանում հնարավոր գոնարթողի զարգացման միջև եղած կապերը: Նշվածներով և այլ հարցերով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Մեր հսկողության տակ գտնվել են ծնկահոդի միջային մահիկի տարբեր բնույթի վնասվածքներ ունեցող 287 հիվանդներ, որոնք հետազոտվել և բուժվել են ՎՕԳԿ-ում 2007-2015 թվականների ընթացքում: Նրանցից 193 (67.2%)-ը արական, իսկ 94 (32.8%)-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ էին: Հիվանդների տարիքը տատանվում էր 16-ից 50 տարեկանի սահմաններում: Հիվանդների առավել մեծ խումբ են կազմել 16-ից 30 տարեկան արական սեռի անձիք՝ 101 հիվանդ: Հիվանդներից 52 (18.1%)-ը պրոֆեսիոնալ մարզիկներ էին, իսկ 98 (34.1%)-ը՝ մասնագիտությանը զուգահեռ, պարբերաբար զբաղվում էին տարբեր սպորտաձևերով:

Ծնկահոդի թարմ վնասվածքով (վաղեմությունը 1-ից 10 օր) մեզ դիմել էին ընդամենը 35 (12.2%) հիվանդ: Մնացած 252 (87.8%) դեպքերում հիվանդները կլինիկա էին ընդունվել ավելի ուշ ժամկետներում մահիկի հնացած վնասվածքներով:

Ծնկահոդի նախնական վնասվածքի կապակցությամբ համարժեք բուժում էին ստացել 252-ից 92 հիվանդ, որը կազմել էր ընդամենը 36.5%: Մնացած 160 դեպքերում

(63.5%) թույլ էին տրվել բուժման այս կամ այն սխալներ, կամ բուժումը լրիվ բացակայել էր:

Անամնեստիկ տվյալների հիման վրա մեր կողմից մշակվել են ծնկահոդի թարմ վնասվածքների ախտորոշման և բուժման որոշ ուղեցույցներ, որոնց իրականացումը մեր կարծիքով կնվազեցնի հնարավոր հեռակա բարդությունների, մասնավորապես գոնարթողի տեսակարար կշիռը:

Ախտորոշիչ ուղեցույցներ.

- ծնկահոդի հնարավորինս վաղ գերձայնային, մինի արթրոսկոպիկ կամ ՄՌԸ հետազոտումներ,
- եթե դրանք չեն կատարվել, ապա պետք է իրականացվեն գոնե թարմ վնասվածքի բուժումն ավարտելուց հետո (1-1.5 ամիս),
- հեմարթրոզը բուժելուց հետո ծնկահոդը պարտադիր պետք է զննվի մահիկների և/կամ կապանների վնասվածքն ախտորոշելու տեսանկյունից (տվյալ վնասվածքներին բնորոշ թեստեր):

Բուժական ուղեցույցներ

- ծնկահոդի թարմ վնասվածքի (հեմարթրոզի) դեպքում վերջույթի պարտադիր անշարժացում (գիպսային կապերով կամ հատուկ ֆիքսատորներով) ամենաքիչը 2-3 շաբաթ ժամկետով,
- ցուցված դեպքերում ծնկահոդի պունկցիա (վնասվածքը ստանալուց 2-3 օր հետո),

- դեղորայքային բուժում (ցավազրկողներ, ոչ ստերոիդ հակաբորբոքիչներ),
- հորմոնների ներհոդային ներարկումների բացառում,
- բոլոր դեպքերում համարժեք ֆիզոթերապևտիկ և վերականգնողական բուժում:

Ծնկահոդի միջային մահիկի վնասվածքներ ունեցող հիվանդների շրջանում ճշգրիտ ախտորոշման, ինչպես նաև հետվիրահատական տարբեր ժամկետներում անատոմիական և ֆունկցիոնալ արդյունքները գնահատելու նպատակով մեր կողմից օգտագործվել են կլինիկական, ռենտգենաբանական, սոնոգրաֆիկ, մինի-արթրոսկոպիկ, ՄՌԸ (միջուկառեզոնանսային շերտագրում) հետազոտման եղանակներ և ծնկա-

հոդի ներվիրահատականն ստուգում: Ստացված թվային տվյալները մշակվել են վիճակագրական եղանակներով:

Անկյունաչափման ժամանակ 190 (66,2%) հիվանդների մոտ ծալման-տարածման սահմանափակումներ չեն հայտնաբերվել: Առավել հազվադեպ (25-8,7% հիվանդ) դիտվել է շարժումների ծավալի  $155^{\circ}$ -ից  $160^{\circ}$  սահմանափակում (արգելափակում): 42 (14,6%) դեպքում ծավալի սահմանափակումը կազմել է  $20^{\circ}$  -  $30^{\circ}$  և 30 (10,5%) դեպքում՝  $30^{\circ}$  -  $40^{\circ}$ :

Մահիկների վնասվածքներին բնորոշ Մակ-Մարեյի և Շտեյմանի թեստերը դրական էին 179 (62,4%), իսկ միջային կոլլատերալ կապանի վնասման մասին վկայող «սթրես» թեստը՝ 11 (3,8%) հիվանդների մոտ:

Ունգենաբանական հետազոտումն իրականացվել էր բոլոր հիվանդների մոտ, ընդ որում 232 (80,8%) դեպքում ախտահարված ծնկահոդներում ունգենաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել: Մնացած 55 (19,2%) հիվանդների մոտ դիտվել են վնասված մահիկների հետևանքով առաջացած տարբեր ախտաբանական վիճակներին (սինովիտ, գոնարթրոզ և այլն) բնորոշ ունտգենաբանական նշաններ: Առավել հաճախ (55 դեպք - 19,2%) դիտվել է աննշան կամ չափավոր արտահայտված սուրխոնդրալ ուկրի սկլերոզ: Սինովիտի և հոդաշապկի հաստացման մասին վկայող վերին բունոցի մթագնում հայտնաբերվել է 54 (18,8%) դեպքերում: 37 (12,9%) հիվանդի մոտ՝ առողջ կողմի հետ համեմատած նկատվել է հոդաճեղքի հետ նեղացում մոտ 2-3 մմ չափով:

Ունտգենաբանական հետազոտման ժամանակ առավել հաճախ դիտվել է սուրխոնդրալ սկլերոզի, հոդաճեղքի նեղացման և վերին բունոցի մթագման նշանների զուգակցում, որոնց հիման վրա 55 (19,2%) հիվանդի մոտ ախտորոշվել է I-II աստիճանի գոնարթրոզ:

Գերձայնային հետազոտումը կատարվել է բոլոր 287 հիվանդների մոտ: 114 (39,7%) դեպքում ծնկահոդի և դրան հարող փափուկ հյուսվածքների կողմից ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել:

Ըստ գերձայնային պատկերի մահիկի հետին եղյուրի վնասվածք նշվել է 91 (31,7%), մարմնի վնասվածք՝ 45 (15,7%), առաջային եղյուրի և հարհոդաշապկային վնասվածք՝ 22 (7,7%) և համալիր վնասվածքներ՝ 15 (5,2%) հիվանդների մոտ :

Նշված 173 հիվանդի մոտ միջային մահիկի տարբեր տեղակայման վնասվածքները այս կամ այն տարբերակով համակցվել են ծնկահոդի գերձայնային հետազոտությամբ հայտնաբերված այլ փոփոխությունների հետ: Դրանց շարքին են դասվում՝

- հոդամակերեսների խոնդրոմայացիա՝ 41 (14,3%) դեպք,
- հոդաշապկի հաստացում՝ 58 (20,2%) դեպք,
- ազատ հեղուկի առկայություն՝ 34 (11,8%) դեպք,
- Հոֆֆի մարմնի հիպերտրոֆիա՝ 32 (11,1%) դեպք,
- հոդամակերեսների դեգեներատիվ-դիստրօֆիկ փոփոխություններ՝ 21 (7,3%) դեպք,
- ծնկոսկրի սեփական կապանի և քառագլուխ մկանի տենդիոզ՝ 21 (7,3%) դեպք,
- միջային կոլատերալ կապանի էնտեզոպաթիա՝ 15 (5,2%) դեպք:

Անհրաժեշտ է նշել, որ միջային մահիկի վնասվածքների ախտորոշման գործընթացում ծնկահոդի գերձայնային հետազոտումը՝ համեմատած ռենտգենաբանական եղանակի, անհամեմատ ավելի տեղեկատվական է:

Ասեղային և մինի արթրոսկոպիայի նվազ վնասվածքային եղանակը մեր կողմից իրագործվել է 52 հիվանդների մոտ, որը կազմում է հիվանդների ընդհանուր քանակի (287) 18,2%-ը: Բոլոր 52 հիվանդների մոտ այն հնարավորություն է տվել ախտորոշել միջային մահիկի վնասվածքները, ընդ որում 31 դեպքում (59,6%) հայտնաբերվել է հետին եղյուրի, 15 (28,8%) դեպքում՝ մարմնի, 4 (7,7%) դեպքում՝ առաջնային եղյուրի և հարհոդաշապկային և 2 (3,8%) դեպքում՝ մահիկի համալիր վնասվածքներ:

Միջուկուեզոնանսային շերտագրման եղանակը ծնկահոդի ախտահարման դեպքում օգտագործվել է 145 (50,5%) հիվանդի մոտ: Բոլոր դեպքերում հայտնաբերվել են միջային մահիկի տարբեր տեղակայման վնասվածքներ:

ՄՌԾ հետզոտությամբ առավել հաճախ հանդիպել է մահիկի հետին եղյուրի (38,6%) և մարմնի (30,3%) վնասվածքներ: Մարմնի և հետին եղյուրի միաժամանակյա վնասվածք հայտնաբերվել է 15,9% դեպքերում: Ավելի քիչ հանդիպել են մահիկի հարհոդաշապկային գոտու, ապա մոլտիզոնալ և առաջային եղյուրի վնասվածքներ:

ՄՈՇ հետազոտմամբ որոշվել է նաև միջային մահիկի վնասվածքի տեսակը: Առավել հաճախ հանդիպել են միջային մահիկի թեք լաթաձև (71 դեպք – 49%), երկայնական (29 դեպք – 20%) և ռադիալ (26 դեպք – 17,9%), իսկ ավելի քիչ երկայնական «ցնցուղի կանթի» նման, հարիոդաշապկային և համալիր վնասվածքներ:

Վերոհիշյալի հիման վրա կարելի է փաստել, որ ՄՈՇ-ը առավել զգայուն և տեղեկատվական է ծնկահոդի վնասվածքների ախտորոշման գործընթացում: Այն 100% դեպքերում թույլ է տալիս ոչ միայն հայտնաբերել մահիկի վնասվածքները, այլ նաև որոշել վնասվածքի տեղակայումը և տեսակը:

Մեր կողմից կատարվել է հետազոտման բոլոր եղանակների (ոենտգենաբանական, ԳՁՀ, մինի արթրոսկոպիա, ՄՈՇ) արդյունքների համատեղ վերլուծություն, նպատակ ունենալով պարզել միջային մահիկի վնասվածքների հետ զուգակցվող սինովիտի և գոնարթրոզի հաճախականությունը: Ըստ հետազոտումների տվյալների ծնկահոդում ազատ հեղուկի առկայություն դիտվել է 8,3–ից 19,6 %, իսկ I-II աստիճանի գոնարթրոզի նշաններ՝ 7,3–ից 19,3 %, դեպքերում: Այսպիսով, պետք է նշել, որ ծնկահոդի մահիկների վնասվածքների և դրանց ուղեկցող ախտաբանական գործընթացների ճշգրիտ ախտորոշման նպատակով պետք է իրականացվեն համալիր մոտեցումներ, որոնք պետք է ներառեն ինչպես կլինիկական, այնպես էլ գործիքային հետազոտման եղանակներ:

Հայտնի է, որ դրսային մահիկը՝ համեմատած միջային մահիկի հետ, ավելի շարժունակ է: Համեմատած հետին եղյուրների հետ՝ յուրաքանչյուր մահիկի առաջային եղյուրները նույնպես ավելի շարժուն են: Այսինքն զույգ մահիկների բոլոր հատվածների մեջ առավել սակավաշարժ գոտին դա միջային մահիկի հետին եղյուրն է: Դրանով է պայմանավորված այն փաստը, որ համեմատած դրսայինի, միջային մահիկն ավելի հաճախ է վնասվում, և վնասվածքը հիմնականում ընդգրկում է հետին եղյուրը և դրան հարող հատվածները:

Մահիկների այդպիսի դեֆորմացիան առանցքային ծանրաբեռնումների ժամանակ պայմանավորված է դրանց միկրոկառուցվածքով՝ այսիքն ֆիբրոզ միկրոթելերի ուղղվածությամբ և միահյուսմամբ: Վերջիններս կարող են ունենալ ռադիալ (շառավիդային), շրջանաձև և միահյուսվող (պերֆորանտ) ուղղվածություն: Տարբեր ուղղության և ուժի ազդեցության պայմաններում այդ միկրոթելերն այս կամ այն չափով շեղվում են

և դեֆորմացվում: Միկրոթելերի այս հատկությունով է պայմանավորված մահիկների ճնշման (կոմպրեսիայի) և ձգման հնարավորությունը:

Հայտնի է, որ մահիկը շրջանաձև ձգման նկատմամբ անհամեմատ ավելի դիմացկուն է, քան ռադիալ ձգման նկատմամբ: Մահիկները առանցքային ն ծանրաբեռնվածության ազդեցության ներքո ծածկում են ավելի մեծ շփման մակերես, միաժամանակ ենթարկվելով հողաճեղքից դեպի դուրս ֆունկցիոնալ արտափրման (էքստրուզիա): Այս երևոյթը պայմանավորված է շրջանաձև միկրոթելերով, որոնք ապահովում է մահիկի շրջանաձև ձգման ունակությունը:

Մահիկի ամբողջականության պահպանումը հիմնականում պայմանավորված է դրա կազմի մեջ գտնվող շրջանաձև միկրոթելերով, որոնք ապահովելով մահիկի երկայնական դեֆորմացիան, դիմակայում են ազդող ուժի նկատմամբ: Այս երևոյթը մեր կողմից անվանվել է մահիկի «շրջանաձև ֆունկցիա» (ՇՖ):

Մահիկների տարբեր վնասվածքների ժամանակ տեղի ունի դրանց շրջանաձև անընդհատության մասնակի կամ ամբողջական խախտում: Դրանց համապատասխանորեն անվանել ենք մահիկի մասնակի կամ լրիվ շրջանաձև դիսֆունկցիա (մասնակի կամ լրիվ ՇՖ):

ՇՖ-ն նկարագրելու, տարբեր վնասվածքներով պայմանավորված ՇՖ-ի աստիճանը գնահատելու և տարբերակելու, ինչպես նաև համարժեք, պարզեցված և օրգան-պահպանողական վիրահատական մոտեցումներ մշակելու նպատակով մեր կողմից առաջարկվել է «սեկտորային տոպոմետրիա» հասկացությունը, համաձայն որի միջային մահիկը դիտվում է որպես շրջանի տարածական միավոր: Սեկտորը շրջանագծի բաղկացուցիչ մասն է, որը կազմված է երկու շառավիղներից և աղեղից: Ոլոքային հարթակը դիտվում է որպես շրջանագիծ, որի կեսը կազմում է միջային մահիկը: Վերջինս շառավիղներով բաժանվում է երեք սեկտորների՝

- սեկտոր A (Anterior) - ընդգրկում է մահիկի առաջին եղյուրը և մարմնի մի փոքր հատվածը,
- սեկտոր M (Medial) - ընդգրկում է մահիկի միջին հատվածը՝ մարմինը,
- սեկտոր P (Posterior) - ընդգրկում է հիմնականում մահիկի հետին եղյուրը:

Նշված յուրաքանչյուր սեկտոր իր հերթին բաժանվում է սեզմենտների կամ գոտիների: Հաշվի առնելով միջային մահիկի կենսամեխանիկական առանձնահատկությունները և դրա տարբեր սեկտորների ֆունկցիոնալ փոփոխությունները ծնկահողի ստատիկ և դինամիկ վիճակներում, մեր կողմից առաջարկվել է հետին և միջին սեկտորները բաժանել երեքական ակտիվ, իսկ առջևինը՝ երկու ակտիվ գոտիների (ըստ Cooper-ի գոտիների մեր կողմից ծևափոխված տարբերակի):

Հաշվի առնելով միջային մահիկի վերը նկարագրված սեկտորային տոպոմետրիան մեր կողմից մշակվել է դրա շրջանձև դիսֆունկցիայի դասակարգումը տարբեր վնասվածքների պայմաններում:

### **ՇԴՖ-ի դասակարգումը՝**

#### **1. Ըստ արտահայտվածության՝**

- . մասնակի
- . ամբողջական

#### **2. Ըստ բիոկինեմատիկայի՝**

- . մեխանիկական հյուսվածքային
- . ֆունկցիոնալ հյուսվածքային
- . ֆունկցիոնալ ոչ հյուսվածքային - ZONE-0 միայն

#### **2. Ըստ սեկտորների կարևորության՝**

- . P-M-A (posterior-problematic, middle-moderate, anterior-asymptomatic)

#### **3. Ըստ սեզմենտների կարևորության՝**

- . սեզմենտ 3 -100% , սեզմենտ 2- 25-50% , սեզմենտ 1-3ԴՖ առկա չէ

#### **4. ZONE-0՝**

- . ՇԴՖ - երկրորդային ֆունկցիոնալ

#### **5. Ըստ վերականգնելիության՝**

- . վերականգնելի
- . պոտենցիալ վերականգնելի
- . անվերականգնելի կամ անհեռանկարային:

Այս դասակարգումը թույլ է տալիս կոնկրետ հիվանդի մոտ որոշել ՇԴՖ-ի ծանրության աստիճանը, դրանով իսկ ընտրել վիրահատական բուժման համարժեք տարրերակ:

Համադրելով ISAKOS (Internacional Society of Arthroscopy, Knee Surgery and Orthopaedic Sports, Medicine) միջային մահիկի վնասվածքների տեսակների դասակարգումը և մեր կողմից առաջարկված տոպոմետրիկ տվյալները՝ ստեղծել ենք հետևյալ աշխատանքային դասակարգումը:

### **Միջային մահիկի վնասվածքներ**

#### **1. Ռադիալ (շառավղային)**

Ա սեկտոր – (A1, A1-2(3))

Մ սեկտոր – (M1, M1-2, M1-2-3)

Р սեկտոր – (P1, P1-2, P1-2-3)

#### **2. Թեր (թեր-լաթաձև)**

Ա սեկտոր – (A1, A1-2, A2- M2, A1- M2-3)

Մ սեկտոր – (M1, M1-2, M1-2-3, M1- P2, M1- P2-3, M1- A2)

Р սեկտոր – (P1, P1-2, P1- M 2, P1- M2-3)

#### **3. Շրջանաձև**

Ա սեկտոր – (A2, A2- M2, A2- M2- P2)

Մ սեկտոր – (M2, M2- P2, M3 - P3)

Р սեկտոր – (P2, P3)

#### **4. Հորիզոնական**

Ա սեկտոր – գործնականում չի հանդիպում

Մ սեկտոր – (M2, M2-3, M2 – P2, M2-3 – P2-3)

Р սեկտոր – (P2, P2-3)

#### **5. Հարհողաշապկային**

Ա սեկտոր – (A0, A0- M0, A0- M0- P0)

Մ սեկտոր – (M0, M0- P0)

Р սեկտոր – (P0)

#### **6. Բարդ համալիր – բազմասեկտորային և բազմատեսակ:**

Նշված դասակարգման առավելությունը կայանում է նրանում, որ հաշվի է առվում նաև մահիկի շրջանաձև ֆունկցիայի խանգարման աստիճանը: Կախված վնասվածքի տեղակայումից, չափից և տեսակից միջային մահիկի այդ ֆունկցիան տուժում է տարբեր տարբերակներով:

Այսպես, մահիկի այն վնասվածքների ժամանակ, որոնք ընդգրկում են դրա բոլոր (ներառյալ 3-րդ) գոտիները, առաջանում է շրջանաձև բացարձակ դիսֆունկցիա:

Այսպիսի վնասվածքների դեպքում անհրաժեշտ է վերականգնել մահիկի ամբողջականությունը, անկախ տվյալ հատվածի անոթավորման առանձնահատկություններից:

Միջային մահիկի այլ վնասվածքների դեպքում, երբ պահպանված է 3-րդ գոտու ամբողջականությունը, շրջանաձև ծգման ֆունկցիան տուժում է ավելի քիչ, այսինքն հնարավոր է կատարել մահիկի մոդելավորող ռեզեկցիաներ:

Մեր կողմից մշակվել է արթրոսկոպիկ բուժման տարբերակիչ տակտիկա, ընդունում դրա հիմքը կազմել են մահիկի տոպոմետրիկ և ֆունկցիոնալ վերոհիշյալ առանձնահատկությունները (ՄՇՖ, ՇԴՖ) և դրա վնասվածքների առաջարկված աշխատանքային դասակարգումը:

Ըստ այդ տակտիկայի՝

- ✓ մահիկի մոդելավորող ռեզեկցիան ցուցված է շրջանաձև, հորիզոնական, ռադիալ անավարտ և թեք (թեք-լաթաձև) անավարտ վնասվածքների ժամանակ,
- ✓ մահիկի վերականգնումը կարերի միջոցով՝ անկախ տվյալ գոտու անոթավորմից, ցուցված է ռադիալ ավարտված և թեք (թեք-լաթաձև) ավարտված վնասվածքների ժամանակ,
- ✓ մահիկ-հարհողաշապկային վերականգնումը կարերի միջոցով ցուցված է հարհողաշապկային վնասվածքների ժամանակ,
- ✓ մահիկի պարցիալ ռեզեկցիան ցուցված է միայն բազմասեկտոր- բազմատեսակ վնասվածքների ժամանակ:

Արթրոսկապիկ վիրահատությունների այս ցուցումները և տարբերակիչ տակտիկան կիրառվել է հիվանդների հիմնական 1 խմբում (202 հիվանդ – 70,4%), ընդ որում մահիկի մոդելավորող ռեզեկցիան կատարվել է 120 (59,4%), մահիկի կարումը՝ 38

(18,8%), մահիկ-հարհողաշապկային վերականգնումը կարերի միջոցով՝ 27 (13,4%) և մահիկի պարզիալ ռեզեկցիան՝ 17 (8,4%) հիվանդների շրջանում:

Պետք է նշել, որ մահիկի մոդելավորող պահպանողական ռեզեկցիան, որը կատարվել էր 50%-ից ավելի դեպքերում, հանդիսանում է մեր կողմից ձևափոխված մահիկահատման տարբերակ:

**Մահիկի մոդելավորող ռեզեկցիա:** Մահիկահատման մեր կողմից ձևափոխված այս տարբերակն իրականացվում է մահիկահատիչ կրծանների օգնությամբ, որոնք կարող են լինել ուղիղ կամ էլ աջ կամ ձախ թեքված: Վնասված ամբողջ հատվածը հեռացվում է նուրբ աստիճանական շարժումների միջոցով՝ սկսած հենց բուն վնասվածքից մինչև անվնաս գոտի: Այնուհետև կատարվում է մահիկի աղեղնաձև մոդելավորում՝ սկզբում վնասված գոտուց դեպի հետ, ապա դեպի առաջ ուղղություններով: Ձևավորված գոտու վերջնական հարթեցումն իրականացվում է կորյացիոն սարքի օգնությամբ:

**Մահիկի վերականգնում Ռ-ձև կարերով (outside-in եղանակով):** Այս եղանակով միջային մահիկի վերականգնումը կատարվում է 2 էպիդուրալ ասեղների միջոցով: Առաջին ասեղը, որի մեջ գտնվում է կարանյութը, արթրոսկոպիկ հսկողության ներքո ներմաշկային անց է կացվում դեպի հոդաճեղք՝ մահիկի հաստության միջով, անցնելով մահիկի վնասված գոտուց դեպի հետ ընկած հատվածով:

Երկրորդ ասեղն անցնում է նոյն եղանակով, բայց արդեն վնասվածքից դեպի առաջ ընկած հատվածով: Այդ ասեղի միջով դեպի հոդախառոչ է մտցվում մանդրենը, որի օղածն ծայրով բռնվում է կարաթելը և քաշվում դեպի դուր:

**Մահիկ-հարհողաշապկային վերականգնում:** Վերականգնման այս եղանակը նույնպես կատարվում է outside-in տեխնիկայով, բայց այս դեպքում դրվում են ուղղահայց կարեր: Կախված վնասվածքի չափերից կարերի քանակը կարող է տատանվել: Սովորաբար դրվում են 1-ից 3 իրար հաջորդող կարեր:

Հիվանդների II ստուգիչ խումբը (85 դեպք - 29,6%) միջային մահիկի վնասվածքի կապակցությամբ բուժվել էր հետազոտության սկզբնական փուլերում, երբ դեռ չէին մշակված վերոհիշյալ դասակարգումը և բուժման տակտիկան: Այս իսկ պատճառով

տվյալ խմբում օգտագործվել են արթրոսկոպիկ մահիկահատման համընդհանուր ընդունված տարրերակներ:

Այսպես, միջային մահիկի ոչ խնայող (ոչ օրգանպահպանողական) ռեզեկցիան կատարվել է 43(50,6%), սուբտոտալ մահիկահատումը՝ 38 (44,7%) և տոտալ մահիկահատումը՝ 4 (4,7%) հիվանդների մոտ:

Բոլոր 287 հիվանդները հետվիրահատական շրջանում ստացել են ցավազրկողներ, ոչ ստերոիդ հակարորդոքիչներ, հակամակարոիչ միջոցներ և հակարիոտիկներ ընդունված սխեմաներով և չափաբաժիններով: Կատարվել են վիրակապություններ, իսկ խիստ հազվագյուտ դեպքերում՝ հոդի պունկցիա: Վիրահատության երկրորդ օրվանից հիվանդները քայլել են հենակների օգնությամբ՝ աստիճանաբար ծանրաբեռնելով վիրահատված վերջույթը: Արտաքին անշարժացումը սովորաբար հանվել է 4-5-րդ օրվանից: Առաջին երկու շաբաթվա ընթացքում հիվանդները կատարել են քառագլուխ մկանի իզոմետրիկ վարժություններ:

Հիվանդների հիմնական խմբում (202 հիվանդ)<sup>՝</sup> վիրահատությունից 2 շաբաթ հետո, կատարվել են նաև հիալուոռնաթթվի տարբեր ածանցյալների ներհոդային ներարկումներ (1-3 սրսկում): Այս հիվանդները, սկսած 10-րդ օրվանից, ստացել են նաև խոնդրոպրոտեկտորներ (գյուկոզամին և խոնդրոիտինի սուլֆատ)հաբերի կամ դեղապատիճների ձևով՝ 5-6 ամիս տևողությամբ:

Արթրոկոսպիկ բուժման հեռակա արդյունքներն ուսումնասիրվել են 267 (93%) հիվանդի մոտ՝ 1-ից 4 տարի (միջինը 2-2,5 տ) ժամանակահատվածում: Մնացած 20 հիվանդները տարբեր պատճառներով դուրս են մնացել մեր տեսադաշտից:

Նշված վերլուծությունն իրականացվել է վերոհիշյալ երկու խմբերով: I հիմնական խմբում կրկնակի հետազոտվել են 183, իսկ II ստուգիչ խմբում՝ 84 հիվանդ:

Ըստ 4 բալանց սանդղակի, I խմբից 81 (44,3%) հիվանդի մոտ վիրահատական բուժման արդյունքները գնահատվել են որպես «գերազանց», 63 (34,4%) հիվանդների շրջանում որպես «լավ», 39 (21,3%) հիվանդների մոտ որպես «բավարար»:

II ստուգիչ խմբում կրկնակի հետազոտման են ենթարկվել 84 հիվանդ: 23 (27,4%) դեպքում բուժման հեռակա արդյունքները գնահատվել են «գերազանց», 30 (35,7%)

դեպքում որպես «լավ»: 28 (33,3%) հիվանդների մոտ որպես «բավարար», 3 (3,6%) դեպքում որպես «վատ»:

Մեր կողմից կատարվել է հիվանդների I և II խմբերի բուժման արդյունքների համեմատական վերլուծություն նպատակ ունենալով պարզաբանել արթրոկոպիկ բուժման վերոհիշյալ երկու տակտիկաների արդյունավետությունը:

Հիվանդների I խմբում բուժման հեռակա արդյունքները ուսումնասիրելիս I – II աստիճանի գոնարթող դիտվել է 39 (21,3%) դեպքում (հիվանդների ընդհանուր քանակը – 183 հոգի): Սակայն նրանցից 30-ի մոտ գոնարթողը ախտորոշվել էր մինչև կատարված վիրահատությունը: Ընդ որում 26 դեպքում առկա էր I և 4 դեպքում II<sup>o</sup> արթրոզ: Վիրահատական բուժումից հետո այս հիվանդների մոտ հոդում դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխությունների առաջխաղացում չի արձանագրվել: Մնացած 9 (4,9%) հիվանդի մոտ հետվիրահատական կրկնակի հետազոտման արդյունքում դիտվել է I<sup>o</sup> գոնարթող, որի պատճառ էին հանդիսացել մահիկի բարդ բազմասեկտոր համալիր վնասվածքները և հարկադրաբար կատարված մահիկի պարցիալ ռեզեկցիան:

Հիվանդների II ստուգիչ խմբում (84 հիվանդ) կրկնակի հետազոտման արդյունքում ծնկահոդի դեֆորմացնող արթրոզ արձանագրվել է 31 (36,9%) դեպքում: Դրանցից 13 դեպքում այն առկա էր մինչև վիրահատական բուժումը, ընդ որում 8 դեպքում տեղի ուներ I և 5 դեպքում<sup>o</sup> II աստիճանի գոնարթող: Վիրահատությունից հետո միջինը 2-3 տարվա ընթացքում, այս հիվանդների շրջանում դիտվել է գոնարթողի երևոյթների առաջխաղացում (I<sup>o</sup> գոնարթող - 3 դեպք, II<sup>o</sup> - 9 դեպք, III<sup>o</sup> - 1 դեպք): Մնացած 18 (21,4%) հիվանդների շրջանում գոնարթողը զարգացել էր վիրահատական բուժումից հետո նույն ժամկետներում, ընդ որում I աստիճանի ախտահարում դիտվել էր 2, II աստիճանի՝ 14 և III աստիճանի՝ 2 դեպքերում:

Վերոհիշյալից երևում է, որ միջային մահիկի վնասվածքների մեր կողմից առաջարկված արթրոսկոպիկ բուժման տարբերակիչ տակտիկան՝ համեմատած համընդհանուրի, հավաստի թույլ է տվել մոտ 4 անգամ նվազեցնել հետվիրահատական գոնարթողի զարգացման հավանականությունը (I խումբ - 4,9 % և II խումբ - 21,4%) ( $p<0,001$ ,  $\chi^2=11,7$ ): Ընդ որում, եթե աճառի դեգեներատիվ-դիստրոֆիկ փոփոխություն-

ներն այնուամենայնիվ առաջացել են, ապա դրանք՝ համեմատած II ստուգիչ խմբի հետ, եղել են կյանիկոռենտգենմաքանորեն ավելի թույլ արտահայտված:

Արթրոսկոպիկ բուժման գերազանց արդյունքները հիվանդների I խմբում՝ համեմատած II խմբի հետ, հավաստի ավելացել են մոտ 1,5 անգամ (44,3% և 27,4%) ( $p<0,01$ ,  $\chi^2=6,9$ ): Հավաքայությամբ, իսկ բավարար արդյունքները I խմբում նվազել են 12%-ով (21,3% և 33,3%) ( $p<0,05$ ,  $\chi^2=4,43$ ): II խմբում 3,6% դեպքերում դիտվել են նաև բուժման վատ արդյունքներ, այնինչ I խմբի հիվանդների շրջանում դրանք ընդհանրապես բացակայել են:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ հիվանդների I խմբում՝ համեմատած II խմբի հետ, առկա է արթրոսկոպիկ բուժման գերազանց արդյունքների ավելացում ի հաշիվ բավարար արդյունքների նվազեցման և վատ արդյունքների բացառման: Այսինքն առկա է բուժման վերջնական ելքերի որակական բարելավում:

